

**Programmatic Cooperation Framework for
Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus**



ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՍՐԱՊԵՆԴՈՒՄ և
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ
ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԱՊՐԻԼ, 2015Թ.

**ՊՐՈՖԵՍՈՐ ՅԱՆ ՍՄԻԹ, ՇՈՏԼԱՆԴԻԱՅԻ ԱՐԽՄՅԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՐՈՆ ԹՈՍ ՀԱՄԻԼԹՈՆ, ՇՈՏԼԱՆԴԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՍՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ, ՆԵՐԱՌՅԱԼ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԱԽՈՐԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ 16

2 ՀԱՐՑԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲՈՒՀ)-ԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԱՍՆԱՎՈՐ ԲՈՒՀԵՐԻ ԹՎԻ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ..... 26

3 ԲԿ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽԵՆԻԴՐՆԵՐԸ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 30

4 ՈԱԱԿ-Ի ԴԻՐՔԸ (ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ)..... 43

5 ԲՈՒՀ-ԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ..... 55

6 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ և ԲՈՒՀ-ԵՐԸ 59

7 ՄՈՒԿԱԴՐԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 62

8 ՈՒՍՈՒՑՄԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ և ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԻՋԻ (և ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ)..... 69

9 ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ՝ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ..... 76

10 ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ 79

11 ԷԹԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԲԿ-ՈՒՄ և ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 83

12 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԲՈՒՀԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՅԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 85

13 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ՀԱԶՈՐԴ ՔԱՅԼԵՐԸ..... 99

ՀՂՈՒՄՆԵՐ 101

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս ամփոփ նկարագրությունում, ըստ էության, կրկնվում են զեկույցի հիմնական տասներեք բաժիններում առկա առաջարկությունները:

Զեկույցը սկսվում է 1-ին բաժնով, որտեղ ներառված են «Ներածությունը, այդ թվում՝ ընդհանուր մոտեցումները, մեթոդաբանությունը և նախորդ աշխատանքի օգտագործումը»:

Զեկույցը, ապա անդրադառնում է մի շարք թեմաների, և դրանք հիմք են հանդիսանում 2-ից 12 բաժինների համար՝ ըստ հետևյալի՝

Բաժին 2 - Հարցեր՝ կապված բարձրագույն ուսումնական հաստատությունների (բուհ) ընդհանուր թվի, այդ թվում՝ մասնավոր բուհերի թվի, և մասնավոր բուհերի մասին ընդհանուր դիրքորոշման հետ

Բաժին 3 - ԲԿ համակարգի վերաբերյալ իրավական դաշտը և կառավարման հիմնախնդիրները՝ ներառյալ ազգային կառավարության և կրթական համակարգի միջև ընդհանուր փոխհարաբերությունները

Բաժին 4 - ՈԱԱԿ-ի (Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն) դիրքը

Բաժին 5 - բուհերի ֆինանսավորումը

Բաժին 6 - Հետազոտությունները և բուհերը

Բաժին 7 - ՄՌ / կադրային մոտեցումները և խնդիրները բուհական համակարգում

Բաժին 8 - Կրթական և ուսումնական փոխհարաբերությունները ուսանողների և աշխատակազմի միջև (հարակից այլ խնդիրներ)

Բաժին 9 - Խնդիրներ՝ կապված բուհական համակարգ ուսանողների ընդունելության հետ

Բաժին 10 - Ուսանողների մասնակցությունը ԲԿ կառավարմանը

Բաժին 11 - Էթիկայի նորմերը ԲԿ-ում և իրավական դաշտը

Բաժին 12 - Կառավարության հակակոռուպցիոն ռազմավարությունները և բուհերը

Զեկույցը ավարտվում է 13-րդ բաժնով՝ «Եզրակացություններ և ծրագրի հետագա քայլեր» :

Այժմ ներկայացվում են բոլոր տասներեք բաժինների առաջարկությունները (առաջարկությունները ևս, իհարկե, զետեղված են տեքստի համապատասխան բաժիններում):

1-ին բաժնի առաջարկություններ, որտեղ ներառված են «Ներածությունը, այդ թվում, ընդհանուր մոտեցումները, մեթոդաբանությունը և նախորդ աշխատանքի օգտագործումը»

Առաջարկություն 1(ա).

Եվրոպայի խորհրդի, Հայաստանի Հանրապետության կառավարության և բարձրագույն կրթության (ԲԿ) համակարգի համայնքի միջև երկխոսությունը պետք է հիմնված լինի բոլոր դերակատարների՝ դրական էթիկայի սկզբունքների և էթիկական վարքագծի պարտավորվածության միջոցով կրթական համակարգում բարեվարքության հասնելու ընդգրկուն մոտեցման, այլ ոչ թե միայն նպատակաուղղվի ավելի նեղ «դեֆիցիտային» մոտեցմանը, որը հիմնված է վերնից ներքև, մեխանիկական կարգավորող միջոցների վրա:

Բարեվարքության վերաբերյալ այս երկխոսությունը պետք է վեր բարձրանա պարզապես «հակակոռուպցիոն» հարցերի շրջանակից, և քննարկի կրթական համակարգում հիմնարար և բարձր որակի հասնելու այլ հարակից հարցեր:

Սակայն, կարճաժամկետ, ինչպես նաև միջնաժամկետ կտրվածքում, նպատակաուղղված քննարկում կպահանջվի ՀՀ կառավարության և այլ շահագրգիռ կողմերի հետ ավելի մեխանիկական և կարգավորող միջոցների շուրջ, որպեսզի սահմանվի ԲԿ բարեվարքության երկարաժամկետ ձեռքբերումների շրջանակ՝ հիմնված էթիկայի սկզբունքների և վարքագծերի վրա:

Առաջարկություն 1(բ).

ՀՀ կառավարությունը պետք է ապահովի, որ լիարժեք կարևորություն տրվի միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող բազմաթիվ միջամտությունների հետ իր փոխազդեցության հետևողականությանը իր կրթական համակարգում, և հատկապես տվյալ դեպքում՝ ԲԿ համակարգում: Մասնավորապես, այս քննարկումը պետք է հասնի լայն և առավել կայուն ազդեցության՝ խուսափելով ծրագրերում առկա ցանկացած անհարկի կրկնությունից և ապահովելով զգալի «հավելյալ արժեք» նոր ծրագրերում:

Առաջարկություն 1(գ).

Միջազգային կազմակերպությունները, ինչպիսին է Եվրոպայի խորհուրդը, պետք է նմանապես առավելագույն ուշադրություն դարձնեն ապահովելու համար, որ նոր ծրագրերը կառուցվեն նախորդ ծրագրի գործունեության և արդյունքների հիման վրա՝ խուսափելով նախորդ ծրագրերի հետ անհարկի կրկնությունից և զգալի «հավելյալ արժեք» ապահովեն նախորդ ծրագրերից: Մա հատկապես կարևոր է, երբ նման ծրագրերից բոլորն էլ ֆինանսավորում ստանում են միևնույն աղբյուրից, օրինակ՝ ԵՄ-ից:

Առաջարկություններ 2-րդ բաժնից - «Հարցեր՝ կապված բարձրագույն ուսումնական հաստատությունների (բուհ) ընդհանուր թվի, այդ թվում՝ մասնավոր բուհերի թվի, և մասնավոր բուհերի մասին ընդհանուր դիրքորոշման հետ»

Առաջարկություն 2(ա).

ՀՀ կառավարությունը պետք է ստանձնի պետական համալսարանների թիվը ԲԿ համակարգում հիմնարար կերպով վերանայելու պարտավորություն: Այդպիսի վերանայում կատարելիս՝ լիարժեք ուշադրություն պետք է դարձվի որակը բարձրացնելու

և ֆինանսավորման պակասի համար գործադրվող ճնշումները թուլացնելու ներուժին, որին կարելի է հանգել միավորման կամ փակման միջոցով պետական համալսարանների թվի կրճատման արդյունքում:

Առաջարկություն 2(բ).

ՀՀ կառավարությունը պետք է նաև սկզբունքային վերանայումներ ձեռնարկի մասնավոր բուհերի հատվածում: Նման վերանայումը պետք է ուսումնասիրի, թե արդյոք մասնավոր բուհերի ներկայիս թիվը ընդունելի է, արդյոք կայուն լիցենզավորման և որակի ապահովման մոտեցումներ են կիրառվում, որոնք համապատասխանում են ժամանակակից եվրոպական չափորոշիչներին (այդ թվում՝ հարկ եղած դեպքում՝ համալսարանի կարգավիճակ ստանալու մասին չափանիշներին):

Առաջարկություններ 3-րդ բաժնից - «Բուհական համակարգի վերաբերյալ իրավական դաշտը և կառավարման հիմնախնդիրները՝ ներառյալ ազգային կառավարության և ԲԿ համակարգի միջև ընդհանուր փոխհարաբերությունները»

Առաջարկություն 3(ա).

Հայաստանում պետք է մշակել բարձրագույն կրթությանը վերաբերվող նոր առաջնային օրենք:

Այդ օրենքով պետք է ամրապնդվի բուհերի պատշաճ ինքնավարությունը՝ ներառելով կառավարության տարանջատումը բուհերի կառավարումից՝ հասկապես բուհերի կառավարման մարմինների անդամակցության մասով: Օրենքը պետք է անդրադառնա նաև բուհերին ավելի մեծ տնտեսական և ֆինանսական գործունեության ազատություն տալու իրավական խնդիրներին, օրինակ՝ կապված Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին (ՊՈԱԿ) գործող օրենքի և հիմնադրամի կարգավիճակ ստանալու հնարավոր քայլերի հետ (տես Առաջարկություն 5 (բ) ստորև):

Այդ օրենքը պետք է նաև ներառի հստակ հղում՝ կապված Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) երաշխավորված ինքնավարության հետ՝ դրանով իսկ երաշխավորելով հավատարմագրման գործընթացում բուհերի ինքնավարությունը (տե՛ս Առաջարկություն 4 (ա)՝ ստորև): Օրենքը պետք է նաև հավանություն տա ՈԱԱԿ-ի կողմից մշակված չափորոշիչներին՝ որպես Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում «ազգային չափորոշիչներին»: Օրենքը պետք է նաև արտահայտի հստակ և մանրամասն դիրքորոշում՝ կապված բուհերի լիցենզավորման, և հավատարմագրման ու լիցենզավորման փոխհարաբերության հարցերի հետ: Պետք է մտածել, թե արդյոք որևէ առանձին լիցենզավորման գործընթաց կարող է լինել նույնքան թափանցիկ, որքան լիցենզիայի տրամադրումն է, երբ անձը պարզապես անցնում է ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը:

Սույն օրենքը պետք է նաև ներառի հստակ չափանիշներ Հայաստանում գործող տարբեր տեսակի բուհերի համար: Պետք է մտածել Համալսարան եզրույթից բացի այլ եզրույթների տեղին լինելու, և, որպես համալսարանի կարգավիճակի չափանիշ՝ «երրորդ փուլի»

դոկտորական որակավորումներ տրամադրելու հետագա կարգավիճակի մասին: Պետք է մտածել նաև այն մասին, թե արդյոք ապագայում ՈԱԱԿ-ի փաստաթղթերը, և ոչ թե ներպետական իրավունքը պետք է լինի նման չափանիշների ձևակերպումների հիմնական աղբյուրը:

Այդ օրենքում պետք է նաև հաշվի առնվի լրացումներ կատարելու անհրաժեշտությունը, որոնք կարող են բխել ներքոհիշյալ առաջարկություններից, հատկապես՝ Առաջարկություն 7 (բ) - բուհերի կադրային հարցերի շուրջ, Առաջարկություններ 8 (ա) և 11 - բուհական համակարգում էթիկայի հիմնահարցերի շուրջ, Առաջարկություններ 10 (ա) և (բ) - ուսանողների դիրքի շուրջ:

Առաջարկություն 3(բ).

«Բարձրագույն կրթության մասին» նոր օրենք մշակելիս՝ բուհերի պատշաճ ինքնավարության սկզբունքը պետք է հանգեցնի այն բանին, որ առաջնային օրենքում, ինչպես նաև ենթաօրենսդրության մեջ (կառավարական և նախարարական որոշումներ և հրամաններ և այլն) նվազագույնս ներառվեն կոնկրետ հարցեր, որոնք ավելի ճիշտ է ներառել բուհերի մասով կարգավորող իրավական դաշտում, կամ այլ կազմակերպությունների փաստաթղթերում, ինչպիսին է ՈԱԱԿ-ը:

Առաջարկություն 3(գ).

ՀՀ կառավարությունը պետք է հաշվի առնի այս առաջարկությունները «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքի ընդունման ժամանակ, ինչպես նաև պետք է հաշվի առնի «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության զարգացում եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով (ԵԲԿՏ)» ԵՄ թվինինգ ծրագրի շրջանակում մշակվող նոր օրենքի առնչությամբ կատարված առաջարկությունները, որոնք նախատեսված են ամրապնդելու ԵԲԿՏ-ն:

Առաջարկություն 3(դ).

ՀՀ կառավարությունը պետք է հարգի բուհերի պատշաճ ինքնավարությունը ոչ միայն նոր օրենսդրության ընդունման ժամանակ, այլև իր հետագա քաղաքական գործունեության ընթացքում: ՀՀ կառավարությանը պետք է խրախուսել, որպեսզի վերջինս դիտարկի սա ոչ որպես բուհական համակարգին վերագրվող կարևորության նվազեցում, այլ որպես պատասխան այս հարցի առնչությամբ եվրոպական մոտեցումներին: ՀՀ կառավարությանը պետք է խրախուսել այլ եղանակներով ցույց տալ ԲԿ վերագրվող կարևորությունը, օրինակ, ֆինանսավորման տրամադրման միջոցով (տես Առաջարկություն 5 (բ) ստորև):

Առաջարկություններ 4-րդ բաժնից «ՈԱԱԿ-ի (Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն) դիրքը»

Առաջարկություն 4(ա).

ՈԱԱԿ-ի առկա դրական ձեռքբերումների վրա հիմնվելը պետք է առաջնային լինի ՀՀ կառավարության և ԲԿ համայնքի համար՝ Հայաստանի բուհական համակարգի ներսում բարելավությունը ամրապնդելիս:

Առաջարկություն 4(բ).

Մասնավորապես, ՀՀ կառավարությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները, այդ թվում՝ բուհական համակարգի մասով նոր օրենքի միջոցով, թափանցիկ և հստակ եղանակներով սահմանելու համար, որ ՈԱԱԿ-ը ունենա այն անկախությունը, որն անհրաժեշտ է ՈԱԵԱ-ի (Բարձրագույն կրթություն ոլորտում որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի) լիիրավ անդամակցության չափանիշները բավարարելու համար:

Ինչպես արդեն ենթադրվում է թիվ 3 (ա) առաջարկությունից, սա պետք է նախատեսի, որ ՈԱԱԿ-ին վերապահվի հավատարմագրման հետ կապված վերջնական որոշում ընդունելու իրավունքը՝ ՈԱԱԿ-ի կողմից պարզապես կառավարությանը առաջարկություններ անելու փոխարեն: Այն պետք է նաև նախատեսի, որ ԲԿ ազգային չափորոշիչների ընդունման արտոնությունը վերապահվի ՈԱԱԿ-ին, և որ այդ չափորոշիչները արդյունավետորեն դառնան «պետական» չափորոշիչներ: Պետք է ապահովվի նաև այն, որ ՈԱԱԿ-ի կառավարման խորհուրդը անկախ լինի կառավարությունից՝ անդամակցության և անդամների հավաքագրելու առումով:

Առաջարկություն 4(գ).

ՀՀ կառավարությունը և ԲԿ համակարգը պետք է լիակատար աջակցություն ցուցաբերեն ՈԱԱԿ-ին՝ երկարաժամկետ ֆինանսական կայունություն ապահովող ֆինանսական մոդել մշակելիս, որը համահունչ կլինի ՈԱԱԿ-ի լիակատար անկախությանը: Սա պետք է նախատեսի, որ բուհերը վճարեն շարունակական զգալի անդամավճարներ, կոնկրետ հավատարմագրման հետ կապված ծախսերից դուրս, որ բուհերը աշխատակազմի զարգացումը լիազորեն ՈԱԱԿ-ին որպես աշխատակազմի զարգացման ծրագրերի ինստիտուցիոնալ պարտադիր մաս, և որ կառավարությունը կամ ուղղակիորեն ներպետական բուհերի անձնակազմի զարգացման ծրագրերը լիազորի ՈԱԱԿ-ին, կամ անուղղակիորեն ֆինանսական միջոցներ տրամադրի բուհերին լիազորված ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող աշխատակազմի զարգացման ծրագրերն իրենց հաստատություններում խթանելու և ՈԱԱԿ-ին ինստիտուցիոնալ բաժանորդավճարներ վճարելու համար:

Առաջարկություն 4(դ).

Բոլոր Հայաստանի բուհերը պետք է ստանձնեն ներբուհական որակի ապահովման և զարգացման համակարգերի մշակման պարտավորությունը, որպեսզի առավել դրական փոխազդեցություն ապահովեն ՈԱԱԿ-ի արտաքին որակի համակարգերի հետ:

Առաջարկություն 4(ե).

Որպես Հայաստանի բուհական համակարգում բարեվարքության ամրապնդման կարևոր մաս, ՈԱԱԿ-ը պետք է առավելագույնս օգտագործի հավատարմագրման ընթացիկ չափանիշները, որոնք առնչվում են իր չափորոշիչների հետ համապատասխանությանը հավատարագրման ընթացքում հաստատությունների և ծրագրերի գնահատում իրականացնելիս: ՈԱԱԿ-ը պետք է նաև նախատեսի իր չափորոշիչների շրջանակներում բարեվարքության պարամետրերի հետագա զարգացումը: Բարեվարքության խնդիրների լուծումը ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացում պետք է դառնա հզոր գործիք Հայաստանի բուհական համակարգում բարեվարքությունը ամրապնդելու համար:

Առաջարկություններ 5-րդ բաժնից՝ «բուհերի ֆինանսավորում»

Առաջարկություն 5(ա).

Պետք է ապահովվի առավելագույն հրապարակային թափանցիկություն ՀՀ կառավարության և պետական բուհերի միջև ֆինանսավորման փոխհարաբերությունների ընթացքում, ինչպես նաև բուհերի կողմից վերոնշյալ ֆինանսական միջոցների օգտագործման ժամանակ: Սա պետք է ներառի կառավարության մանրամասն, հստակ և լիարժեք պարզաբանումը այն մասին, թե իր կողմից վերջերս ընդունված «Բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարություն» փաստաթղթի քաղաքական մտածելակերպը ինչպես է իրականացվում գործնականում:

Առաջարկություն 5(բ).

ՀՀ կառավարությունը պետք է ընդունի, պետական բուհերի թերֆինանսավորման խնդիրները լուծելու առաջնային անհրաժեշտությունը: Այս ոլորտում ռազմավարությունները սահմանելիս՝ լիարժեք նշանակություն պետք է տրվի պետական բուհերի պատշաճ ազատականացմանը, որպեսզի վերջիններս կարողանան ավելի լիարժեք զբաղվել առևտրային գործունեությամբ, վերցնել դրամական փոխառություններ և այլն, ինչպես օրինակ, ձեռնարկեն հիմնադրամի կարգավիճակ ստանալու հնարավոր քայլեր: Ինչպես քննարկվել է վերոնշյալ 2 (ա) առաջարկությունում, հարկավոր է նաև առավելագույն հաշվի առնել բուհերի միաձուլման կամ փակման միջոցով պետական բուհերի թվի կրճատման արդյունքում ստացվող ֆինանսական հնարավոր օգուտները:

Առաջարկություն 5(գ).

ՀՀ կառավարությունը չպետք է պատշաճ և կայուն համարի ուսանողական վճարներից պետական բուհերի ներկայիս կախվածության մակարդակը: ՀՀ կառավարությունը պետք է անհապաղ առաջնահերթություն տա ֆինանսավորման մոդելների մշակմանը, որոնք էականորեն նվազեցնում են ուսանողական վճարներից կախվածության ներկա մակարդակը: Սա պետք է իհարկե ներառի այնպիսի մոդելի հավանականությունը, որը լիովին վերացնում է ուսանողական վարձերի վճարումը բուհական համակարգ ընդունվելիս, օրինակ թեկուզ էթե դա ներառում է ուսանողական վարկերի ներդրումը

համակարգում՝ ընդհանուր հարկման միջոցով ԲԿ պարզապես ֆինանսավորելու փոխարեն :

Առաջարկություն 6-րդ բաժնից «Հետազոտություն և բուհեր»

Առաջարկություն 6.

ՀՀ կառավարությունը պետք է կարողանա լիարժեքորեն կազմակերպել ակադեմիական գիտահետազոտական գործունեության ինտեգրումը համալսարանական ոլորտում: Կառավարության ֆինանսավորման մոդելները պետք է արտացոլեն դա, այդ թվում՝ պետք է հեռացվեն ցանկացած իրավական խոչընդոտներ, որոնք ներկայումս կապված են ՊՈԱԿ-ների մասին օրենքի հետ և «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի հետ: ՀՀ հետազոտական համայնքը պետք է ընդունի, որ հետազոտական գործունեության ծավալման նման փոփոխությունը կարող է հանգեցնել գիտական ինստիտուտների անհետացման, որոնք ավանդաբար պահպանվել են:

Առաջարկություններ 7-րդ բաժնից «ՄՌ / կադրային մոտեցումները և խնդիրները բուհական համակարգում»

Առաջարկություն 7(ա).

Բավականին աշխատանքներ են կատարվել Հայաստանի բուհերի ՄՌ միջավայրում կադրային խնդիրների բացահայտման, ինչպես նաև այս հարցերի շուրջ իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Արդեն բացահայտված հիմնական հարցերը ներառում են՝ նշանակումներ կատարելիս թափանցիկության և օբյեկտիվ, բաց մրցակցության պակասը, այդ թվում՝ բարձր պաշտոններում ընտրությունների ժամանակ, աշխատավարձերի ոչ պատշաճ մակարդակը, աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացման հնարավորությունների բացակայությունը, աշխատակազմի արդյունավետ գնահատման անհամապատասխան համակարգերը, հնգամյա աշխատանքային պայմանագրերի օգտագործումից բխող հիմնախնդիրները, էական անհամապատասխանությունները տարբեր բուհերի ՄՌ մոտեցումների միջև:

Հետագա գործունեությունը պետք է կենտրոնացած լինի այսպիսի հարցերի արդյունավետ լուծման վրա, այլ ոչ թե կրկնի արդեն լուծված հարցերի վերաբերյալ հետազոտությունները:

Առաջարկություն 7(բ).

7 (ա) առաջարկությունում նշված ՄՌ կադրային հարցերին արդյունավետ պատասխաններ մշակելիս՝ ՀՀ կառավարությունն ու ԲԿ համայնքը պետք է մեծապես ներգրավված լինեն մի երկխոսության մեջ՝ կապված կառավարության և բուհի պատասխանատվության և գործողությունների միջև հավասարակշռության հաստատման հետ:

Չնայած որ բուհի ինքնավարության ապագա կարևորությունը արդեն իսկ ընդգծվել է (տե՛ս 3 (ա) առաջարկությունը՝ վերևում), ԲԿ հանրությունը պետք է պատրաստ լինի ընդունել, որ հնարավոր են ԲԿ առաջնային օրենքի որոշակի փոփոխություններ՝ ստեղծելու համար ԲԿ ՄՌ կադրային գործունեության որոշ հայեցակետերի հետ կապված հետևողականորեն խթանիչ օրենսդրական դաշտ :

Նաև կառավարությունը պետք է պատրաստ լինի ընդունել, որ այն չի կարող պարզապես խուսափել հանրային շահերի պարտականություններից այս տարածքում՝ պնդելով, որ այդ հարցերը վերաբերվում են միայն բուհերին:

Առաջարկություն 7(գ).

Մի շարք քայլեր արդեն իսկ ձեռնարկվել են միջազգային ֆինանսավորմամբ ծրագրերի շրջանակում, որոնք ուղղված են եվրոպական լավագույն ընդհանուր փորձի առումով ԲԿ ոլորտի աշխատակազմի զարգացմանը՝ ՄՌ ղեկավարության և կառավարման ոլորտներում, որը կօգնի լուծել որոշ խնդիրներ, որոնք ամփոփված են 7(ա) առաջարկությունում:

Հետևաբար, Եվրոպայի խորհրդի ընթացիկ ծրագրի շրջանակում հետագա գործողությունները պետք է ուղղվեն՝ հայտնաբերելու և զարգացնելու լրացուցիչ նոր մոտեցումներ այս ոլորտում: Ինչպես մանրամասնած է 13 (բ) առաջարկությունում ստորև, առաջարկվող լրացուցիչ մոտեցումները կքննարկեն աշխատակիցների էթիկայի սկզբունքների նորմերը / ցուցանիշները և բարոյական վարքագիծը:

Առաջարկություններ 8-րդ բաժնից՝ «Կրթական փոխհարաբերությունները ուսանողների և աշխատակազմի միջև (այլ հարակից խնդիրներ)»

Առաջարկություն 8(ա).

Կրթական և ուսուցման փոխհարաբերությունները ԲԿ ոլորտի աշխատակազմի և ուսանողների միջև պետք է հիմնված լինեն հիմնարար դրական էթիկայի սկզբունքների և էթիկական վարքագծի առավելագույն պարտավորվածության վրա: Դրանք պետք է համապարփակ ներդրված լինեն էթիկայի կանոնակարգում: ԲԿ ոլորտի աշխատակազմի դեպքում՝ այս նորմերի խախտումների համար աշխատանքային պայմանագրերով պետք է նախատեսված լինեն խիստ պատժամիջոցներ: Ուսանողների դեպքում՝ այս նորմերի խախտումների համար պետք է նախատեսված լինեն խիստ պատժամիջոցներ բուհերի նորմատիվ իրավական բազայով:

բուհական անձնակազմը պետք է հատուկ պատասխանատվություն ստանձնի ուսանողների շրջանում էթիկական վարքագծի դրական պարտավորվածություն զարգացնելու գործում:

ՀՀ կառավարությունը պետք է աջակցի այդ զարգացումներին հանրային իրազեկության մակարդակի բարձրացմանն ուղղված արշավների միջոցով՝ լայն քաղաքացիական հասարակության հետ միասին: Այս գործընթացը, մասնավորապես, պետք է ուղղորդվի

ԲԿ ոլորտի ուսանողների ծնողներին: Պետք է դիտարկել նաև այդ ծնողների համար նախատեսված էթիկայի նորմերի խորհրդատվական կանոնագրքի մշակումը:

ՀՀ կառավարությունը պետք է նաև լիարժեք ուշադրություն հատկացնի այն ծավալներին, որոնք անհրաժեշտ են այս զարգացումների իրականացման համար խթանիչ օրենսդրության մշակման, ինչպես նաև ինստիտուցիոնալ մոտեցումներում նվազագույն չափորոշիչներ ապահովելու համար, օրինակ, լրացուցիչ հարցեր ընդգրկելով «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքում: Սա պետք է նաև ներառի այն հանգամանքը, թե արդյոք ԲԿ ոլորտի աշխատակազմի էթիկայի նորմերը պետք է կապվեն հանրային ծառայության ոլորտում ավելի լայն էթիկայի նորմերի մշակման հետ: Ավելի մանրամասն (տե՛ս նաև 11-րդ առաջարկությունը ստորև):

Եվրոպայի խորհրդի ընթացիկ ծրագրի շրջանակում հետագա գործողությունները պետք է ընդգրկուն և հատուկ ուշադրություն արժանացնեն էթիկայի սկզբունքների և վարքագծերի ու նորմերի զարգացման աջակցությանը (տես 13 (բ) առաջարկությունը՝ ստորև):

Առաջարկություն 8(բ).

ՀՀ ԲԿ համայնքը պետք է զբաղվի ուսումնական ծրագրերի և գնահատման մոտեցումների մշտական վերանայման և կատարելագործման հարցերով՝ շարունակական հիմունքով ուսումնական և գնահատման զգալի նորարարություններով հանդես գալու նպատակով: Մշակումները պետք է կատարվեն ուսանողակենտրոն ուսուցման և դասավանդման փորձի նպատակով, որն ապահովում է ուսանողների լիարժեք մասնակցությունը և պետք է մշակվեն հարուստ և բազմազան գնահատման մոտեցումներ, որոնք թույլ են տալիս ուսանողներին ցուցադրել խորը գիտելիքներ:

Ի պատասխան նման նորարարությունների, ուսանողները պետք է նվիրվածություն ցուցաբերեն էթիկական բարեվարքությանը, և չպետք է ձգտեն որևէ կերպ կեղծել նորարարական գնահատման մոտեցումները որևէ նոր հնարավորության դիմաց, որը կարող է ձեռք բերվել խաբելու արդյունքում:

Նմանապես, ԲԿ ոլորտի աշխատակազմը պետք է հավատարիմ մնա էթիկայի ամենաբարձր չափորոշիչներին ուսանողների աշխատանքների գնահատման ընթացքում՝ օգտագործելով նոր, ավելի հարուստ և ավելի բազմազան մոտեցումներ:

ՀՀ կառավարությունը պետք է աջակցի նման զարգացումներին՝ ապահովելով ֆինանսավորման մեխանիզմներ համապատասխան ուսումնական ծրագրերի և գնահատման նորարարությունների համար:

Առաջարկություն 9-րդ բաժինից՝ «Խնդիրներ՝ կապված բուհական համակարգ ուսանողների ընդունելության հետ»

Առաջարկություն 9.

Ըստ երևույթին, առկա են լուրջ խնդիրներ՝ կապված դպրոցական ավարտական քննությունների հետ: Դրանք, կարծես, ներառում են համակարգային անպատշաճ

մասնավոր կրկնուսուցում, խաբեբայություն ավարտական քննությունների ժամանակ (կապված ոչ պատշաճ քննական հսկման հետ) և նեղ մոտեցումներ գնահատման ժամանակ, որոնք կարող են բարձրացնել կրկնուսուցման «գրավչությունը»:

ՀՀ կառավարությունը պետք է մանրակրկիտ ուսումնասիրի այս հիմնախնդիրները, ապա անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի դրանք լուծելու համար:

Չնայած այս հարցերը ավելի շատ վերաբերվում են դպրոցական համակարգին, սակայն ազդում են բուհական համակարգ ուսանողների ընդունելության վրա: Հետևաբար, ԲԿ հանրությունը պետք է լիարժեք կերպով զբաղվի, ազգային քննարկման դնի և քայլեր ձեռնարկի այս հարցերի լուծման նպատակով: Մասնավորապես, ԲԿ գիտաշխատողները չպետք է մասնակցություն ունենան մասնավոր կրկնուսուցմանը:

Առաջարկություններ 10-րդ բաժնից՝ «Ուսանողների մասնակցությունը ԲԿ կառավարմանը»

Առաջարկություն 10(ա).

Ուսանողական խորհուրդների անկախությունը պետք է լիարժեքորեն ճանաչվի և երաշխավորվի:

ՀՀ կառավարությունը պետք էրկխոսության մեջ մտնի ԲԿ համայնքի հետ՝ քննարկելու, թե որքանով կարող է պահանջվել ազգային նպաստավոր օրենսդրության ներմուծումը, հավանաբար «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքի շրջանակներում՝ ապահովելով նվազագույն ընդունելի հետևողականություն:

Այնուամենայնիվ, ուսանողական ասոցիացիաների անկախության ճանաչման և երաշխավորման հիմնական պատասխանատվությունը պետք է ստանձնեն հենց առանձին բուհերը:

Առաջարկություն 10(բ).

Ուսանողների ամբողջական, իմաստալից և անկախ ներգրավումը բուհերի կառավարման գործընթացում պետք է ճանաչված ու ապահովված լինի:

ԵՎ նորից, ՀՀ կառավարությունը պետք էրկխոսության մեջ մտնի ԲԿ համայնքի հետ՝ քննարկելու, թե ինչ ծավալների ազգային նպաստավոր օրենսդրության ներմուծման անհրաժեշտություն կա, հավանաբար «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքի շրջանակներում՝ ապահովելով նվազագույն ընդունելի հետևողականություն:

Այնուամենայնիվ, ինստիտուցիոնալ կառավարման հարցերում ուսանողական մարմնի ներգրավվածության ճանաչման և ապահովման հիմնական պատասխանատվությունը պետք է ստանձնեն հենց առանձին բուհերը:

Առաջարկություն 11-րդ բաժնից՝ «Էթիկայի նորմերը բուհական համակարգում և իրավական դաշտը»

Առաջարկություն 11.

Ինչպես քննարկվեց վերոհիշյալ 8 (ա) առաջարկությունում, էթիկայի նորմերը պետք է մշակված լինեն ԲԿ ոլորտի աշխատակիցների համար, որոնց համար աշխատանքային պայմանագրով պետք է սահմանված լինեն խիստ պատժամիջոցներ խախտումներ կատարելու դեպքում (ընդհուպ մինչև աշխատանքից ազատում):

Եթե ՀՀ կառավարությունը մշակում է ընդհանուր իրավական դաշտ հանրային ծառայությունների համար, որի դեպքում էթիկայի նորմերի խախտումները աշխատանքային պայմանագրերով կարող են հանգեցնել աշխատանքից ազատման, ապա ԲԿ ոլորտի աշխատակազմը անշուշտ պետք է ընդգրկված լինի այս շրջանակում: Մա կարող է ամրապնդել ԲԿ ոլորտի աշխատակիցների դրական վերաբերմունքը էթիկական վարքագծին:

Արդարադատության նախարարությունը պետք է նաև զարգացման համար անհրաժեշտ ընդհանուր իրավական դաշտ ամրապնդի, որտեղ կկիրառվեն համապատասխան պատժամիջոցներ այն ուսանողների նկատմամբ, ովքեր խախտել են էթիկայի կանոնադրքի դրույթները՝ բուհի նորմատիվ իրավական բազայի շրջանակում, և քրեական պատասխանատվության ենթարկվեն այն ծնողները, ովքեր փորձում են ոչ պատշաճ, ոչ էթիկական միջամտություն ցուցաբերել իրենց երեխայի ԲԿ գործելակերպերում:

Առաջարկություններ 12-րդ բաժնից՝ «Կառավարության հակակոռուպցիոն ռազմավարությունները և բուհերը»

Առաջարկություն 12(ա).

ՀՀ կառավարությունը մասնավորապես պետք է հստակեցնի կառավարության ընդհանուր հակակոռուպցիոն ռազմավարության և կրթության ոլորտում հակակոռուպցիոն ռազմավարության փոխհարաբերությունները: Մասնավորապես, կառավարությունը պետք է հստակեցնի, թե կառավարական հակակոռուպցիոն ռազմավարության մեջ առանձին բաժին կա՞ զուտ կրթության ոլորտի համար, որին ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ) պետք է հետևի, կամ արդյոք ԿԳՆ-ից ակնկալվում է մշակել իր սեփական հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ ընդլայնվելով կառավարական ընդհանուր փաստաթղթի համապատասխան բաժինը:

ՀՀ կառավարությունը պետք է ապահովի, որ բոլոր հակակոռուպցիոն ռազմավարությունները՝ անկախ այն բանից, թե դրանք իրականացվում են ընդհանուր կառավարության, թե նախարարության մակարդակով, լինեն շարունակական ժամանակի ընթացքում, այսինքն, նոր ռազմավարությունը սկսվի անմիջապես հնի ավարտից հետո՝ առանց ժամանակային ընդմիջումների և, հետևաբար, առանց այդ ռազմավարությունների իրականացման առաջընթացի մոնիտորինգի ընդմիջումների:

Այս համատեքստում, կառավարությունը պետք է նաև ապահովի մոնիտորինգի զեկույցների հրապարակումների համապատասխան թիրախների կատարում, ինչպես

նան պետք է ապահովի, որ այդ զեկույցները հրապարակվեն թափանցիկ, այդ թվում՝ առցանց եղանակով:

Կառավարության 2015-2018թթ նոր հակակոռուպցիոն ռազմավարության / գործողությունների ծրագրի Կրթության բաժինը (Բաժին 3.1) ներառում է մանրամասն վերլուծություն և սահմանում է շատ կարևոր հարցեր, որոնք պետք է լուծվեն: ՀՀ կառավարությունը պետք է պատշաճ ուշադրության ապահովի այդ հարցերի շուրջ: Բայց, մյուս կողմից, կառավարությունը պետք է վերանայի այս բաժնի որոշ հայեցակետեր՝ հետագա պարզության նպատակով, օրինակ, «Մասնագիտական կրթության» քննարկում թեմայով:

Կառավարության 2015-2018թթ հակակոռուպցիոն նոր ռազմավարության/գործողությունների ծրագրի 4-րդ գլուխը ներառում է մոնիտորինգի առնչությամբ կարևոր նյութական մոտեցումներ և գնահատում է, թե որքանով են նպատակները հասանելի: Սակայն, կառավարությունը պետք է ապահովի լրացուցիչ մանրամասներ դրա առնչությամբ այնպիսի հայեցակետերի մասին, ինչպիսիք են՝ հակակոռուպցիոն ռազմավարության հանձնաժողովը, մոնիտորինգի և գնահատման համար օգտագործվող ցուցանիշները և մոնիտորինգի և գնահատման փոխհարաբերությունները ընդհանուր ռազմավարության համատեքստում, ինչպես նաև հատուկ ոլորտներում, ինչպիսիք է կրթությունը:

Առաջարկություն 12(բ).

ՀՀ կառավարությունը և ԲԿ համայնքը պետք է համաձայնություն ձեռք բերեն քննարկման միջոցով, թե որքանով պետական բուհերի հակակոռուպցիոն պլանները պետք է հետևեն ստանդարտացված ազգային ձևանմուշների, կամ առնվազն ընդհանուր ուղենիշների՝ միննույն ժամանակ հարգելով բուհերի ինքնավարությունը:

Մասնավորապես, այս քննարկումները պետք է կենտրոնան այն հարցի ապահովման վրա, որ բուհերի պլանները պահպանեն գործողությունների հստակ ժամկետներ, և հստակ սահմանեն այն անձանց, ովքեր հաստատություններում պատասխանատու են որոշակի գործողությունների ընթացքի համար: Պլաններում պետք է նաև հստակ սահմանված լինեն մեխանիզմներ՝ նպատակների ձեռքբերման առաջընթացը դիտանցելու համար, ինչպես նաև պետք է սահմանված լինեն արդյունավետ պատժամիջոցներ, որոնք կիրառելի են նպատակին չհասնելու դեպքում:

Առաջարկություն 12(գ).

ՀՀ կառավարությունը և ԲԿ համայնքը պետք է ճանաչեն, որ թեև 12 (ա)-ի և (բ) առաջարկություններում սահմանված գործողությունները իրենցից ներկայացնում են կարևոր կարճաժամկետ և միջնաժամկետ միջոցներ բուհական համակարգում հակակոռուպցիոն գործունեությունը խթանելու համար, այնուամենայնիվ ԲԿ բարեվարքության երկարաժամկետ ամրապնդումը պայմանավորված կլինի բոլոր

դերակատարների՝ էթիկայի սկզբունքների և վարքագծի հիմնարար պարտավորվածությամբ (տե՛ս 13 (բ) առաջարկություն՝ ստորև):

Առաջարկություններ 13-րդ բաժնից՝ «Եզրակացություններ և ծրագրի հետագա քայլեր»

Առաջարկություններ 13(ա).

Նախապես Եվրոպայի խորհրդի ընթացիկ ծրագրի շրջանակում քննարկումը պետք է իրականացվեր Եվրոպայի խորհրդի փորձագետների և Հայաստանի կառավարության և այլ բարձրաստիճան շահագրգիռ կողմերի միջև ավելի մեխանիկական և կարգավորող բնույթ ունեցող միջոցառումների շուրջ, որոնք առաջարկվում են ընդհանուր ԲԿ համակարգը բարելավելու և տվյալ ծրագրի շրջանակում ԲԿ բարեվարքության երկարաժամկետ ձեռքբերումների համար՝ հիմնված էթիկայի սկզբունքների և վարքագծի վրա: Հիմնականում սա վերաբերվում է վերոնշյալ 1-ից 12 առաջարկությունների հայեցակետերին:

Առաջարկություն 13(բ).

Այնուհետև, Եվրոպայի խորհրդի ընթացիկ ծրագրով պետք է, մասնավորապես, մշակվի բուհերին ուղղված նոր լրացուցիչ աջակցություն՝ նախատեսված բարեվարքությունը ամրապնդելու գործողությունների և մոտեցումների վրա: ՀՀ կառավարության և ԲԿ համայնքի քննարկումները պետք է կենտրոնանան անձնակազմի և ուսանողների՝ էթիկայի նորմերի միջոցով էթիկայի սկզբունքների և էթիկական վարքագծի դրական պարտավորվածությունը խթանելու հարցերի շուրջ: Սա վերաբերվում է վերոնշյալ 7(գ), 8(ա) և 11 առաջարկություններին:

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ, ՆԵՐԱՌՅԱԼ ՍՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԱԽՈՐԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1.1 Նախապատմություն, նպատակները և գլխավոր մոտեցումը

1.1.1 Այս զեկույցը Եվրոպայան միության կողմից ֆինանսավորված՝ Եվրոպայի խորհրդի «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» երկամյա ծրագրի առաջին արդյունքն է: Ձեկույցը նպատակ ունի տրամադրել Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում բարեվարքության վրա ազդող գործոնների ռիսկի նախնական փորձագիտական վերլուծություն: Ինչպես կնշվի հետագայում (տես բաժին 13), հետագա ծրագրերի գործունեությունը, ամենայն հավանականությամբ, պետք է ներառի շահառուների իրազեկման միջոցառումներ և անձնակազմի զարգացման դասընթացներ՝ նախատեսված հիմնական բուհերի աշխատակիցների համար: Հետագա գործողությունների կանխատեսման անհրաժեշտությունը որոշ հետևանքներ է ունեցել զեկույցի համար ինչպես գրականության վերանայման, այնպես էլ մանրամասների ընդգրկվածության առումներով:(տես 1.2.3 ստորև):

1.1.2 Այս հարցերը ուսումնասիրելիս՝ որ Եվրոպայի խորհրդի փորձագետները, ընդհանուր առմամբ, կհետևեն այն մոտեցումներին, որոնք իրենք կիրառել են Խորհրդի այլ աշխատանքներում: Այս մոտեցմամբ փաստարկներ է բերվում այն մասին, որ բարեվարքության երկարաժամկետ ամրապնդումը կրթության ոլորտում պետք է հիմնված լինի հիմնարար դրական էթիկայի սկզբունքների և էթիկական վարքագծի նկատմամբ լիակատար պարտավորվածության վրա ինչպես մասնագիտական, այնպես էլ հասարակական կյանքում: Ըստ էության, բարեվարքությունը դիտարկվում է որպես դրական էթիկայի սկզբունքները կրթության որակին կապող օղակ:

Ընդհանուր կրթության որակի բարելավման վրա այս շեշտադրմամբ նկատի է առնվում, որ կիրառվող մոտեցումը շատ ավելի լայն է, քան զուտ «կոռուպցիայի» դեֆիցիտային օրակարգում դրված և վերնից-ներքև, մեխանիկական «հակակոռուպցիոն» միջոցների հարակից նեղ խնդիրների քննարկումը: Մակայն, այսպիսի միջոցառումներն էլ կունենան իրենց տեղը, հատկապես կարճաժամկետ և միջնաժամկետ կտրվածքում, և ՀՀ կառավարության և այլ բարձրաստիճան շահագրգիռ կողմերի հետ նախնական քննարկումների ընթացքում:

Այս մոտեցումից հետևում է, որ փորձագետները ձգտում են ընդհանուր հայտարարի գալ ՀՀ կառավարության և այլ բարձրաստիճան շահագրգիռ կողմերի հետ ոչ միայն հակակոռուպցիոն օրակարգի նեղ հայեցակետերի շուրջ, այլև որոշ ավելի լայն հարցերի շուրջ, որոնք կարող են տեղին լինել ՀՀ բուհական համակարգում երկարաժամկետ բարեվարքության ամրապնդման համար իրավական դաշտ ստեղծելու առումով:

Փորձագետների կողմից կիրառված ընդհանուր մոտեցումները մանրամասն շարադրված են Եվրոպայի խորհրդի համար կատարած այլ աշխատանքներում, մասնավորապես հետևյալ վերջին փաստաթղթերում՝ «Էթիկայի սկզբունքներ կրթության ոլորտում» և «Էթիկական վարքագիծը կրթական ոլորտի բոլոր գործիչների համար», որոնք ներկայացվել են Խորհրդի կրթական քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեին (ԿՔՊԴԿ), որպես Խորհրդի՝ «Կրթության ոլորտում էթիկայի, թափանցիկության և բարեվարքության հարցերով համաեվրոպական պլատֆորմ» փաստաթղթի մաս (Եվրոպայի խորհրդ 2015ա,բ):

Մեթոդաբանությունը՝ ներառյալ Այս ոլորտում կատարած նախկին աշխատանքները

Այս զեկույցի մեթոդաբանությունը մասամբ իրենից ներկայացնում է Հայաստանի ԲԿ համակարգի մասին ընդհանուր գրականության և համացանցային հասանելի ռեսուրսների երկրորդային հետազոտություն:

1.2 Երկրորդային հետազոտություն նախորդ միջազգային զեկույցների և ծրագրերի վերաբերյալ

1.2.1 Ընդ որում, զգալի ռեսուրսներ արդեն ստեղծվել են այլ միջազգային կազմակերպությունների և ծրագրերի կողմից: Ձեկույցում հղում կկատարվի այդ ռեսուրսներին հղում: Դրանք ամբողջությամբ ներկայացված են զեկույցի վերջում՝ օգտագործված գրականության ցանկում: Սակայն, հիմնականում դրանք ներառում են՝

Տեմպուսի զեկույցը «Բարձրագույն կրթությունը Հայաստանում», հուլիս, 2012թ. (Տեմպուս 2012թ.),

Համաշխարհային բանկի զեկույցը՝ «Կառավարման խնդիրների լուծումը՝ Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների կենտրոնում», հունվար 2013թ. (Համաշխարհային բանկ, 2013թ.),

Հայաստանյան բաց հասարակության հիմնադրամի զեկույցը «Բարձրագույն կրթությունը առկա խնդիրների վերլուծություն», հուլիս 2013 (Հայաստանյան բաց հասարակության հիմնադրամ 2013):

Երկու *Տեմպուս IV ծրագրերի* արդյունքները.

Աթենա ծրագիրը «Կայուն և ինքնավար բարձրագույն կրթական համակարգերի խթանումը արևելյան հարևանության տարածքում», որին մասնակցում են Հայաստանը, Մոլդովան և Ուկրաինան: (Տես Աթենայի կայքէջը www.athena-tempus.eu/)

Լա ՄԱՆՇ ծրագիր «Փոփոխությունների ղեկավարումը և կառավարումը բարձրագույն կրթության ոլորտում», որը ներառում է Հայաստանը, Բելառուսը,

Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան: (Տես Լա ՄԱՆՇ կայքէջը www.lamanche-tempus.eu/)

- 1.2.2 Տեմպուսի (2012թ.), Համաշխարհային բանկի (2013թ.) և Բաց հասարակության հիմնադրամի (2013թ.) երեք ընդհանուր հաշվետվություններից յուրաքանչյուրը առանձին փաստաթուղթ է՝ կապված ԲԿ համակարգի տարբեր ոլորտների հետ, որոնք բաղկացած են 15-61 էջերից: Ինչպես կերևա այս փաստաթղթի հետագա բաժիններում, նման ծավալի աշխատանքների արդյունքները կարող են օգտագործվել բավականին ստանդարտ եղանակով՝ վերլուծության հիմնական կետերը ցույց տալու համար:

Աթենա և Լա ՄԱՆՇ ծրագրերը

- 1.2.3 Բայց, մյուս կողմից, Աթենա և Լա ՄԱՆՇ ծրագրերը ավելի քան երեք տարվա տևողությամբ մեծ արդյունքների հասած ծրագրեր են, որոնցից յուրաքանչյուրն ունի մեծածավալ աշխատանքներ ներառող ընդգրկուն կայքէջեր: Նախորդ ծրագրային աշխատանքի բնույթն ու մասշտաբները կարևոր նշանակություն ունեն Եվրոպայի խորհրդի ընթացիկ ծրագրի համար: Եվ Աթենա, և Լա ՄԱՆՇ ծրագրերում Հայաստանի ԲԿ համակարգի զգալի հատվածներ ներառված են միջազգային համագործակցային լայնածավալ աշխատանքներում այնպիսի հարցերի շուրջ, որոնք կարող են օգտագործվել սույն ծրագրի շրջանակում: Այս երկու ծրագրերն էլ ստացել են ԵՄ զգալի ֆինանսավորմամբ օժանդակություն: Հետևաբար, այդ ծրագրերի ընթացիկ քննարկումը և արդյունքների օգտագործումը չպետք է սահմանափակվի առանձին հաշվետվությունների՝ օրինակ Տեմպուսի, Համաշխարհային բանկի և Բաց հասարակության հիմնադրամի վերոնշյալ հաշվետվությունների «համեմատաբար ստանդարտ» կիրառությամբ:

Աթենա ծրագիր

Աթենա ծրագիրը, որը սկսվել է 2012 թ. հոկտեմբերից և կտևի մինչև 2015 հոկտեմբերը, արդեն ներգրավել է Երևանի պետական համալսարանը (Հայաստանի համակարգող), Գավառի պետական համալսարանը, Հայաստանի Պետական Ճարտարագիտական համալսարանը, ինչպես նաև պետական բուհերի ռեկտորական խորհուրդները և ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ), քանի որ ծրագրով նախատեսված է աջակցել կառուցվածքային բարեփոխումների գործընթացներին և ռազմավարական կարգավորումների մշակմանը ազգային մակարդակում («Ինչ է Աթենան», կայքէջ): Ծրագրի գործընկեր կողմերն են Եվրոպական համալսարանի ասոցիացիան, ինչպես նաև մի շարք համալսարաններ Ֆինլանդիայում, Հոլանդիայում և Պորտուգալիայում: Այս ծրագրի ԵՄ ֆինանսավորումը կազմել է 1,072,140 եվրո: Աթենա ծրագիրը ներառել է ծրագրի մակարդակով մի շարք ուսուցողական սեմինարներ, երկրի մակարդակով (ազգային) սեմինար-քննարկումներ և ինստիտուցիոնալ մակարդակով վերապատրաստման դասընթացներ: Այդ միջոցառումներում ընդգրկված թեմաներն են՝ ԲԿ կառավարումը (ներառյալ ինքնավարությունը),

ֆինանսական կառավարումը և մարդկային ռեսուրսների կառավարումը: (Տես Աթենա կայքէջը:)

Լա ՄԱՆՇ ծրագիրը

Լա ՄԱՆՇ ծրագիրը, սկսվել է 2012 թ. հոկտեմբերից և կտևի մինչև 2015 հոկտեմբերը և արդեն գործընկերություն է հաստատվել 23 Բարձրագույն ուսումնական հաստատությունների (բուհերի) հետ արևելյան հարևանության տարածքում, հինգ բուհերի հետ ԵՄ-ում (Բուլղարիայից, Ֆրանսիայից, Հունաստանից, Պորտուգալիայից և Մեծ Բրիտանիայից) և մեկ բիզնեսի զարգացման ընկերության հետ Մեծ Բրիտանիայից: Հայաստանում գործընկեր համալսարաններ են Երևանի պետական համալսարանը, Երևանի պետական ճարտարագիտական համալսարանը (Պոլիտեխնիկ), Գավառի պետական համալսարանը և Հայաստանի ազգային ազրարային համալսարանը: ԵՄ դրամաշնորհային բյուջեն կազմել է 837.652 եվրո: (Տես Լա ՄԱՆՇ կայքէջը:)

Լա ՄԱՆՇ ծրագիրը՝ Ցուցադրական մանրամասներ

1.2.4 Լա ՄԱՆՇ ծրագրի միջոցով կարելի ցուցադրել այս ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների մանրակրկիտությունը:

Լա ՄԱՆՇ ծրագիրը ներառում է ինը աշխատանքային փաթեթներ (ԱՓ), այդ թվում՝ «Առաջնորդության և կառավարման հմտություններ և մոդելներ», «Բարձրագույն կրթության ոլորտում նորարար կառավարման գործելակերպեր», «Առաջնորդության և փոփոխությունների կառավարման վերապատրաստում», «Բարձրագույն կրթության ոլորտում առաջնորդության և փոփոխությունների կառավարման ռազմավարության մշակում», ինչպես նաև Լա ՄԱՆՇ-ի վիրտուալ վերլուծական տարածք»-ի մշակում: (Տես Լա ՄԱՆՇ-ի կայքէջը, «Լա ՄԱՆՇ-ի գործունեությունն ու արդյունքները»):

Լա ՄԱՆՇ վիրտուալ վերլուծական տարածքը մեկնարկել է Լա ՄԱՆՇ-ի 4-րդ գործընկերային հանդիպման ժամանակ Երևանում 2014 թվականի հունիսին (տե՛ս Տեղեկատվական տեղեկագիրը Լա ՄԱՆՇ-ի կայքէջում , թիվ 3, հունիս 2014թ., էջ 1): 2014 թվականի սեպտեմբերից դեկտեմբեր առցանց քննարկումներ պետք է անցկացվեին համալսարանի կառավարման և ֆինանսավորման, մարդկային ռեսուրսների կառավարման և ուսանողների ներգրավվածության վերաբերյալ (տես Լա ՄԱՆՇ-ի կայքէջը Տեղեկատվական տեղեկագիր, թիվ 3, հունիս 2014թ., էջ 2): Արդեն իսկ քայլեր են ձեռնարկվել Հայաստանում ԲԿ ավելի շատ շահագրգիռ կողմերի՝ վիրտուալ վերլուծական տարածք ներգրավելու ուղղությամբ: (տես Լա ՄԱՆՇ-ի կայքէջը Տեղեկատվական տեղեկագիր, թիվ 4, դեկտեմբեր 2014թ., էջ 8):

Առավել ընդհանուր ասած, Լա ՄԱՆՇ ծրագրով կազմվել է «Հաղորդակցության և տեղեկությունների հետծրագրային տարածման ռազմավարություն» փաստաթուղթը (2014թ. - տե՛ս Լա ՄԱՆՇ-ի կայքէջը): Սա համապարփակ և

մանրամասն փաստաթուղթ է: Այն իր մեջ ներառում է հատուկ պարտավորվածություն որպես թիրախ ընդունել «հիմնական շահագրգիռ կողմերին, ինչպիսիք են քաղաքականություն մշակողները, ձեռնարկատիրական և արդյունաբերական, աշխատաշուկայի հաստատությունները, քաղաքացիական հասարակությունը, ուսանողական կազմակերպությունները, կոնսորցիումից դուրս բուհերը (էջ 71), մինչև «Բազմապատկիչ ազդեցությունները» (էջ 99) և «Բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումներին վերաբերող այլ նախաձեռնությունների հետ սիներջիները» (էջ 99):

Լա ՄԱՆՇ ծրագրով կազմվել է նաև արտաքին գնահատման հաշվետվություն «Առաջնորդության և կառավարման հմտություններ և մոդելներ Հայաստանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայ բարձրագույն ուսումնական հաստատություններում», որտեղ քարտեզագրվել են «առաջնորդության առկա հմտությունները և տարածված կառավարման մոդելները հինգ մասնակից գործընկեր երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում» (2013 - տե՛ս, «Արտաքին գնահատման հաշվետվություն» Լա ՄԱՆՇ-ի կայքէջում): Հայաստանի մասին հետազոտությունը անցկացվել է Ազրոսուպ Դիժոնի կողմից, Ֆրանսիա:

Լա ՄԱՆՇ ծրագրի Տեղեկատվական թերթիկում (թիվ 4, դեկտեմբեր 2014թ., էջ 1.) նշվում է, որ «68 դասավանդողներ ու փոփոխությունների ոլորտում աշխատող անձինք վերապատրաստվել են կոնսորցիումի մակարդակով կազմակերպված դասավանդողների վերապատրաստման ծրագրում: 2014 թ.-ին ավելի քան 1500 աշխատակիցներ ծրագրի 23 մասնակից երկրներից մասնակցել են ինստիտուցիոնալ մակարդակով փոփոխությունների կառավարման թեմայով դասընթացների»:

Լա ՄԱՆՇ ծրագիրը ստեղծել է նաև «Փոփոխվող բարձրագույն ուսումնական հաստատությունները անցումային հասարակություններում. Մանրամասն ուսումնասիրության հաշվետվություն» (2014 - տե՛ս Լա ՄԱՆՇ-ի կայքէջը): Սույն զեկույցը ներառում է ընդհանուր համատեքստին և բոլոր գործընկեր երկրներում առկա մարտահրավերների մասին ընդհանուր ծրագրի ներածական վերլուծություն: Սակայն, զեկույցը, հիմնված է 23 իրավիճակային վերլուծություններ ԲԿ ոլորտում տեղական կամ գլոբալ հիմնական միտումները և պահանջները՝ նպատակ հետապնդելով հասնել նորարարության և կայուն փոփոխությունների: Հայաստանին վերաբերող չորս իրավիճակային վերլուծությունները նկարագրված են ընթացիկ զեկույցի 3, 7, 8 և 10 բաժիններում, ստորև:

Լա ՄԱՆՇ ծրագրում նաև կազմվել է «Բարձրագույն կրթության ոլորտում եվրոպական կառավարման գործելակերպերի ձեռնարկ» (2014 - տես Լա ՄԱՆՇ-ի կայքէջը): Սա օգտակար փաթեթ է՝ կազմված 16 իրավիճակային վերլուծություններից, որոնք վերաբերում են «նորարարական կառավարման

գործելակերպին և մոտեցումներին, որոնք հաջողության են հասել Լա ՄԱՆՇ ծրագրում ներգրավված՝ Բուլղարիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Պորտուգալիայի և Մեծ Բրիտանիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում» (էջ 6): Օրինակ, դրանցում ներառված են իրավիճակային վերլուծություններ՝ կապված ընդհանուր ինստիտուցիոնալ կառավարման հետ (Գլուխներ 2, 8 և 10), մեկ իրավիճակային վերլուծություն մասնագիտական զարգացման վերաբերյալ (Գլուխ 12) և մեկ իրավիճակային վերլուծություն ուսանողների ներգրավվածության վերաբերյալ (Գլուխ 13):

- 1.2.5 Լա ՄԱՆՇ ծրագրի բավականին մանրամասն ամփոփման գլխավոր նպատակն է ընդգծել այն, որ Լա ՄԱՆՇ և Աթենա ծրագրերի նման ծրագրերի շրջանակներում արդեն իսկ մեծ մեծածավալ աշխատանք է կատարվել և կարելի է կապ հաստատել դրանց և Հայաստանի բուհական համակարգում բարեվարքության ամրապնդման հարցերի միջև:

Ինչպես կներկայացվի է այս փաստաթղթի հետագա բաժիններում, հենվելով նախկին ծրագրերի վերլուծության վրա, Եվրոպայի Խորհրդի ընթացիկ ծրագրով պետք է ապահովվի, որ աշխատանքները և նյութերը մշակվեն այնպես, որ «հավելյալ նոր արժեք» ավելացնեն նախկին ծրագրերի աշխատանքներին, այլ ոչ թե պարզապես կրկնեն դրանք:

Ներկայիս ծրագրով պետք է նաև կոչ արվի ՀՀ կառավարությանը, որպեսզի առաջնահերթություն տրվի միջազգային կազմակերպությունների կողմից խոշոր ֆինանսավորում ստացած տարբեր համատեղ ծրագրերում իր մասնակցության և ՀՀ ԲԿ համակարգի վրա դրանց ունեցած ազդեցության նմանատիպ վերլուծությանը:

- 1.2.6 Ի վերջո, միջազգային ծրագրերի առումով, կարևոր է նաև այն, որ Եվրոպայի խորհրդի ընթացիկ ծրագրում առկա լինեն տեղեկություններ «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության զարգացում եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով (ԵԲԿՏ)» ԵՄ թվինինգ աշխատանքների և արդյունքների վերաբերյալ և որ Եվրոպայի խորհրդի ընթացիկ ծրագիրը համատեղելի լինի դրանց (ԵՄ 2013 թ.):

1.3 Երկրորդային ուսումնասիրություն Հայաստանում առկա ռեսուրսների վերաբերյալ

Փորձագետները օգտվել են նաև Հայաստանի կազմակերպությունների որոշ արժեքավոր ռեսուրսներից:

- 1.3.1 Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կայքէջում (ՈԱԱԿ) անգլերեն լեզվով մի շարք նյութեր հասկապես օգտակար են եղել, (ինչպես քննարկվել է մասնավորապես 4 բաժնում) (տես ՈԱԱԿ-ի կայքէջը www.anqa.am/en/):

1.3.2 Որոշ ռեսուրսներ տրամադրել են ՀՀ կառավարությունը և բուհերը: Դրանք լիովին թվարկված են օգտագործված գրականության բաժնում: Դրանք ներառում են՝

- *մի շարք իրավական փաստաթղթեր Կրթության և գիտության նախարարությունից (ԿԳՆ)՝ ինչպես օրենքներ, այնպես էլ նախարարական որոշումներ ու հրամաններ,*
- *մի շարք հակակոռուպցիոն վերջին ռազմավարություններ ու գործողությունների ծրագրեր՝ կառավարությունից և ԿԳՆ-ից, հատվածներ կառավարության կողմից ներկայումս առաջարկվող հակակոռուպցիոն ռազմավարությունից, բուհերի վերջին կամ ընթացիկ հակակոռուպցիոն պլանների օրինակներ*

1.3.3 Սակայն, ինչպես քննարկվել է 12-րդ բաժինում, հնարավոր չի եղել օգտվել բոլոր նման աղբյուրներից, որոնք փորձագետները կցանկանային ուսումնասիրել այս գեկույցը պատրաստելիս:

Սրա պատճառը մասամբ այն է, որ փորձագետները կարող էին աշխատել միայն այն փաստաթղթերի հետ, որոնք առկա են կամ թարգմանված են անգլերեն: Որոշ համապատասխան փաստաթղթեր ի սկզբանե հասանելի չեն եղել անգլերեն, և անհրաժեշտ էր, որպեսզի վերջերս նշանակված ծրագրի ղեկավարը կազմակերպեր այս փաստաթղթերի թարգմանության գործընթացը: Ներկայիս գեկույցը պետք է պատրաստվեր սեղմ ժամկետներում և կար փաստաթղթերի քանակի սահմանափակում (օրինակ՝ առանձին բուհերի հակակոռուպցիոն պլանների), որոնք պետք է կարճ ժամանակահատվածում ձեռք բերվեին և թարգմանվեին:

Փորձագետները նաև պարզել են, որ չեն կարող գտնել կամ օգտվել կառավարության, ԿԳՆ և բուհերի կայքերում որոշ փաստաթղթերի անգլերեն տարբերակներից, որոնց համար առաջարկություն էր ներկայացվել, որ դրանք հասանելի լինեին այդ կայքերում: Իհարկե, դա կարող է պայմանավորված լինել փորձագետների անգլերեն լեզվով վեբ զննիչների տեխնիկական խնդիրներով, և ոչ թե, որ հայերեն տարբերակները հասանելի չեն եղել Հայաստանի կայքերում:

Այնուամենայնիվ, փորձագետները եկել են այն եզրահանգման, որ հնարավոր է հայերեն լեզվով աղբյուրներում եղել են որոշ խորքային խնդիրներ, օրինակ, կային որոշ կարևոր փաստաթղթերի հասանելիության «ժամանակային ինտերվալներ» , կամ որոշ կարևոր փաստաթղթերի ընթացիկ տարբերակները ընդհանրապես հասանելի չէին, առկա էին միայն հնացած տարբերակները, իսկ ընթացիկ տարբերակները հասանելի էին մասամբ: Նման հարցերը, կարծես թե վերաբերվում են այնպիսի փաստաթղթերի, ինչպիսիք են հակակոռուպցիոն գործողությունների պլանները և ռազմավարությունները ՀՀ կառավարության, ՀՀ Կրթության և գիտության նախարարության, և առանձին բուհերի մակարդակներով:

1.4 Փաստեր հարցազրույցներից / հանդիպումներից, որոնք անցկացվել են որպես ընթացիկ ծրագրի մաս

1.4.1 Երկրորդային վերլուծություն կատարելուց բացի, նոր, ընթացիկ փաստեր ձեռքբերելու հիմնական մեթոդաբանությունը եղել է մի շարք ծավալուն կիսաստանդարտացված հարցազրույցների/ հանդիպումների բովանդակության վերլուծությունը, որոնք անցկացվել են երբեմն անձանց և երբեմն խմբերի հետ: Կազմակերպչական աշխատանքները կատարել են Եվրոպայի խորհրդի աշխատակազմը և հարցազրույցները/հանդիպումները վարել են հրավիրված փորձագետները:

Հարցազրույցներ են անցկացվել շահագրգիռ կողմերի մի լայն զանգվածի հետ, այդ թվում՝

Կրթության և գիտության նախարարի,

Կրթության և գիտության փոխնախարարի,

Արդարադատության փոխնախարարի,

Կրթության և գիտության նախարարության բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետի և Զարգացման ծրագրերի և մոնիտորինգի վարչության պետի,

Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոնի (ՈԱՄԿ) տնօրենի,

Խոշոր պետական համալսարանների տասներկու պրոռեկտորների,

Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի (ՀՈԻԱԱ) և համալսարանների ուսանողական խորհուրդների ավագ ներկայացուցիչների

միջազգային տարբեր կազմակերպությունների աշխատակազմի բարձրաստիճան աշխատակիցների,

Բոլոնյան քարտուղարության,

Էռասմուս +,

Եվրոպական միության,

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ),

Համաշխարհային բանկի,

Հայաստանի բաց հասարակության հիմնադրամի հետ:

Ընդհանուր առմամբ, փորձագետները մասնակցել են տասներեք հարցազրույցներում / հանդիպումներում, որտեղ ներկա է եղել ավելի քան երեսունվեց անձ:

- 1.4.2 Հարցազրույցների / հանդիպումների ժամանակ տրամադրվող տեղեկությունների հղում անելիս՝ իրականում անուններ չեն տրվել: Այնուամենայնիվ, փորձագետները կարծում են, որ տեղին էր և անխուսափելի կառավարության ավագ ներկայացուցիչներին անդրադառնալը (ՀՀ կրթության և գիտության նախարար, ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ, արդարադատության փոխնախարար, և ծրագրերի զարգացման և մոնիտորինգի վարչության պետը, ում հետ հարցազրույցները տեղի են ունեցել առանձին): Մասնակցները վերաբերվում է ՈԱԱԿ-ի ղեկավարին/տնօրենին:

Մյուս կողմից, փորձագետները գտնում են, որ չպետք է բացահայտեն համալսարանների պրոռեկտորների, ում հետ խմբային հանդիպում են ունեցել, կամ ուսանողական խմբերի ներկայացուցիչների ինքնություններ, ում հետ նույնպես խմբակային հանդիպում են ունեցել: Մասնավորապես, փորձագետները չեն նշել կոնկրետ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների անունները, որոնք կատարել են որոշակի դիտողություններ փորձագետների հետ յուրաքանչյուր կազմակերպության հետ ունեցած առանձին հանդիպումների ընթացքում: Այս դիտողությունները ներկայացվել են «անանուն»՝ որպես «միջազգային կազմակերպությունների կողմից փորձագետների հետ հանդիպումների ժամանակ» կատարված դիտողություններ: Փորձագետները գտնում են, որ անանունությունը պահանջելու մասին որոշումների տարբերությունը պայմանավորված է համապատասխան հանդիպումների ժամանակ որոշակի մեթոդ օգտագործելու փորձագետների պարտավորվածությամբ:

Որպես վերջնական մեկնաբանություն օգտագործված տերմինների վերաբերյալ՝ փորձագետները, ընդհանուր առմամբ, «Բարձրագույն ուսումնական հաստատություններ» տերմինի համար օգտագործում են «բուհ»-եր հապավումը: Սակայն, կան որոշ դեպքեր, երբ «համալսարան» բառն է օգտագործվում, մասնավորապես, երբ մեջբերվում է հարցաքննվողի խոսքը, որը հատկապես այդ տերմինն է օգտագործել:

1.5 **Հետագա բաժիններ. Թեմայի որոշումն ու փաստերի հավաքագրումը**

- 1.5.1 Վերլուծելով հարցազրույցներից/հանդիպումներից և «գրականություն»-ից հավաքված փաստերը («Նախորդ միջազգային զեկույցները և ծրագրերը» և «Առկա հայերեն ռեսուրսները»)՝ հետևյալ թեմաներն են առաջ եկել, որոնք և հիմք են հանդիսացել ստորև ներկայացվող 2-ից 12 բաժինների համար:

Հարցեր՝ կապված բարձրագույն ուսումնական հաստատությունների (բուհ) ընդհանուր թվի, այդ թվում՝ մասնավոր բուհերի թվի, և մասնավոր բուհերի մասին ընդհանուր դիրքորոշման հետ

ԲԿ համակարգի վերաբերյալ իրավական դաշտը և կառավարման հիմնախնդիրները՝ ներառյալ ազգային կառավարության և կրթական համակարգի միջև ընդհանուր փոխհարաբերությունները

ՈԱԱԿ-ի (Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն) դիրքը

բուհական համակարգի ֆինանսավորումը

Հետազոտություններ և բուհերը

ՄՌ / կադրային մոտեցումները և խնդիրները բուհական համակարգում

Կրթական և ուսումնական փոխհարաբերությունները ուսանողների և աշխատակազմի միջև (հարակից այլ խնդիրներ)

Խնդիրներ՝ կապված բուհական համակարգ ուսանողների ընդունելության հետ

Ուսանողների մասնակցությունը ԲԿ կառավարմանը

Էթիկայի նորմերը ԲԿ համակարգում և իրավական դաշտը

Կառավարության հակակոռուպցիոն ռազմավարությունները և բուհերը

Զեկույցը ավարտվում է 13-րդ բաժնով՝ «Եզրակացություններ և ծրագրի հետագա քայլեր»

2-ից 12 բաժիններից յուրաքանչյուրը, ընդհանուր առմամբ, կազմված է ըստ «Հարցազրույցներից/հանդիպումներից հավաքագրած փաստեր»-ի ներկայացում և վերլուծություն, ապա «Գրականությունից հավաքագրած փաստերի» ներկայացում և վերլուծություն մասերի, որից հետո բերված են Առաջարկություններ:

Առաջարկություններ 1 բաժնից

Այս բաժնի հիմնական հայեցակետերի բովանդակության և վերլուծության արդյունքում կատարվել են հետևյալ հատուկ առաջարկությունները՝

Առաջարկություն 1(ա).

Եվրոպայի խորհրդի, Հայաստանի Հանրապետության կառավարության և բարձրագույն կրթության (ԲԿ) համակարգի համայնքի միջև երկխոսությունը պետք է հիմնված լինի բոլոր դերակատարների՝ դրական էթիկայի սկզբունքների և էթիկական վարքագծի պարտավորվածության միջոցով կրթական համակարգում բարեվարքության հասնելու ընդգրկուն մոտեցման, այլ ոչ թե միայն նպատակաուղղվի ավելի նեղ «դեֆիցիտային» մոտեցմանը, որը հիմնված է վերնից ներքև, մեխանիկական կարգավորող միջոցների վրա:

Բարեվարքության վերաբերյալ այս երկխոսությունը պետք է վեր բարձրանա պարզապես «հակակոռուպցիոն» հարցերի շրջանակից, և քննարկի կրթական համակարգում հիմնարար և բարձր որակի հասնելու այլ հարակից հարցեր:

Սակայն, կարճաժամկետ, ինչպես նաև միջնաժամկետ կտրվածքում, նպատակաուղղված քննարկում կպահանջվի ՀՀ կառավարության և այլ շահագրգիռ կողմերի հետ ավելի մեխանիկական և կարգավորող միջոցների շուրջ, որպեսզի սահմանվի ԲԿ բարեվարքության երկարաժամկետ ձեռքբերումների շրջանակ՝ հիմնված էթիկայի սկզբունքների և վարքագծերի վրա:

Առաջարկություն 1(բ).

ՀՀ կառավարությունը պետք է ապահովի, որ լիարժեք կարևորություն տրվի միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող բազմաթիվ միջամտությունների հետ իր փոխազդեցության հետևողականությանը իր կրթական համակարգում, և հատկապես տվյալ դեպքում՝ ԲԿ համակարգում: Մասնավորապես, այս քննարկումը պետք է հասնի լայն և առավել կայուն ազդեցության՝ խուսափելով ծրագրերում առկա ցանկացած անհարկի կրկնությունից և ապահովելով զգալի «հավելյալ արժեք» նոր ծրագրերում:

Առաջարկություն 1(գ).

Միջազգային կազմակերպությունները, ինչպիսին է Եվրոպայի խորհուրդը, պետք է նմանապես առավելագույն ուշադրություն դարձնեն ապահովելու համար, որ նոր ծրագրերը կառուցվեն նախորդ ծրագրի գործունեության և արդյունքների հիման վրա՝ խուսափելով նախորդ ծրագրերի հետ անհարկի կրկնությունից և զգալի «հավելյալ արժեք» ապահովեն նախորդ ծրագրերից: Մա հատկապես կարևոր է, երբ նման ծրագրերից բոլորն էլ ֆինանսավորում ստանում են միևնույն աղբյուրից, օրինակ՝ ԵՄ-ից:

2 ՀԱՐՑԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲՈՒՀ)-ԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՄԱՍՆԱՎՈՐ ԲՈՒՀԵՐԻ ԹՎԻ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ

2.1 Փաստեր Հարցազրույցներից/Հանդիպումներից

ԿԳՆ

2.1.1 Հայաստանը համեմատաբար փոքր երկիր է (3 մլն բնակչությամբ): Գրականության նախնական վերանայման ընթացքում (տես .2.2.1 և 2.2.2 ստորև) փորձագետները զարմացած էին, թե որքան մեծ քանակությամբ բուհեր կան Հայաստանում: Բուհերի՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր բուհերի թիվը բավականին մեծ է թվացել նրանց, և նրանք ուսումնասիրել են այս խնդիրը Կրթության և գիտության փոխնախարարի հետ:

Փոխնախարարը նշել է, որ եղել է պետական համալսարաններ իրար միացնելու երկու փորձ, սակայն ձուլումը չի իրականացվել: Պարզվել է, որ առկա է պետական համալսարաններում աճող թափուր աշխատատեղերի հետ կապված երկարաժամկետ խնդիր, որը չի վերաբերում իրավաբանության, բժշկության, տնտեսագիտության և միջազգային հարաբերությունների առարկաներին, այլ այնպիսի առարկաներին, ինչպիսիք են գյուղատնտեսությունը և ճարտարագիտությունը: Փորձեր են արվում այս խնդիրը լուծելու ուղղությամբ՝ օրինակ սահմանելով այս առարկաների գծով ավելի մեծ պետական կրթաթոշակներ:

Փոխնախարարը նաև նշել է, որ մասնավոր համալսարանների թիվը արդեն զգալիորեն նվազել է՝ մոտավորապես 70-ից՝ 30-ը: Մասնավոր բուհերը փակվել կամ ձուլվել են: Սա կապված է ՀՀ Կրթության և գիտության նախարարության (ԿԳՆ) կողմից պետական պահանջների հիման վրա լիցենզավորման խստացման, ինչպես նաև մասնավոր համալսարանների դիմորդների թվի նվազման հետ: Հավատարմագրումը և միջազգային փորձագետների ուղեցույցները կիրառվել են ինչպես մասնավոր, այնպես էլ պետական համալսարանների նկատմամբ (տես բաժիններ 3-րդ և 4-րդ ստորև): Համալսարանական ընդունելության կենտրոնացված համակարգը (տես բաժին 9 ստորև), կիրառվել է ինչպես մասնավոր, այնպես էլ պետական համալսարանների համար՝ համենայն դեպս ստացիոնար համակարգում սովորել ցանկացողների համար: Ընդհանուր առմամբ, չկար լուրջ մտահոգություն՝ կապված մասնավոր համալսարանների հետ:

Միջազգային կազմակերպություններ

2.1.2 Միջազգային կազմակերպություններից մեկի ներկայացուցիչը, հանդիպելով փորձագետների հետ, ընդգծել է, որ եղել է մասնավոր համալսարանների թվի զգալի կրճատում, 2007 թ., վերջիններիս թիվը 78-ից դարձել է 30՝ կապված ԿԳՆ լիցենզավորման հետ: Մասնավոր համալսարանները փակվել են, իսկ ուսանողները տեղափոխվել այլ հաստատություններ, թեև այս ներկայացուցիչը նշել է, որ մասնավոր բուհերի միաձուլման ընդամենը մեկ դեպք է եղել: Մասնավոր համալսարանների համար չկար ուսուցման երրորդ փուլի՝ դոկտորական աստիճան առաջարկելու պահանջ, և բազմաթիվ համալսարաններ առաջարկում էին միայն առաջին երկու աստիճանները: Սակայն այս ներկայացուցիչ կարծիքով մասնավոր համալսարանների ոլորտում չի եղել որևէ խնդիր՝ կապված կեղծված աստիճանի և դիպլոմների հետ:

2.1.3 Մեկ այլ միջազգային կազմակերպության ներկայացուցիչ նշել է, որ իսկապես ցածր է ընդունելության գնահատականների շեմը մասնավոր համալսարաններում:

Ուսանողական խմբերի ավագ ներկայացուցիչներ

2.1.4 Ուսանողական խմբերի ավագ ներկայացուցիչներ հետ հանդիպման ընթացքում, ուսանողները հատկապես շեշտել են կոռուպցիայի խնդիրը պետական համալսարաններում: Կոռուպցիան մասնավոր համալսարաններում կարծես թե նրանց համար մեծ խնդիր չէ: Իրենց կարծիքով, մասնավոր համալսարանները ունեն ավելի քիչ ուսանողներ և հետևաբար ավելի քիչ են կոռուպացված:

2.2 Փաստեր գրականությունից

2012թվականի Տեմպուսի զեկույցը

2.2.1 2012թվականի Տեմպուսի զեկույցը ընդգծել է բուհերի և հատկապես մասնավոր բուհերի մեծ թիվը: 2012թ հուլիսի այս զեկույցում նշված են շուրջ 26 բուհեր: դրանցից 16-ը՝ իրենց 14 մասնաճյուղերով, պատկանում են ԿԳՆ-ին, 4-ը հիմնադրված միջպետական համաձայնագրերի հիման վրա, ունեն պետական մասնակցություն և ֆինանսավորված են ԿԳՆ-ի կողմից, 2-ը՝ ՊՆ համակարգում, մեկական բուհ՝ ուստիկանությունում, ԱԻՆ-ում, քաղաքացիական ծառայության խորհրդում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում (Տեմպուս 2012 թ., էջ4): 2010/2011թթ 91.404 ուսանողներ էին սովորում պետական բուհերում, և 19.599 ուսանող՝ 41 մասնավոր բուհերում (տե՛ս նույն տեղում):

2013թ Համաշխարհային բանկի զեկույցը

2.2.2 2013թ-ի Համաշխարհային բանկի զեկույցում նույնպես ընդգծվել է պետական բուհերի թիվը և զգալի ուշադրություն է հատկացվել մասնավոր բուհերի շուրջ առաջացած խնդիրներին: 2013 թ. հունվարին կազմված այս զեկույցում նշվում են շուրջ 23 պետական բուհեր՝ 2012 թ. կեսերի դրությամբ (19 պետական և 4 միջկառավարական), որտեղ 95.000 ուսանող սովորում են պետական բուհերում և 8.700 ուսանող՝ միջկառավարական բուհերում (Համաշխարհային բանկ 2013 թ. էջ 11):

Համաշխարհային բանկի զեկույցում քննարկվել են նաև 48 մասնավոր բուհերը (39՝ մասնավոր և 9՝ օտարերկրյա բուհերի մասնաճյուղեր), որտեղ 20.000 ուսանող սովորում են տեղական մասնավոր բուհերում և 3000 ուսանող՝ օտարերկրյա բուհերի մասնաճյուղերում (տե՛ս նույն տեղում, էջ 11): Զեկույցում նշվել է, որ բոլոր մասնավոր բուհերը Հայաստանում, բացառությամբ երկու հիմնադրամների, առևտրային կազմակերպություններ են (տե՛ս նույն տեղում, էջ 14): Երբ մասնավոր բուհերը սկսեցին պահանջել, որպեսզի դիմորդները հանձնեն պետական միասնական ավարտական քննությունները, մասնավոր բուհեր ընդունվողների թիվը կտրուկ նվազեց մինչև 72-ը 2012 թվականին՝ համեմատած նախորդ տարիների մի քանի հազարների հետ (էջ 30): Երբ համեմատում ենք կառավարության՝ պետական և մասնավոր բուհերի ֆինանսական կարգավորումը, տեսնում ենք, որ պետությունը ամենևին չի կարգավորում մասնավոր բուհերի ֆինանսավորումը. ֆինանսական շիտակության ապացուցումը կատարվում է զուտ համապատասխան բուհերի նախաձեռնությամբ (տե՛ս նույն տեղում, էջ 36):

2.3 Փաստերը համախմբելը

2.3.1 Չնայած ԿԳՆ փոխնախարարի նշած տեսակետներին, փորձագետները, այնուամենայնիվ, կարծում են, որ պետական բուհերի թվաքանակը չափազանց մեծ է լինելու Հայաստանում: Մասնավորապես, նրանք հարցականի տակ են դնում այն հանգամանքը, թե արդյոք բոլոր գործող պետական բուհերը բավական մեծ են, որպեսզի ապահովեն «ցանկալի արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ բավարար թվաքանակ», որն անհրաժեշտ է իրական «միջազգային կարգի» հետազոտական աշխատանքների և ժամանակակից որակյալ դասավանդման և ուսուցման միջավայր ապահովելու համար: Նրանք նաև ենթադրում են, որ քիչ թվով առավել խոշոր բուհեր ձեռք կբերեն «ծավալի հաշվին տնտեսման ազդեցության» առավելություններ ազգային կառավարության ֆինանսական միջոցների հաշվին:

Չնայած փոխնախարարի մեկնաբանությանը, որ մասնավոր բուհերի բազմաքանակությունը լուրջ մտահոգության առիթ չի տալիս, փորձագետները հարցի տակ են դնում այն հանգամանքը, թե արդյոք այդքան մեծաքանակ և հավանաբար, շատ փոքր մասնավոր բուհերը իսկապես կարող են ապահովել «ցանկալի արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ բավարար թվաքանակ» հետազոտական և գիտական գործունեության համար, որն անհրաժեշտ է ԲԿ որակյալ ուսուցում և դասավանդում ապահովելու համար, հատկապես, երբ խոսքը վերաբերվում է «համալսարան»-ի կարգավիճակին:

Առաջարկություններ 2-րդ բաժնից

Այս բաժնի հիմնական հայեցակետերի բովանդակության և վերլուծության արդյունքում կատարվել են հետևյալ հատուկ առաջարկությունները՝

Առաջարկություն 2(ա).

ՀՀ կառավարությունը պետք է ստանձնի պետական համալսարանների թիվը ԲԿ համակարգում հիմնարար կերպով վերանայելու պարտավորություն: Այդպիսի վերանայում կատարելիս՝ լիարժեք ուշադրություն պետք է դարձվի որակը բարձրացնելու և ֆինանսավորման պակասի համար գործադրվող ճնշումները թուլացնելու ներուժին, որին կարելի է հանգել միավորման կամ փակման միջոցով պետական համալսարանների թվի կրճատման արդյունքում:

Առաջարկություն 2(բ).

ՀՀ կառավարությունը պետք է նաև սկզբունքային վերանայումներ ձեռնարկի մասնավոր բուհերի հատվածում: Նման վերանայումը պետք է ուսումնասիրի, թե արդյոք մասնավոր բուհերի ներկայիս թիվը ընդունելի է, արդյոք կայուն լիցենզավորման և որակի ապահովման մոտեցումներ են կիրառվում, որոնք

համապատասխանում են ժամանակակից եվրոպական չափորոշիչներին (այդ թվում՝ հարկ եղած դեպքում՝ համալսարանի կարգավիճակ ստանալու մասին չափանիշներին):

3 ԲԿ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԻԴՐՆԵՐԸ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Փաստեր հարցազրույցներից/հանդիպումներից

ԿԳՆ

3.1.1 Գրականության նախնական վերանայման հիման վրա (տես 3.2.1-3.2.3 ստորև), փորձագետները փաստարկներ են հայտնաբերել, որ ՀՀ կառավարությունը չափազանց շատ է ներգրավված բուհերի կառավարման մեջ, ինչով սահմանափակում է բուհերի ինքնավարությունը: Նրանք ուսումնասիրել են այդ խնդիրները Կրթության և գիտության փոխնախարարի հետ:

Փոխնախարարը անդրադարձել է ԵՄ Թվինինգ ծրագրի զուգահեռաբար կատարվող աշխատանքներին՝ կապված կրթության ոլորտի օրենսդրության, այդ թվում, թափանցիկությանը և բարեվարքության խնդիրների վերանայման հետ: Նա նշել է, որ որոշ համալսարանների կառավարման մարմինների անդամներ կարող են լինել գործատուներ, այլ ոչ միայն կառավարության և խորհրդարանի անդամներ: Սակայն նա վճռականորեն պնդել է, որ նախարարական ամբիոնի կառավարման մարմինները ոչ թե վերահսկողության միջոց են, այլ ցույց են տալիս բուհական համակարգի իրական կարևորությունը: Սակայն, մյուս կողմից, նա նշել է, որ կառավարման խորհուրդները կարող են կրկին վերանայվել, օրինակ, կարելի է քննարկել նրանց անդամների քանակը կրճատելու խնդիրը:

Միջազգային կազմակերպություններ

3.1.2 Բուհերի կառավարման մարմինների «քաղաքականացված» բնույթի մասին խոսելիս՝ փորձագետները հանդիպել են միջազգային կազմակերպության մի ներկայացուցչի, ով ակնհայտ համակրանք էր տածում այն գաղափարի նկատմամբ, թե քաղաքական գործիչների ներգրավվածությունը բուհական համակարգի կառավարման մեջ Հայաստանի հասարակության մեջ ընկալվում է որպես կառավարության կողմից բուհերին վերագրվող կարևորության նշան:

Այդ կազմակերպության ներկայացուցիչները ընդգծեցին նաև համալսարանի կառավարման խնդիրների հետ կապված իրավական բարդությունները: Նրանք հիշատակեցին «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքը (ՊՈԱԿ) և դրա հետ կապված խնդիրները, քանի որ այդ օրենքը գրվել է շատ ավելի վաղ, քան սկսվել է կիրառվել համալսարանների նկատմամբ: Նրանք նաև

նշել են «Հիմնադրամների մասին» օրենքը: Մա կամրապնդի ինքնավարությունն ու հաշվետվողականությունը, ինչպես նաև կօգնի համալսարաններին ծավալել առևտրային գործունեություն:

3.1.3 Մեկ այլ միջազգային կազմակերպության ներկայացուցիչ, որին հանդիպել են փորձագետները մեկնաբանել է, որ խորհրդի ուսանող անդամների 25%-ը պետք է հավանության ստանա անդամության համար և շարունակում են հանդիսանալ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Ըստ այդ ներկայացուցիչների՝ ԲԿ համակարգը ընդհանուր առմամբ դեմ է փոփոխությունների և խստորեն դիմադրում է ցանկացած տիպի փոփոխության:

3.1.4 Երրորդ միջազգային կազմակերպության ներկայացուցիչը հետաքրքիր և ավելի լայն քաղաքական համատեքստ ապահովեց նմանատիպ հարցերի համար: Այս ներկայացուցիչը խոսեց այն մասին, որ Հայաստանը պետք է «ստեղծի տարածք, որտեղ պոտենցիալ առաջնորդները դառնան պրոֆեսիոնալ առաջնորդներ», ինչպես նաև նշեց, որ սա կարևոր է ԲԿ կառավարման համար:

3.1.5 Մնացած կազմակերպությունների ներկայացուցիչները շատ քննադատաբար մոտեցան ներկայիս քաղաքական համատեքստին՝ ներկայացնելով ընդհանուր տեսակետ, որ կառավարությունը ցանկանում է պահպանել իր ընդհանուր վերահսկողությունը ԲԿ նկատմամբ, այլ ոչ թե կատարել հիմնարար բարեփոխումներ, որոնք կարող են լիազորություններ տալ այլ շահագրգիռ կողմերի:

Ավելի կոնկրետ, այդ ներկայացուցիչները կարծես ասում էին, որ ՀՀ կառավարությունը ընդհանուր առմամբ գոհ է վերջին զարգացումներից (հիմնականում «Բոլոնիայի բարեփոխումներից»)՝ արձագանքելով, որ անհրաժեշտ է նոր միջազգային ֆինանսավորում՝ այս ոլորտում հետագա աշխատանքները խթանելու համար:

Այս ներկայացուցիչները, կարծես, արդեն հիասթափվել են «Բոլոնյան բարեփոխումներից»: Նրանք ասել են, որ «Բոլոնյան համակարգի» զարգացումներ տեղի են ունեցել սոսկ պաշտոնական մակարդակով, ըստ էության, վերաբերվել են միայն վարկային համակարգերին, և այլն ... Որակի ապահովման նախաձեռնությունները չեն ունեցել ցանկալի ազդեցություն՝ օրինակ, կապված ուսանողական մասնակցության և բուհերում ուսանողների գնահատման հետ:

3.2 Փաստեր գրականությունից

2012թվականի Տեմպուսի զեկույցը

3.2.1 2012 Տեմպուսի զեկույցում ԲԿ համակարգը բնութագրվել է որպես չափից դուրս կարգավորվող համակարգ, որտեղ շեշտը դրված է կառավարության իշխանության և ոչ թե ինստիտուցիոնալ ինքնավարության վրա և, մասնավորապես, ընդգծվել է, կառավարության ազդեցությունը համալսարանի կառավարման մարմինների վրա:

Մասնավորապես, զեկույցում նշվում է, որ «Ինստիտուտի խորհրդի» (բուհի կառավարման մարմին) կազմը և անդամակցությունը սահմանվում է կառավարության կողմից ընդունվող կանոնակարգերով: Օրինակ, չնայած ռեկտորը ընտրվում է ինստիտուտի խորհրդի կողմից «բաց մրցակցության/քվեարկության ընթացքում», այնուամենայնիվ, «ընտրությունների արդյունքները պետք է հաստատվեն կառավարության կողմից» (Տեմպուս 2012թ., էջեր 4-5):

2013թ Համաշխարհային բանկի զեկույցը

3.2.2 2013թ Համաշխարհային բանկի զեկույցում նույնպես լիովին քննարկվել է բուհերի կարգավորող դաշտի հարցը, այդ թվում, ինստիտուցիոնալ ինքնավարության վերաբերյալ սահմանափակումները և կառավարության վերահսկողության չափը (Համաշխարհային բանկի 2013 թ էջեր 1, 8-9):

Ըստ Համաշխարհային բանկի զեկույցի, խնդիրներ կան կապված բուհերի կարգավիճակի՝ հետ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ՊՈԱԿ) մասին» օրենքի շրջանակներում: Ձեկույցում նշված է, որ պետական բուհերը այժմ ունեն ՊՈԱԿ-ի իրավական կարգավիճակ 2002-2003թթ-ից և կարգավորվում են այդ օրենքով: Սա հակասում է իրավական ինքնավարությանը, որը կարծես տրվել է բուհերին «Կրթության մասին» օրենքի համաձայն, քանի որ ՊՈԱԿ-ների մասին օրենքը «հիմնադրին» (այսինքն, կառավարությանը) տալիս է ՊՈԱԿ-ների (այս դեպքում պետական բուհերի) գործունեության և կառավարման մասին վերջնական որոշումներ ընդունելու լիազորություններ (տե՛ս նույն տեղում, պարբ.14, էջ 9):

Կա նաև մի կոնկրետ խնդիր՝ կապված «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի հետ: Ձեկույցում պնդում են, որ այս օրենքը նույնպես կառավարությանը, որպես պետական բուհերի հիմնադրի, իրավունք է տալիս այդ բուհերի փոխարեն կայացնել ցանկացած որոշում (տե՛ս նույն տեղում, պարբ. 15, էջ 9):

Պետական բուհերում կառավարման մարմինների, ինչպիսիք են Խորհրդի, Գիտական խորհրդի (կամ Ակադեմիական խորհրդի) և Ռեկտորատի առնչությամբ Համաշխարհային բանկի զեկույցում կատարվում է եզրակացություն, որ «այս մարմիններին վերաբերող կանոնները ուշադիր ուսումնասիրելիս կբացահայտվի կառավարության ճնշող ներկայությունը համալսարանի ղեկավարման և կառավարման մեջ, ինչը վտանգում է համալսարանի ինքնավարությունը: Սա կատարվում է ի հակասություն ինքնավարության մասին այն ակնհայտ հայտարարությունների, որոնք սահմանված են «Բարձրագույն կրթության» մասին օրենքի 15-րդ հոդվածով (տե՛ս նույն տեղում, պարբ.39, էջ 24): Այս վերլուծությունը ավելի լայնորեն է ներկայացված է Համաշխարհային բանկի զեկույցի 25-28 էջերում , այդ թվում, կատարվել է դիտողություն, որ «ռեկտորների ընտրությունը, ըստ

էության մրցակցային և ոչ քաղաքական գործընթաց է տեսականում, բայց իրականում զգացվում է բավականին մեծ քաղաքական ազդեցություն» (էջ 27):

2013թ Բաց հասարակության զեկույց

- 3.2.3 2013 թ Բաց հասարակության հիմնադրամի զեկույցը քննարկել է նաև ԲԿ «վերևից ներքև» կառավարման բնույթը (Բաց հասարակություն, 2013թ, էջ 4)՝ ընդգծելով կառավարության ազդեցությունը համալսարանի կառավարման մարմինների վրա (էջ 12), ինչպես նաև համալսարանների բյուջեների վերահսկողությունը կառավարության կողմից (էջ 13): Ձեկույցում ասվում է, որ Բոլոնիայի բարեփոխումները եղել են «մեխանիկական», և արդյունավետորեն չեն հակազդել «վերևից ներքև» կառավարման հատկանիշներին (տե՛ս նույն տեղում, էջեր 7-9):

Աթենա ծրագիր

- 3.2.4 Աթենա ծրագիրը խթանում է լավագույն գործելակերպերը և նպաստում է կառավարման ներառական մոտեցումների զարգացմանը («Ի՞նչ է Աթենան» կայքէջ): Աթենա ծրագիրը օգտագործել է Եվրոպական համալսարանների ասոցիացիայի մոտեցումները համալսարանների ինքնավարությունը գնահատելու և զարգացնելու համար: Սա ներառում է համալսարանի ինքնավարության գնահատման քարտը:

Ծրագրի երկրորդ սեմինար-վերապատրաստումը անցկացվեց 2014թ. նոյեմբերին Կոնիքրայում, Պորտուգալիա, որի հիմնական թեման էր «Ինքնավարություն և կառավարում» (տե՛ս Աթենայի կայքէջը): Սեմինարի պրեզենտացիաները, մասնավորապես, վերաբերում էին համալսարանների աճող ինքնավարությանը հասնելու պահանջներին: Այս սեմինարում Հայաստանը 25-րդ տեղում էր, հավաքելով «Կազմակերպական ինքնավարության քարտի» 47%-ը, իսկ 1-ին տեղում էր Մեծ Բրիտանիան՝ 100% (տե՛ս Թոմաս Էսթերման, Եվրոպական համալսարանների ասոցիացիա, «Համալսարանական ինքնավարություն և ինստիտուցիոնալ կառավարում», Աթենայի կայքէջը): Հայաստանում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բուհական կառավարման մարմինների 50% - ը կառավարության և նախարարության ներկայացուցիչներ են, և որ համալսարանները չեն կարողանում ազատորեն ընտրել կառավարման դրսի մարմիններ՝ կախված իրավական կարգավիճակից (տե՛ս նույն տեղում):

Այս թեմաները քննարկվել են նաև Աթենայի Հայաստանյան ազգային սեմինարի ժամանակ 2014թ-ի մարտին՝ Երևանում: Բացի այդ, ազգային սեմինարի ընթացքում շեշտ դրվեց այն հանգամանքի վրա, որ ռեկտորները պաշտոնապես պետական աշխատակիցներ են (որը պահանջվում է ընտրությունների արդյունքները հաստատելու համար), և որ համալսարաններից պահանջում են թույլտվություն նախարարության կողմից ներքին ակադեմիական կառույցները

որոշելու համար (տե՛ս Թոմաս Էսթերման, Եվրոպայի համալսարանների ասոցացիա , «Համալսարանների ինքնավարության կարգավիճակը Հայաստանում. արտաքին վերլուծություն», Աթենայի կայքէջ):

Լա ՄԱՆՇ ծրագիրը

3.2.5 Լա ՄԱՆՇ ծրագրի արտաքին գնահատման հաշվետվություն. Առաջնորդություն և կառավարման հմտություններն ու մոդելները բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում (2013թ - տես Լա ՄԱՆՇ կայքէջը) ներառում է «Առաջնորդություն և կառավարման հմտությունները և մոդելները Հայաստանում» գլուխը (էջեր 9-19): Սույն գլխում ավելի շատ բարձրացված են ՄՌ հարցերի վերաբերյալ հարցեր (տե՛ս բաժին 7 ստորև):

Սակայն, գլուխը նաև ներառում է կառավարման ավելի լայն հարցերի վերլուծություն: Ընդգծված են որոշ դրական զարգացումներ: Ավելի լայն կառավարման հարցերի առումով, հղում է արված գործընկեր համալսարաններից մեկին՝ ընդգծելով «բաց համալսարանական համայնքի ու ընդհանուր պատասխանատվության առկայության կարևորությունը» (էջ 10), ինչպես նաև ընդգծվել է, որ բոլոր չորս գործընկեր համալսարանները անց են կացնում տարբեր գերատեսչական խորհուրդների կանոնավոր նիստեր, որոնք ներառում են ներկայացուցիչներ ինչպես ակադեմիական, այնպես էլ ոչ ակադեմիական անձնակազմից և ուսանողներից՝ այսպիսով խրախուսելով մասնակցությունը իրենց համալսարանի կառավարմանը (տե՛ս նույն տեղում):

Սակայն, մյուս կողմից, քննադատական մեկնաբանություններ նույնպես արվել են: Նկատվել է, որ «հաստատումը տրվում է ... միայն բոլոր չորս բուհերի ամենաբարձր մակարդակի որոշմամբ» (էջ 11) և «Հայաստանում կրթական համակարգի և համալսարանների պահպանողական բնույթը, ընդհանուր առմամբ, զգալի խոչընդոտ է» փոփոխությունների իրականացման համար (էջեր 12-13):

3.3 Փորձագետների՝ հարցազրույցներից/հանդիպումներից և գրականությունից վերցված ապացույցների ամփոփում:

3.3.1 ԿԳ փոխնախարարի ընդունած դիրքորոշումը, կարծես այն է, որ կառավարության ներկայիս դերը բուհերի կառավարման մեջ արտացոլում է այն նշանակությունը, որը կառավարությունը տալիս է կրթական համակարգին, այլ ոչ թե ցանկություն է կառավարելու համակարգը: Սակայն, ընդհանուր առմամբ միջազգային կազմակերպությունների արտահայտած տեսակետները և գրականության ուսումնասիրությունը ակնհայտորեն մատնանշում են խնդիրներ կապված ԲԿ կառավարման մեջ կառավարության չափից մեծ ներգրավվածության հետ : Այս փաստերը գնահատելով՝ փորձագետները պաշտպանում են այն տեսակետը, որ կառավարությունը պետք է վերանայի իր դերը ԲԿ կառավարման գործում, որի նպատակն պետք է լինի բուհերի համար ապահովել համապատասխան

ինքնավարություն: Փորձագետների համոզմամբ ՀՀ կառավարությունը պետք է այլ կերպ ցույց տա ԲԿ կարևորությունը, օրինակ, համակարգի համար ապահովելով ֆինանսական բարենպաստ պայմաններ:

3.4 ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագիր

3.4.1 Ինչպես արդեն նշվել է ներածական մասում, կարևոր է այն, որ Եվրոպայի խորհրդի ընթացիկ ծրագրում առկա լինեն տեղեկություններ «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության զարգացում եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով (ԵԲԿՏ)» ԵՄ թվինինգ աշխատանքների և արդյունքների վերաբերյալ և որ Եվրոպայի խորհրդի ընթացիկ ծրագիրը համատեղելի լինի դրանց (ԵՄ 2013 թ.):

Փորձագետները հասկանում են, որ այս ծրագրի բաղադրիչներից մեկը ՀՀ «բարձրագույն ուսումնական հաստատությունների վերաբերյալ օրենքի, ինչպես նաև ազգային որակավորման իրավական դաշտի մշակման և պահպանման նպատակով ինստիտուցիոնալ պայմանավորվածությունների վերլուծությունն է», ինչպես նաև 1.1.2 գործողությունն է՝ «Բարձրագույն ուսումնական համակարգի մասին ՀՀ օրենսդրության վերանայում» և «Բացթողումների գնահատման հաշվետվության և առաջարկությունների մշակում»:

Փորձագետները տեսել են այս զեկույցը, բայց միայն նախնական տարբերակով, որը ներառում է բացահայտ դիտողություն, որ այս նախնական զեկույցը կդառնա «Բացթողումների գնահատման համատեղ վերջնական զեկույց», եթե և միայն այն բանից հետո, երբ ԿԳՆ-ն այստեղ կտեղադրի իր մեկնաբանությունները պատշաճ եղանակով: Հետևաբար, փորձագետները գտնում են, որ կարող են միայն օգտվել այս նախնական հաշվետվությունից ոչ պաշտոնապես և պայմանականորեն:

Սակայն, քանի որ սույն զեկույցով, ի վերջո, կոչ է արվում ԲԿ վերաբերյալ նոր օրենք ստեղծել (փոխարինելով 1999 Կրթության մասին ընդհանուր օրենքը և 2004 թ. Բարձրագույն կրթության մասին օրենքը), ուստի փորձագետները կաջակցեն դրան, հատկապես, որ ցանկացած նման օրենսդրություն՝

տրամադրում է ամալսարանի, ինչպես նաև ցանկացած այլ տեսակի բուհի կարգավիճակ ստանալու չափանիշների հստակ սահմանում, եթե շարունակվի լիարժեք և հստակ սահմանում է այն չափորոշիչները, որոնց մասնավոր բուհերը պետք է համապատասխանեն՝ հավասարեցնելով դրանք այն չափորոշիչներին, որոնք պահանջվում են պետական բուհերի դեպքում. բավարար կերպով ապահովում է պետական բուհերի բավականաչափ ինքնավարությունը, հատկապես խուսափելով կենտրոնական կառավարական մարմինների կողմից չափից մեծ դերակատարումը բուհերի կառավարման մարմիններում. մանրամասն ուսումնասիրում է պետական համալսարանների կողմից հիմնադրամի կարգավիճակ ստանալու հետևանքները:

3.5 Փորձագետների սեփական վերլուծությունը Հայաստանի կառավարության իրավական փաստաթղթերի վերաբերյալ

3.5.1 Ինչպես վերը նշվեց, փորձագետները հասկանում են, որ վերը նշված ԵՄ զեկույցում առաջարկվում է ստեղծել նոր առաջնային օրենք բարձրագույն կրթության վերաբերյալ փոխարինելու ներկայիս 1999թ «Կրթության մասին» ընդհանուր օրենքին և 2004թ. «Բարձրագույն կրթության մասին» օրենքին: Նմանատիպ առաջարկությանն աջակցելուց բացի, փորձագետները նաև պաշտպանում են դրանք:

Փորձագետներին տրամադրվել են մի շարք թարգմանված իրավական փաստաթղթեր, որոնք, ինչպես պարզ է նրանց համար, արդեն հասանելի են եղել ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի համար: Դրանք ներառում են.

«Կրթության մասին» օրենքը, 1999թ.,

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը 2004թ.,

Մի շարք կառավարական որոշումներ և կարգադրություններ,

Կառավարության որոշում թիվ 1183, 2006թ (Բուհերի ուսանողներին ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման վերաբերյալ կանոնակարգի մասին), Հրաման թիվ 1193-Ն 2007թ. (Մագիստրոսական ծրագրերի ընդունման և ուսուցման մասին), Հրաման թիվ Ն-1194 2007թ (Բուհերում կես դրույքով անդամագրման մասին), Հրաման թիվ 1240-Ն 2011թ (Բուհերում ակադեմիական շարժունության մասին), Հրաման թիվ 1197-Ն 2011թ (Բուհերի շրջանավարտների ատեստավորման մասին), Հրաման թիվ 1242-Ն 2011թ (Բուհերից ուսանողների հեռացման և վերականգնման մասին), Որոշում թիվ 597-Ն 2012թ (Բուհերում բակալավրի ծրագրի ընդունման մասին): (Այստեղ բերված են յուրաքանչյուր որոշման և հրամանի կրճատված անվանումները, ամբողջական անվանումները ներկայացված են օգտագործված գրականության մեջ):

Փորձագետները կատարել են իրենց վերլուծությունը այդ փաստաթղթերի առնչությամբ: Նրանք կցանկանային այժմ նշել այդ փաստաթղթերի հետ կապված հետևյալ խնդիրները, որոնք, ինչպես առաջարկում են, պետք է լուծվեն՝ այդ օրենքներից (որոշումներից ու հրամանների) դեպի բարձրագույն կրթության վերաբերյալ ցանկացած նոր առաջնային օրենք շարժվելիս՝

«Կրթության մասին» օրենքը, 1999թ

3.5.2 «Կրթության մասին» 1999թ - ի օրենքում՝ 3-րդ հոդվածի 10-13 կետերում բերվում են «համալսարան»-ի, «ինստիտուտ»-ի, «ակադեմիա»-ի և «կոնսերվատորիա»-ի սահմանումները: Այս սահմանումները համեմատաբար կարճ են: Ամբողջությամբ պարզ չէ, թե ինչով են «ինստիտուտները» և «ակադեմիաները» տարբերվում

«համալսարաններից», և ինչու են հարկավոր «ինստիտուտ» և «ակադեմիա» տերմինները ի հավելումն «համալսարան» տերմինի: Մասնավորապես, միանգամայն պարզ չէ, որտեղ պետք է «հետբուհական կրթության» հղումները համապատասխան ինստիտուտի տան Բոլոնյան տերմիններով ասած «երրորդ փուլի (այսինքն, դոկտորական) կոչում տվող ինստիտուտի կարգավիճակ: 3-րդ հոդվածի 23-րդ կետին հղում անելիս հարց է առաջանում, թե ինչպես է Հայաստանի ԲԿ համակարգում օգտագործվում «Բոլոնյան դոկտորական համարժեքը» նախկին խորհրդային համակարգի տերմինաբանության համատեքստում, և ինչպես է օգտագործվում «հետազոտող» տերմինը որպես հետբուհական որակավորման աստիճան:

Նաև 1999թ օրենքը կրկնվող հղումներ է պարունակում՝ կապված «միջին մասնագիտական կրթության» և «միջին մասնագիտական կրթական հաստատությունների» հետ (օրինակ, 14-րդ հոդվածի 3, 7, 8-րդ կետեր, 15-րդ հոդվածի 4-րդ կետ, 21-րդ հոդվածի 1-ին կետ, 23-րդ հոդված): Ըստ երևույթին, «միջին մասնագիտական կրթություն» չի առաջարկվում բուհերում, սակայն Հոդված 24-ի, 6-րդ կետով նշվում է, որ բուհերը կարող են նաև իրականացնել միջին մասնագիտական կրթական ծրագրեր: Հետևաբար, «միջին մասնագիտական կրթության» և ԲԿ փոխհարաբերությունները կարող էին ավելի հստակ լինել, հատկապես Բոլոնյան համարժեքության տեսանկյունից:

Բուհական համակարգի հետ կապված ավելի կրկնվող հղումներ կան «Բարձրագույն մասնագիտական կրթություն» տերմինին, օրինակ, 10-րդ հոդվածի , 3-րդ կետի 3-րդ ենթակետ, 13-րդ հոդված, 14-րդ հոդվածի 7,8-րդ մաս, 21-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդված: Լիովին պարզ չէ, թե արդյոք այս հղումները վերաբերում են բոլոր բուհերին, թե միայն «մասնագիտական» ենթախմբին: Այս նույն կետը վերաբերում է «հետբուհական մասնագիտական կրթությանը» (օրինակ, 25-րդ հոդվածի, 2-րդ կետ): Մասնավորապես, 24-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված «դիպլոմավորված մասնագետ»-ի իմաստը կարող էր ավելի պարզ լինել:

1999թ օրենքի 37-րդ հոդվածում, և, 43-րդ հոդվածի, 7-րդ կետում հղում է արվում «կրթության պետական տեսչությանը»: Ենթադրվում է, որ սա չի տարածվում բուհերի վրա և վերաբերվում է միայն նախաբուհական դպրոցներին և այլն... Սակայն, սա այժմ կարելի է ավելի հստակեցնել դա՝ հատկապես ՈԱԱԿ-ի հետ փոխհարաբերության առումով:

1999 թ օրենքի 41-րդ հոդվածը, ինչպես և 43-րդ հոդվածի 1-ին կետը վերաբերում է կրթական գործունեության լիցենզավորմանը: Սակայն, 41-րդ հոդվածում միայն հղում է արվում «Հայաստանի Հանրապետության կառավարությանը» և լրացուցիչ մանրամասներ չի տրամադրում նախատեսված լիցենզավորող մարմնի բնույթի մասին: Լիցենզավորման կարգավիճակը ՈԱԱԿ-ի առնչությամբ այժմ պետք է ավելի հստակեցվի:

1999 թ օրենքի 3-րդ հոդվածի 18-րդ կետը, պարզապես հղում է անում «պետական հավատարմագրման»-ը «մասնագետների պատրաստման որակի» առնչությամբ: Այժմ պետք ավելի լիարժեք հղում կատարվի ՈԱԱԿ-ին: Նմանապես, «պետական հավատարմագրման» մասին 42-րդ հոդվածը այժմ պետք է, մասնավորապես, կապել ՈԱԱԿ-ին և պետք է վերաձևակերպել ՈԱԱԿ-ի անկախության հիմքով:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը 2004թ.

3.5.3 Վերևում ասվածը «մասնագիտական կրթություն» տերմինի մասին ընդհանրապես կիրառելի է 2004թ. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենք օրենքի նկատմամբ: Տերմինը օգտագործվում է հենց օրենքի վերնագրում և օրենքի մեջ, օրինակ՝ 3-րդ հոդվածում, 5-րդ հոդվածում և այլն.. «դիպլոմավորված մասնագետ»-ի հետ կապված կոնկրետ խնդիր ծագում է նաև 2004 թվականի օրենքում, օրինակ՝ 3-րդ հոդվածում:

2004թ-ի օրենքում խնդիր կա նաև կապված, Բոլոնյան տերմիններով ասած, «երրորդ փուլի» կոչում տրամադրելու հետ՝ բուհերի սահմանումների առնչությամբ: Օրինակ, 3-րդ հոդվածի 2-րդ կետը բուհը սահմանում է որպես հաստատություն, որն իրականացնում է «բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրեր»: Այստեղ չկա որևէ հղում դոկտորական «Բոլոնյան երրորդ փուլի համարժեքությանը»: Նմանապես, 5-րդ հոդվածի 2-րդ կետի, 1-ին ենթակետում հղում է կատարվում միայն «բարձրագույն կրթության որակավորման երկաստիճան համակարգին» անցմանը:

Այն հարցը, թե ինչպես է Հայաստանի ԲԿ համակարգում գործածվում «Բոլոնյան դոկտորական համարժեքը»՝ համեմատած նախկին Խորհրդային համակարգի տերմինաբանության հետ, նաև հարց առաջանում կապված 3-րդ հոդվածի, 3-րդ կետի հետ, որում հղում է արվում «ասպիրանտի, հետազոտողի և դոկտորական կամ հետ-դոկտորական հայցորդի ծրագրերի»: Մա Խորհրդային և Բոլոնյան տերմինաբանության բավականին շփոթեցնող համադրություն է: Այս խնդիրը շարունակվում է 3 հոդվածի 7-9-րդ կետերում, որտեղ հղումներ կան ոչ միան «գիտությունների թեկնածու»-ի աստիճանին, այլև «հետ-դոկտորական գիտական աստիճան ունեցողի»: 9-րդ հոդվածի 3-րդ կետը նույնպես ներառում է պոտենցիալ շփոթեցնող հղում «հետբուհական մասնագիտական կրթության՝ հետազոտողի որակավորման աստիճանին»: «Ասպիրանտուրայի ընդունելության» մասին 14-րդ հոդվածի 6-րդ կետը պետք է ավելի մանրամասնի կառավարության դերը՝ կապված մրցակցային ընդունելության քննությունների հետ:

2004-ի օրենքում պարզապես հղում է արվում «պետական հավատարմագմանը» (3 հոդվածի 12 կետ), որն այժմ պետք է ընդարձակվի և հստակ հղում ներառի ՈԱԱԿ-ին: Բացի դա, 1999 թ-ի 42 հոդվածում պետական հավատագրման մոտեցման մասին արեն կատարված դիտողությունները կարելի է կատարել նաև 2004թ-ի օրենքի 13-րդ հոդվածի 3 կետի մասին:

Ի հավելումն, չնայած 5-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետը այժմ հղում է «միջազգային (եվրոպական) չափորոշիչներին» «որակի և ...հավատարմագրման գնահատմանը», այժմ անհարժեշտություն կլինի վերաձևակերպել սա՝ կապելով այն ՈԱԱԿ-ին: 8-րդ հոդվածը քննարկում է «պետական կրթական չափանիշները» բուհերի համար: 8 հոդված-ը տալիս պատշաճ բացատրություն, թե ինչպիսի ընդհանուր նպատակներ և տարրեր պետք է ներառվեն այսպիսի «չափանիշներ»-ում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով փորձագետների արած ընդհանուր մեկնաբանությունները ՈԱԱԿ-ի վերաբերյալ, 8-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է վերաձևակերպվի՝ հստակ սահմանելու համար, որ այդպիսի «չափանիշներ» սահմանելու արտոնություն վերապահվի ՈԱԱԿ-ին: Նույն խնդիրը վերաբերում է «բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի ապահովումը և դրա նկատմամբ պետական վերահսկողությունը» 22 հոդված-ին:

2004թ-ի օրենքի 12-րդ հոդված-ը պարզապես թվարկում է բուհերի տեսակներ՝ առանց տերմիններին որևէ սահմանում տալու:

2004թ-ի օրենքը կարծեք ճանաչում է բուհերի ինքնավարությունը, օրինակ՝ աշխատողների նշանակումներ անելու հետ կապված (տե՛ս 6 հոդվածի 1-ին կետի, 3-րդ ենթակետը): Իքնավարությունը բավականին մանրամասն ճանաչվում է նաև 15-րդ հոդվածում: Այնուամենայնիվ, կան հատուկ հղումներ կառավարության դերի մասին, որը կարող է ցույց տալ բուհերի ինքնավարության պոտենցիալ զգալի սահմանափակումներ՝ կառավարության առնչությամբ: Մասնավորապես, 15-րդ հոդվածի 2-րդ կետում «Խորհրդի [այսինքն, կոլեգիալ կառավարման մարմնի] ձևավորման կարգը սահմանվում է կառավարության կողմից...լիազոր մարմնի ներկայացմամբ»: 4-րդ կետում «ռեկտորի ընտրության արդյունքները հաստատում է հիմնադիրը» (որը, ինչպես փորձագետները հասկանում են, նշանակում է կառավարությունը՝ պետական բուհերի դեպքում):

Բացի այդ 2004թ-ի 21-րդ հոդվածում բերվում է չափազանց մեծ ցուցակ՝ «Պետական իշխանության մարմինների իրավասությունը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում»

1999 թ-ի օրենքի 41-րդ և 43-րդ հոդվածներում լիցենզավորման նկատմամբ մոտեցման մասին արդեն արվախ բույն մեկնաբանություններն կարելի է կատարել 2004թ-ի օրենքի 13 կետի 2-րդ կետ մասին: Բացի այդ 2004թ-ի օրենքում կա մի շատ ամբողջական հոդված (13.1), որը մանրամասնում է, թե ինչպես է «պետական կառավարման համար պատասխանատու մարմինը» զբաղվում լիցենզիաների կասեցման հարցով, և այլն... Այնուամենայնիվ, այն չի ներառում հստակ մանրամասներ համապատասխան «մարմնի» կազմի մասին:

2004-ի օրենքը, կարծես ճանաչում է բուհերի դերը «գիտական հետազոտության» ոլորտում (11-րդ հոդված, 2-րդ կետ): Այս հղումը հետագայում պետք է զարգացվի ցանկացած նոր օրենքում:

2004-ի օրենքում բավականին մանրամասն սահմանվում է պետական կրթաթոշակի, և այլնի, ուսման վարձերի մասին մոտեցումները (6-րդ հոդված, 3-րդ և 4-րդ կետեր): Փորձագետները առաջարկում են, որ այդպիսի մանրամասները ավելի լավ կլինեն ներառել պետական կրթաթոշակների ծրագրերի մասին առանձին փաստաթղթում, այլ ոչ թե բարձրագույն կրթության մասին հիմնական օրենքում:

17-րդ հոդվածի, 3-րդ կետի 4-րդ ենթակետում նշվում է բուհերի համապատասխան կառավարման մարմիններում ուսանողների մասնակցության իրավունքը և 17-րդ հոդվածի 7-րդ կետում նշվում է, որ ուսանողները կարող են «միավորվել ուսանողական խորհուրդներում»: Բայցևայնպես, ավելի շատ մանրամասներ կարող էր տրվել կառավարման մարմիններում ուսանողների դերի և ուսանողական խորհրդի հիմնելու կարգի մասին, որը ներկայումս «հաստատվում է կրթության ոլորտում հանրային կառավարման համար պատասխանատու մարմնի կողմից»: Այս հարցերը կարելի է կապել 10 բաժնի «Ուսանողական մասնակցության» մասին հետագա քննարկմանը:

19-րդ հոդվածի 4-րդ բաժինը շեշտում է, որ «աշխատանքային պայմանագրերը պետք է ստորագրվեն մինչև 5 տարի ժամկետով» և պետք է լինի «մրցակցային ընտրության ընթացակարգ» պայմանագրի ժամկետը «լրանալուց» հետո: Մյուս կողմից նույնպես ասվում է, «կարող է կնքվել նոր աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով, առանց մրցութային ընտրության` ... գիտամանկավարժական գործունեության արդյունքների գնահատման հիման վրա»: Այս հարցերը կարելի է կապել «ՄՌ/աշխատակազմի մոտեցումներ և հարցեր»¹⁰ բաժնի հետագա քննարկմանը:

Կառավարության որոշումներ և հրամաններ

3.5.4 Ինչպես արդեն նշվել է, փորձագետներին տրամադրվել էր կառավարության 2006թ.-ի թիվ 1183-ը որոշումը (Բուհերի ուսանողներին ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման մասին), 2007թ. թիվ 1193-Ն հրամանը (Մագիստրոսական ծրագրերի ընդունման և ուսուցման մասին), 2007թ. թիվ Ն-1194 հրամանը (Բուհերում կես դրույքով անդամագրման մասին), 2011թ. թիվ 1240-Ն որոշումը (Բուհերում ակադեմիական շարժունության մասին). 2011թ. թիվ 1197-Ն հրամանը (Բուհերի շրջանավարտների ատեստավորման մասին), 2011թ. թիվ 1242-Ն հրամանը (Բուհերից ուսանողների հեռացման և վերականգնման մասին), 2012թ. թիվ 597-Ն որոշումը (Բուհերում բակալավրի ծրագրի ընդունման մասին): (Ինչպես և միշտ, այստեղ տրված են կրճատված վերնագրերը, իսկ ամբողջական վերնագրերը կարելի է գտնել օգտագործված գրականության բաժնում):

Նպատակային չէ մանրամասն ուսումնասիրել այս փաստաթղթերը, բայց էական է օգտագործել դրանք` լուսաբանելու կարևոր ընդհանուր կետերը: Ինչպես առաջարկվել է վերևում 2004թ.-ի օրենքում տեղ գտած պետական կրթաթոշակի

մանրամասների վերաբերյալ, փորձագետները առաջարկում են, որ այս փաստաթղթերում ներառված նման մանրամասները ընդգրկվեն առանձին փաստաթղթերում, քան կենտրոնական կառավարության պաշտոնական «որոշումներում» և «հրամաններում»:

Օրինակ, 2006 թ-ի № 1183 պետական որոշումում (Բուհերում ուսանողական նպաստներ և պետական կրթաթոշակներ հատկացնելու կանոնակարգի մասին) կարող է փոխարինվել առանձին, հեշտ օգտագործվող պետական փաստաթղթով, որտեղ ֆորմալ պայմանավորվածությունները մատուցվում են ուսանողներին և նրանց ծնողներին թափանցիկ եղանակով:

Հրաման թիվ 1193-Ն 2007 (Մագիստրոսական ծրագրերի ընդունման և ուսուցման մասին), Հրաման թիվ Ն-1194 2007թ (Բուհերում կես դրույքով անդամագրման մասին), Որոշում թիվ 1240-Ն 2011թ (բուհերում ակադեմիական շարժունության մասին), Հրաման թիվ 1197-Ն 2011թ (Բուհերի շրջանավարտների ատեստավորման մասին), Հրաման թիվ 1242-Ն 2011թ (Բուհերից ուսանողների հեռացման և վերականգնման մասին)՝ սրանցից յուրաքանչյուրը պետք է վերանայվի, որպեսզի պարզ լինի, թե դրանցում ներառված մանրամասները արդյոք ավելի ճիշտ է ներառել բուհերի ոլորտը կարգավորող առանձին իրավական փաստաթղթերում և ոչ թե կառավարական նման հրամաններում/որոշումներում:

№ 597 2012թ որոշումը (Բուհերի բակալավրի ծրագրում ընդունելության մասին) ըստ էության ազգային դպրոցների ավարտական քննությունների մասին է և կարող է տրամադրվել որպես պետական քննական մարմնի առանձին փաստաթուղթ («Գնահատման և թեստավորման կենտրոն»):

ՀՀ կառավարության իրավական փաստաթղթերի վերլուծության ամփոփում

- 3.5.5 Փորձագետները պնդում են, 1999 թվականի Կրթության մասին գործող ընդհանուր օրենքը պետք է փոխարինել փոփոխելու համար և 2004 թվականի «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը 2004թ., Բարձրագույն կրթության մասին նոր առաջնային օրենքով:

Այս նոր օրենքը, իհարկե, պետք է լուծում տա բուհերի ինքնավարությունը երաշխավորելու չափազանց կարևոր խնդրին, ինչպես նաև պետք է լուծի այլ հատուկ հարցեր, որոնք սահմանվել են փորձագետների կողմից՝ գործող օրենքների վերլուծության ժամանակ:

Փորձագետները սատարում են «Հայաստանի Հանրապետության Կրթության մասնագտական մակարդակի բարձրացման՝ ԵՄ-ի Թվինինգ ծրագրի Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի համար (ԵԲԿՏ)» ԵՄ-ի Թվինինգ ծրագրի շրջանակում արված ցանկացած նմանատիպ առաջարկության

Բացի հիմնական օրենքից, փորձագետները նաև պնդում են, կառավարական լրացուցիչ ֆորմալ որոշումները և հրամանները ԲԿ ոլորտում պետք է նվազագույնս օգտագործվեն:

Առաջարկություններ 3 բաժնից

Այս բաժնի հիմնական հայեցակետերի բովանդակության և վերլուծության արդյունքում կատարվել են հետևյալ հատուկ առաջարկությունները՝

Առաջարկություն 3(ա).

Հայաստանում պետք է մշակել բարձրագույն կրթությանը վերաբերվող նոր առաջնային օրենք:

Այդ օրենքով պետք է ամրապնդվի բուհերի պատշաճ ինքնավարությունը՝ ներառելով կառավարության տարանջատումը բուհերի կառավարումից՝ հատկապես բուհերի կառավարման մարմինների անդամակցության մասով: Օրենքը պետք է անդրադառնա նաև բուհերին ավելի մեծ տնտեսական և ֆինանսական գործունեության ազատություն տալու իրավական խնդիրներին, օրինակ՝ կապված Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին (ՊՈԱԿ) գործող օրենքի և հիմնադրամի կարգավիճակ ստանալու հնարավոր քայլերի հետ (տես Առաջարկություն 5 (բ) ստորև):

Այդ օրենքը պետք է նաև ներառի հստակ հղում՝ կապված Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) երաշխավորված ինքնավարության հետ՝ դրանով իսկ երաշխավորելով հավատարմագրման գործընթացում բուհերի ինքնավարությունը (տես՝ Առաջարկություն 4 (ա)՝ ստորև): Օրենքը պետք է նաև հավանություն տա ՈԱԱԿ-ի կողմից մշակված չափորոշիչներին՝ որպես Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում «ազգային չափորոշիչներին»: Օրենքը պետք է նաև արտահայտի հստակ և մանրամասն դիրքորոշում՝ կապված բուհերի լիցենզավորման, և հավատարմագրման ու լիցենզավորման փոխհարաբերության հարցերի հետ: Պետք է մտածել, թե արդյոք որևէ առանձին լիցենզավորման գործընթաց կարող է լինել նույնքան թափանցիկ, որքան լիցենզիայի տրամադրումն է, երբ անձը պարզապես անցնում է ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը:

Սույն օրենքը պետք է նաև ներառի հստակ չափանիշներ Հայաստանում գործող տարբեր տեսակի բուհերի համար: Պետք է մտածել Համալսարան եզրույթից բացի այլ եզրույթների տեղին լինելու, և, որպես համալսարանի կարգավիճակի չափանիշ՝ «երրորդ փուլի» դոկտորական որակավորումներ տրամադրելու հետագա կարգավիճակի մասին: Պետք է մտածել նաև այն մասին, թե արդյոք

ապագայում ՈԱԱԿ-ի փաստաթղթերը, և ոչ թե ներպետական իրավունքը պետք է լինի նման չափանիշների ձևակերպումների հիմնական աղբյուրը:

Այդ օրենքում պետք է նաև հաշվի առնվի լրացումներ կատարելու անհրաժեշտությունը, որոնք կարող են բխել ներքոհիշյալ առաջարկություններից, հատկապես՝ Առաջարկություն 7 (բ) - բուհերի կադրային հարցերի շուրջ, Առաջարկություններ 8 (ա) և 11 - բուհական համակարգում էթիկայի հիմնահարցերի շուրջ, Առաջարկություններ 10 (ա) և (բ) - ուսանողների դիրքի շուրջ:

Առաջարկություն 3(բ).

«Բարձրագույն կրթության մասին» նոր օրենք մշակելիս՝ բուհերի պատշաճ ինքնավարության սկզբունքը պետք է հանգեցնի այն բանին, որ առաջնային օրենքում, ինչպես նաև ենթաօրենսդրության մեջ (կառավարական և նախարարական որոշումներ և հրամաններ և այլն) նվազագույնս ներառվեն կոնկրետ հարցեր, որոնք ավելի ճիշտ է ներառել բուհերի մասով կարգավորող իրավական դաշտում, կամ այլ կազմակերպությունների փաստաթղթերում, ինչպիսին է ՈԱԱԿ-ը:

Առաջարկություն 3(գ).

ՀՀ կառավարությունը պետք է հաշվի առնի այս առաջարկությունները բարձրագույն կրթության ոլորտում նոր օրենքի ընդունման ժամանակ, ի հավելումն «Հայաստանի Հանրապետության Կրթության մասնագտական մակարդակի բարձրացման՝ ԵՄ-ի ԹՎինինգ ծրագիր Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի համար (ԵԲԿՏ)» ԵՄ ԹՎինինգ ծրագրի (2013) շրջանակում արված առաջարկությունների, որոնց ամրապնդման համար էլ նախատեսված են դրանք:

Առաջարկություն 3(դ).

ՀՀ կառավարությունը պետք է հարգի բուհերի պատշաճ ինքնավարությունը ոչ միայն նոր օրենսդրության ընդունման ժամանակ, այլև իր հետագա քաղաքական գործունեության ընթացքում: ՀՀ կառավարությանը պետք է խրախուսել, որպեսզի վերջինս դիտարկի սա ոչ որպես բուհական համակարգին վերագրվող կարևորության նվազեցում, այլ որպես պատասխան այս հարցի առնչությամբ Եվրոպական մոտեցումներին: ՀՀ կառավարությանը պետք է խրախուսել այլ եղանակներով ցույց տալ ԲԿ վերագրվող կարևորությունը, օրինակ, ֆինանսավորման տրամադրման միջոցով (տես Առաջարկություն 5 (բ) ստորև):

4 ՈԱԱԿ-Ի ԴԻՐՔԸ (ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ)

4.1 Փաստեր հարցազրույցներից/հանդիպումներից

ԿԳՆ

- 4.1.1 Հիմնվելով իրենց կողմից կատարված գրականության նախնական վերլուծության վրա (տես 4.2.1-4.2.3 ստորև)՝ փորձագետները բացահայտել են ՈԱԱԿ-ի մասին մի քանի չափազանց դրական տեսակետներ, բայց նաև հայտնաբերել են հնարավոր խնդիրներ կապված ՈԱԱԿ-ի՝ ազգային կառավարությունից անկախության պակասի հետ: Նրանք ուսումնասիրել են այդ խնդիրները Կրթության և գիտության փոխնախարարի հետ:

ԿԳ Փոխնախարարը ընդունեց, որ վարչապետը ՈԱԱԿ խորհրդի ղեկավարն է եղել: Սակայն նա ընդգծել է, որ ՈԱԱԿ-ը չի ենթարկվում ԿԳՆ-ին, և որ ՈԱԱԿ-ը կարող է փոխել իր կանոնադրությունը այս խնդիրը լուծելու համար:

Լիցենզավորումը, արդեն 1-2 տարի է, իրականացնում է ԿԳՆ շրջանակներում գործող գործակալության կողմից, իսկ հավատարմագրումը իրականացվում է ՈԱԱԿ-ի կողմից: Փոխնախարարը նշել է, որ ՈԱԱԿ կցանկանար ՈԱԵԱ (Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիա) նախնական անդամի կարգավիճակից քայլ կատարել դեպի լիիրավ անդամի կարգավիճակ, երբ ձեռք կբերի հավատարմագրման երկու տարվա լիարժեք փորձ՝ իրականում ընդունելով հավատարմագրման մասին որոշումներ: Նա ընդունել է, որ ըստ Նիդերլանդների ֆլամանդական գործակալության գնահատման ՈԱԱԿ-ը դեռևս լիովին անկախ չէ:

Միջազգային կազմակերպություններ

- 4.1.2 Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից մեկը փորձագետների հետ հանդիպման ընթացքում դրական է արտահայտվել ՈԱԱԿ-ի աշխատանքի մասին: Այդ կազմակերպության ներկայացուցիչներն ասում են, որ համալսարանները ընդունում են ՈԱԱԿ-ը, և վերջինս շատ ակտիվ է համալսարաններում հանդիպումներ կազմակերպելիս և ձեռնարկներ կազմելիս և այլն... Չնայած ընդունելով, որ վարչապետը շարունակում է մնալ ՈԱԱԿ-ի խորհրդի ղեկավար, այս կազմակերպության ներկայացուցիչը հայտարարել է, որ ՈԱԱԿ-ի հարաբերությունները կենտրոնական կառավարության հետ կփոխվեն: Ներկայացուցիչը նշել է, որ 10 համալսարաններ անցել են հավատարմագրումը և ունեն 399 վերապատրաստված փորձագետներ: Սակայն, ներկայացուցիչը նշել է, որ կարող են լինել խնդիրներ՝ ՈԱԱԿ համակարգի կայունության հետ կապված, որոնք կնկատվեն արտաքին ֆինանսավորման ավարտից հետո (ներկայացուցիչը հայտարարել է, որ ՈԱԱԿ-ի վերջին գործողությունները ֆինանսավորվել են Համաշխարհային բանկի, Տեմպուս ՊԻԿԱ ծրագրի արտաքին գնահատման, և Դիուս ծրագրի ներքին գնահատման ծրագրերի կողմից):
- 4.1.3 Մեկ այլ միջազգային կազմակերպության ներկայացուցիչները ավելի քննադատորեն մոտեցան ՈԱԱԿ-ի կարգավիճակի հարցին: Նրանք ընգծեցին ՈԱԱԿ-ի «դե յուրե» թույլ կողմերը, մասնավորապես, որ այն կարող է միայն

խորհուրդ տալ, այլ ոչ թե հավատարմագրել: Նրանք նաև նշել են, որ մինչ այժմ ՈԱԱԿ-ը ապավինում էր միջազգային (Համաշխարհային բանկ) ֆինանսավորմանը:

- 4.1.4 Երրորդ կազմակերպության ներկայացուցիչները նույնպես նշեցին, որ ՈԱԱԿ-ի կազմը շարունակում է «քաղաքական» բնույթ կրել:

ՈԱԱԿ-ի տնօրենը

- 4.1.5 Շատ դրական հանդիպում տեղի ունեցավ ՈԱԱԿ-ի տնօրենի հետ: Տնօրենը հատկապես օգտակար եղավ ՈԱԱԿ-ի աշխատանքի մասին մանրամասն խոսելիս:

Կառավարումը

Տնօրենը բացատրեց, որ ՈԱԱԿ-ի հիմնադրվել 2008 թ., որպես հիմնադրամ (այսինքն, նա գտնում է, որ սա նշանակում է, որ այն անկախ է): Փորձագետները ներգավվածությունը

Տնօրենը նշել է, որ ՈԱԱԿ-ը աշխատում է վարչապետի աշխատակազմի հետ համատեղ: ՀՀ վարչապետը խորհրդի ղեկավարն է: Սակայն, տնօրենն ընդգծել է, որ վարչապետը ցանկանում էր օգտագործել ՈԱԱԿ-ը որպես բարեփոխումների միջոց:

Տնօրենը նշել է, որ նոր Խորհուրդը նաև ներառում է չորս պրոֆեսորների, ուսանողների, և բուհերի համար պատասխանատու նախարարի: Սակայն, հարցազրույցի ընթացքում նա նշել է նաև, գործատուներին՝ որպես խորհրդի անդամներ:

Տնօրենը բացատրեց, որ ՈԱԱԿ-ը մշակում հավատարմագրման չափորոշիչներ, չնայած որ դրանք հետո ներկայացվում են ԿԳՆ, որն իր հերթին ներկայացնում է դրանք կառավարությանը: Հետևաբար, ի վերջո, պետությունն է որոշում չափորոշիչները: Պաշտոնապես հավատարմագրումը նույնպես իրականացվում է պետության կողմից՝ չնայած, «դա կփոխվի»:

Հավատարմագրման համակարգի զարգացում

Հավատարմագրման չափորոշիչները կապված են համալսարանների ներքին որակի ապահովման հետ (ՈԱ): Համաշխարհային բանկը աջակցում է համալսարանների ներքին ՈԱ ստորաբաժանումներին:

Հավատարմագրման համար նախատեսված մոտեցումը այն է, որ այն պետք է լինի պարտադիր ինստիտուցիոնալ մակարդակով, սակայն՝ ոչ պարտադիր ծրագրային մակարդակով: Տնօրենը նախընտրում է «աուդիտ»-ը, այլ ոչ թե «հավատարմագրում»-ը ինստիտուցիոնալ մակարդակով, սակայն, «որոշում» էր

կայացվել «հավատարմագրում» իրականացնելու մասին: Մինչ 2018 թ., բոլորը բուհերը պետք է հավատարմագրված լինեն: Չնայած ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարտադիր է, այնուամենայնիվ տնօրենը գտնում է, որ սա «հետևանքների չունի» (այսինքն, հավանաբար, բացասական տեսանկյունից):

Տնօրենը նաև քննարկեց հավատարմագրման փուլերը: Նա կարծես ասում էր, որ ՈԱԱԿ-ը ցանկացել է ստանալ 4-ամյա ժամկետ սովորական ցիկլի համար և 2 տարի որպես լրացուցիչ այլընտրանք, ինչպես նաև ներքին աուդիտի կես ցիկլ: ՀՀ կառավարությունը որոշել է հաստատել 6-ամյա ցիկլ, 4 տարի և 2 տարի պայմանական այլընտրանքով:

Համաշխարհային բանկի նախագծի շրջանակներում կրթվել են 400 մարդ այն մասին, թե ինչպես պետք է գրել ինքնագնահատման և հետ-ծրագրային պլաններ: Այն աջակցում է շուրջ 15 համալսարանի հավատարմագրման: Հավատարմագրման յուրաքանչյուր դեպք ներառում է մեկ ուսանող և մեկ միջազգային փորձագետ, որն ընտրվում է ՈԱԱԿ-ի ներկայացմամբ, ինչպես նաև նաև Գերմանիայի, Ավստրիայի և Շվեյցարիայի որակի գնահատման գործակալություններից: Այս հավատարմագրումները գնահատվել են ֆրանսիական որակի գնահատման գործակալության կողմից: Նրանք բավականին թանկ էին, յուրաքանչյուրը՝ 14,000 եվրո: Համաշխարհային բանկը վճարել է առաջին 15 հավատարմագրերի համար, բայց հիմա համալսարաններն են վճարում:

Ֆինանսավորման խնդիրներ

Տնօրենը նշում է, որ կան խնդիրներ՝ ֆինանսավորման հետագա կայունության վերաբերյալ, թեև նրա դիրքորոշումը լիովին պարզ չէր այս հարցում: Տնօրենը նշեց, որ պետական համալսարանները չեն ցանկանում վճարել: Թեև մասնավոր բուհերը կարող են ավելի հետաքրքրված լինել վճարելու առումով, ընդհանուր համակարգը չի կարող ֆինանսավորվել այս աղբյուրից: Հարկավոր է գտնել այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրներ, օրինակ խորհրդատվության և անձնակազմի վերապատրաստման ծրագրերի ձևով: Մակայն, ՈԱԱԿ խորհուրդը գտնում է, որ ապագա ֆինանսավորումը խնդիր է հանդիսանում:

Մասնավոր բուհեր

Ընդհանուր առմամբ, մասնավոր բուհերի հետ կապված դիրքորոշումը ամբողջությամբ պարզ չէր: Տնօրենը հայտնել է, որ, 5 մասնավոր համալսարաններից 2-ը չեն կարող հավատարմագրվել: Իհարկե, հավատարմագրումը նույնը չէ, ինչ լիցենզավորումը: Տնօրենը նշել է, որ ՈԱԱԿ-ը կապահովի հավատարմագրման արդյունքների մասին հետադարձ կապ Լիցենզավորման գործակալությանը: Նա նաև ասել է, որ լիցենզավորման գործակալությունը խորհրդատվություն կխնդրի ՈԱԱԿ-ից:

Հավատարմագրման մանրամասն գործընթացը

Գործում է մեկ ընդհանուր ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողով: Այն ունի 10 անդամ (այդ թվում, մեկ ուսանող և մնացածները համալսարաններում դասավանդման փորձ ունեն): Հավատարմագրման հանձնաժողովի նախագահը ընտրվում է կոմիտեի կողմից:

Տնօրենը մանրամասնել է հավատարմագրման գործընթացը: Նա կարևորել է հաստատության՝ ինքնագնահատման փաստաթուղթ գրելու ունակությունը, որին հաջորդում է այս փաստաթղթերի երկրորդային վերլուծությունը: Սրան հաջորդում է 5-օրյա այց, որը ներառել է 18 հանդիպում համալսարանի աշխատակիցների, այդ թվում՝ ՈԱ ինստիտուցիոնալ ղեկավարների և աշխատակիցների հետ, որոնք ներգրավված են հետազոտության և միջազգային վերահսկողության սահմանման բնագավառներում, ինչպես նաև գործատուների հետ:

Տնօրենը ասել է, որ որոշումները ընդունվում են երկու հիմնական մակարդակներում, և հաստատություններից պահանջվում է ներկայացնել նոր լրացուցիչ տեղեկություններ: Փորձագետները, որոնք ներգրավված են հավատարմագրման գործընթացում, ներկայացնում են իրենց որոշումները հավատարմագրման հանձնաժողովին: Հավատարմագրման հանձնաժողովին ներկայացվելիք զեկույցը ունի մի քանի պարամետրեր (ակադեմիական գործընթաց, այդ թվում՝ ուսուցում և ՈԱ, հետազոտություն և միջազգային վերահսկողության սահմանում, սոցիալական պատասխանատվություն, ուսանողներ, կառավարում): Ներկայումս հաշվետվություններում չի առաջարկվում շնորհակալագրերի տրամադրում, սակայն կան պլաններ գնահատականներ տալու համար: Ներկայումս հաշվետվությունների հետ կապված խնդիր կա, քանի որ դրանք հանդիսանում են պետական սեփականություն, բայց քայլեր կձեռնարկվեն դրանք ամբողջությամբ հրապարակելու ուղղությամբ:

Հավատարմագրման արձանագրությունները վերանայվում են ամեն տարի: Անց են կացվում երկամյա կոնֆերանսներ շահագրգիռ կողմերի, այդ թվում ուսանողների համար: Դրանք, որպես կանոն, ներառում են միջազգային ներդրումներ:

Անդամակցություն ՈԱԵԱ-ին

ՈԱԵԱ մասամբ անդամակցությունից լիարժեք անդամակցության անցնելու մասին դիրքորոշում լիովին պարզ չէր:

Տնօրենը անդրադարձել է Համաշխարհային բանկի ծրագրին որպես՝ ՈԱԵԱ անդամակցության պիլոտային միջոց: Սա ներառում աշխատանք Նիդերլանդների/Ֆլամանդական ՈԱ գործակալության և երկու համալսարանների

հետ: Տնօրենը գտնում է, որ դեռևս չեն ստացվել եզրափակիչ արդյունքներ՝ նկատի ունենալով, որ գնահատումը վերջնական արդյունքներ չի ապահովել, և, ըստ էության, չի եղել որևէ երկխոսության ՈԱԵԱ հետ՝ լիիրավ անդամակցության դիմումի հետ կապված: Նա ընդունել է, որ կա անկախության խնդիր այս համատեքստում, այսինքն, խոսքը վերաբերում է վարչապետի՝ որպես խորհրդի նախագահ դերակատարմանը:

Նա նկատի ուներ, որ կանոնադրության ընթացիկ վերանայման արդյունքում վարչապետը կհեռացվի և նրան կփոխարինեն կառավարության կողմից առաջադրված երկու թեկնածուներ, որոնցից մեկին կարելի է ընտրել: Տնօրենը ընդունում է, որ դա դեռ անկախության հետ կապված խնդիրներ կառաջացնի ՈԱԵԱ-ում:

Փորձագետների՝ այս հանդիպման ամփոփումը

Ամփոփելով այս հանդիպումը ՈԱԱԿ-ի տնօրենի հետ՝ փորձագետները շատ տպավորված էին այն աշխատանքների ծավալով, որոնք ՈԱԱԿ-ը ստանձնել է, և այն բազմաթիվ մեթոդներով, որոնցով այն իր գործունեության ընթացքում հասել է «եվրոպական լավագույն գործելակերպի» մոտեցումների: Օրինակ, թեև փորձագետները վստահ չեն, որ ամբողջությամբ հասկակացել են բոլոր մանրամասները, այնուամենայնիվ գտնում են, որ իրենց ներկայացված հավատարմագրման գործընթացը համապատասխանում է արևմտյան եվրոպական մոտեցումների առանցքային կողմերին, որոնց իրենք ծանոթ են:

Մյուս կողմից, փորձագետները գտնում են, որ դեռ կան հարցեր, որոնք պետք է լիարժեք լուծվեն, քանի դեռ ՈԱԱԿ-ը շարժվում է առաջ, այդ թվում՝ ազգային կառավարության հետ փոխհարաբերությունների, ՈԱԵԱ-ի անդամակցության և ՈԱԱԿ-ի ֆինանսավորման կայուն մոդելի մշակման հարցերը:

4.2 Փաստեր գրականությունից

2013թ Համաշխարհային բանկի զեկույցը

- 4.2.1 2013թ Համաշխարհային բանկի զեկույցում ընդգծված են ՈԱԱԿ-ի անկախության վերաբերյալ որոշ կետեր: ՈԱԱԿ-ի 2012թ-ի ՈԱԵԱ-ի փորձագետին ուղղված հրավերին առնչվող զեկույցը, որի մեջ ասվում էր «վերանայել և գնահատել, արդյոք Հայաստանում հավատարմագրումը կարգավորող օրենսդրական դաշտը համապատասխանում է Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի որակի գնահատման չափորոշիչներին և ուղեցույցներին (ԵԶՈւ)»:

Այս փորձագետի կողմից առաջարկվող երկու հիմնական արդյունքները և առաջարկությունները ամփոփված են այստեղ: Նախ և առաջ «այն փաստը, որ վարչապետը *ի պաշտոնե* խորհրդի նախագահն է» հարցականի տակ է դնում անկախությունի և դրանից բխում է այն առաջարկությանը, որ «Խորհրդի նախագահի պաշտոնը լինի ընտրովի»: Երկրորդ, առաջարկվում է, որ

հավատարմագրման սերտիֆիկատներ տալու մասին վերջնական որոշումների ընդունումը վերապահվի ՌԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովին, այլ ոչ կառավարության (Համաշխարհային բանկ, 2013թ էջ 17):

Համաշխարհային բանկի զեկույցում նշվում է նաև, որ «այս երկու առաջարկություններն արդեն հաստատվել են վարչապետի և Կրթության նախարարի կողմից, և հավատարմագրման գործընթացի անկախությունն ու վստահելիությունը բարելավելու ուղղությամբ արվող փոփոխություններն ընթացքի մեջ են»:

Համաշխարհային բանկի զեկույցում նշվում է, որ «ՌԱԱԿ-ը տարօրինակ կարճ ժամկետներում մեծ հաջողությունների է հասել» (նույն տեղում, էջ 16) և, որ «շատ կարևոր է, որ կառավարությունն ու Կրթության և գիտության նախարարությունը շարունակեն ստեղծել աջակցող միջավայր» ՌԱԱԿ-ի համար (նույն տեղում, էջ 2):

2013թ Բաց հասարակության զեկույց

- 4.2.2 2013թ Բաց հասարակության Ձեկույցում նաև վերլուծվել են ՌԱԱԿ-ի անկախության խնդիրների վերաբերյալ, մասնավորապես վարչապետի՝ խորհրդի ղեկավար լինելու վերաբերյալ (Բաց հասարակության 2013 էջեր 11-12):

2012թվականի Տեմպուսի զեկույցը

- 4.2.3 2012 Տեմպուսի զեկույցը մեկնաբանել է ՌԱԱԿ-ի ֆինանսավորման հարցը՝ նշելով, որ վերջինիս ֆինանսավորումը նախատեսվում էր իրականացնել ձեռնարկատիրական նախաձեռնություններով (Տեմպուս 2012, էջ 6):

Լա ՄԱՆՇ ծրագիրը

- 4.2.4 Լա ՄԱՆՇ Ծրագրով մշակվել է «Փոփոխվող բարձրագույն կրթության հաստատությունները անցումային հասարակության մեջ՝ Մանրամասն ուսումնասիրության հաշվետվություն» (2014 - տե՛ս Լա ՄԱՆՇ-ի կայքէջը): Ձեկույցում Հայաստանի կողմից կատարված իրավիճակային ուսումնասիրություններից մեկը կատարվել է Երևանի պետական համալսարանի կողմից «Որակի զարգացման և միջազգայնացման երաշխավորման» շուրջ (Գլխ. 6, էջ 55-73): Այնտեղ մանրամասն նկարագրվում է Հայաստանի մեկ համալսարանի՝ ներքին որակի երաշխավորման ընթացակարգերը, միջոցները և ռազմավարությունները ՌԱԵԱ-ի պահանջներին համապատասխանելու համար: Որպես այդպիսին չլինելով ՌԱԱԿ-ի գնահատում, այս գլուխը ցույց է տալի օրինակելի հաստատության դրական զարգացումները, որոնք ընդհանուր առմամբ համապատասխանում են ընդհանուր որակի խթանման մշակույթին, որին ՌԱԱԿ-ձգտում է հասնել:

ՌԱԱԿ-ի Սեփական նյութերը

4.2.5 Փորձագետները վերլուծել են ՈԱԱԿ-ի կողմից տրամադրված ծավալուն նյութերը, որոնք գրեթե բոլորը հասանալի են անգլերենով ՈԱԱԿ-ի կայքէջում (www.anqa.am/en/): Մեկ բացառությամբ (տես ստորև) այս փաստաթղթերը չեն ունեցել որոշակի նշված ամսաթիվ, երբ առաջին անգամ դրանք կազմվել են: Հետևաբար, օգտագործված գրականության բաժնում «կայքէջ 2015թ.» նշումն է արված՝ առանց կոնկրետ ամսաթվի փաստաթղթերի համար: Գլխավոր վերլուծված փաստաթղթերն են՝

ՈԱԱԿ-ի գործողությունների պլանը և ՈԱԱԿ-ի 2010-2015 թվականների ռազմավարական պլանը:

Այս փաստաթղթերը միասին հիմնավորապես ապացուցում են, որ ՈԱԱԿ-ի գործունեության առաջին 5 տարիների ընթացքում կիրառվել է պլանավորման հարցում համակարգային և համապարփակ մոտեցում: Ռազմավարական պլանի «Ներածությունում» մասնավորապես հետաքրքրական էր նշել այն հնարավորության գիտակցումը, որ պարտադիր հավատարմագրումը կարող է հիմք ապահովել, ոչ որակի ապահովումը/բարելավումը և լիցենզավորումը կատարվի մեկ գործակալության կողմից (տե;ս Ռազմավարական պլան, էջ 7):

Արտաքին որակի ապահովում, Քաղաքականություն և ընթացակարգեր՝ Ծրագիր 1, Ինստիտուցիոնալ աուդիտ և ծրագրի հատարմագրում՝ Ծրագիր 2, Միջազգային հարաբերություններ՝ Ծրագիր 3, ՈԱԱԿ-ի ներքին որակի ապահովման ծրագիր՝ Ծրագիր 4, TLI-ի ներքին որակի ապահովում և շահառուների հարաբերություններ՝ Ծրագիր 5:

Այնուհետև այս փաստաթղթերը ըստ ցույց են տալիս պլանավորման հարցում համակարգված և համապարփակ այն մոտեցումը, որն ՈԱԱԿ-ն ընդունել է իր առաջին 5 տարիների ընթացքում: Մյուս կողմից անգլերեն լեզվով պետական կայքերում հասանելի տարբերակներն ներառում են զգալի թվով «կատարվելի աշխատանքներ» մուտքագրումներ, որոնք մինչ այժմ երևում են «Ծրագրի գործողությունների պլաններում»:

Բուհական մակարդակում ուսումնական հաստատությունների արտաքին որակի գնահատման հիմնական ուղեցույցներ

Սա հետաքրքիր և ընդգրկուն փաստաթուղթ է: Ամփոփ ներկայացված է որակի հստակ կառուցվածքը, այդ թվում՝ համապատասխան կերպով ընդգծված է որակի մշակույթը և կատարողականը չափելու վեց չափումները (էջ 8-9): Փաստաթուղթը այնուհետև քննարկում է որակի ապահովման «վեց մեխանիզմները» (էջ 10-11): Հետաքրքրական է նշել, որ փաստաթուղթը մատնանշում է, նախնականորեն նախապատվություն է տրվել օգտագործել «աուդիտ» տերմինը ինստիտուցիոնալ որակի ապահովման առումով և հավատարմագրում՝ Ծրագրի որակի ապահովման առումով (էջ 10): Իհարկե, այս փաստաթուղթը համարվում է «նախագիծ»:

Որակի ապահովման ուղեցույցներ, չափանիշներ և չափորոշիչներ Հայաստանի քարձրագույն կրթության ոլորտում:

Սա երևում է վճռորոշ փաստաթուղթ է ՈԱԱԿ- ում: Փաստաթղթում շատ հղումներ են կատարվում եվրոպական համատեքստին (տե՛ս էջ 8-12 և էջ 48-50): Շեշտադրված են «հանրային վստահությունը» (էջ 19), հաշվետվողականությունն և թափանցիկությունը (էջ 22), ինչպես նաև խթանումը (էջ 24): Հավատարմագրման համապատասխան և հստակ սահմանումը այժմ տեղափոխվել է ինստիտուցիոնալ մակարդակ (էջ 32):

Փաստաթղթի հիմնական մասում ամբողջությամբ շարադրված են «ՈԱԱԿ-ի Որակի ապահովման չափանիշների և չափորոշիչները», որոնք կօգտագործվեն ինստիտուցիոնալ աուդիտի/ հավատարմագրման (էջ 58-68) և ծրագրի հավատարմագրման համար (էջ 70-76): Սա վերաբերվում է յոթ ոլորտներին (տես էջ 52-54):

Ինչ մնում է այն թեմաներին, որոնք վերաբերվում են բարեվարքությանը, հետաքրքիր է նշել, որ հաստատված «Չափանիշների ձևակերպումները և չափորոշիչները» ներառում են հղումներ կառավարման մեջ «էթիկական որոշումների կայացման» և «էթիկական առաջնորդության» (տե՛ս էջ 58); աշխատակազմի համալրման (տե՛ս էջ 64); «ուսանողների անաչառ գնահատման» (տե՛ս էջ 66); հետազոտությունները ուսուցմանը միացնելու (տե՛ս էջ 66); «քաղաքացիության» զարգացման (տես էջ 68) թեմաները: Փաստաթուղթը ընդգծում է 5 կետից բաղկացած գնահատման սանդղակ՝ «գերազանցից» մինչև «շատ վատ» (տես էջ 86-88): Փաստաթղթում մանրամասնվում է, թե ինչպես բացահայտել, աշխատանքի ընդունել և օգտվել «փորձագետների» ծառայություններից (տե՛ս էջ 92-122):

Որակի ապահովման բառացանկ:

Սա լավ ուսումնասիրված և օգտակար փաստաթուղթ է: Այն հղումներ է անուն եվրոպական համատեքստին և տրամադրում է մի շարք կարևոր տերմինների օգտակար սահմանումներ, այդ թվում՝ հավատարմագրում, հավատարմագրման մարմին, աուդիտ (հաշվետվություն), էթիկայի կանոններ (Որակի ապահովման համար), բուհ, լիցենզավորում, որակի գնահատում/որակի վերլուծություն, որակի ապահովում, որակի աուդիտ: Տերմինաբանական այս բառացանկի օգտագործումը ապահովում է, որ Հայաստանի ԲԿ համայնքը խոսի «ընդհանուր լեզվով» որակի ապահովման մասին՝ համահունչ ժամանակակից եվրոպական մոտեցումներին (թեև որոշ գրառումներ, օրինակ՝ «համալսարան» բառը կարող է պահանջել լրացուցիչ քննարկում):

Ինքնագնահատման ձեռնարկ:

Սա մեկ այլ շատ դրական փաստաթուղթ է: Առանձնահատուկ շեշտադրված է «Բարելավումը և խթանումը» (էջեր 10-12): Բարեվարքության թեմաներին առնչվող տերմինների առումով, հատկապես օգտակար օրինակ է «Մարդկային ռեսուրսների կառավարման համեմատական վերլուծություն» տերմինը (էջ 90):

ՈԱԱԿ Հավատարմագրման ձեռնարկ. Ներքին որակի ապահովում. Խնդիրներ և հեռանկարներ:

Այս փաստաթուղթը՝ թվագրված 2011թ, ունի բազմաթիվ ուժեղ կողմեր և պարունակում է մեկ այլ շատ լավ ակնարկ ՈԱԱԿ-ի մոտեցումների վերաբերյալ: Եվրոպական և Հայաստանի համատեքստը լավ նկարագրված է (էջեր 6-8): Հատկապես շեշտադրված են «Հանրային վստահությունը», «Սոցիալական պատասխանատվությունը», «Որակի բարելավումն ու ընդլայնումը», «Գործատուների և մասնագիտական ասոցացիաների դերը որպես շահառուներ» (էջեր 8-10): Արտաքին որակի ապահովումը նկարագրելիս, հավատարմագրում տերմինը այժմ հստակ օգտագործվում է ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ ծրագրային մակարդակների համար (էջեր 13-15):

Փաստաթղթում կրկնվում են «չափանիշներ և չափորոշիչներ», որոնք արդեն նշվել են «Որակի ապահովման ուղեցույցներ, չափանիշներ և չափորոշիչներ Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում» փաստաթղթում, թեև կան որոշ տարբերություններ ներկայացման ձևի մեջ (տես էջեր 34-46): Այդ աննշան տարբերություններից մեկով ձևակերպվում է մեկ այլ արժեքավոր չափորոշիչ, որը վերաբերում է ուսանողների գնահատման բարեվարքության հարցերին (տե՛ս Չափորոշիչ 4 բ և ե, էջ 43): Բացի այդ, հինգ բալանոց սանդղակով գնահատման համակարգի փոխարեն փաստաթղթում նկարագրված են երեք որոշումներ, որոնք Հավատարմագրման հանձնաժողովը կարող է ընդունել (Ընդունված, Պայմանականորեն ընդունված, Մերժված) (տես էջ 32): Այստեղ շատ անգամ կրկնվում է «Փորձագետներ» բաժնի նյութերը, որոնք հանդիպում են մյուս փաստաթղթում (տես էջ 47-59):

Բացի դա, փաստաթուղթը ներառում է նաև լրացուցիչ նյութեր Հավատարմագրման հանձնաժողովի և Հավատարմագրման կարգի վերաբերյալ (տես էջեր 15-16 և 18-33): Սակայն, այս նյութը չի լուծել ՈԱԱԿ-ի անկախության բոլոր հարցերը՝ կառավարության առնչությամբ: Հավատարմագրման հանձնաժողովը նկարագրված է (էջեր 15-16), և նրա դերը ՈԱԱԿ որոշումների կայացման հարցում հստակ է (էջեր 31-32): Սակայն, այս նկարագրությունը շարունակում է ընդգծել է, որ ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովի կողմից սերտիֆիկատ տրամադրելու մասին վերջնական որոշումը կախված է ԿԳՆ-ից (էջեր 32-33): Օգտակար է այն, որ փաստաթղթում քայլ կա «պետական չափորոշիչներ» և «ՈԱԱԿ հավատարմագրման չափանիշներ և չափորոշիչներ» առանձին հղումից (էջ 18) դեպի մեկ այլ պնդում, որ ՈԱԱԿ-ի «չափանիշները և չափորոշիչները» կարող

են համարվել «պետական չափանիշներ և չափորոշիչներ (էջ 21 և էջ 34), բայց այս ամենը դեռ պետք է ավելի հստակեցվի:

Փորձագետների ամփոփումը ՈԱԱԿ-ի նյութերի վերաբերյալ

Մասնագետները որոշակի մանրամասնությամբ ուսումնասիրել են ՈԱԱԿ-ի նյութերը, որպեսզի արտահայտեն մի կարևոր կարծիք այն մասին, որ այս նյութերը ցույց են տալիս ՈԱԱԿ-ի կողմից կատարված մեծ աշխատանքը և հանձնառությունը ԲԿ արտաքին և ներքին որակի ապահովման և բարելավման շրջանակում եվրոպական «լավագույն գործելակերպին» համապատասխանող մանրամասն մոտեցումներ մշակելու հարցում: Մյուս կողմից, ամբողջովին չպարզաբանելով ՈԱԱԿ-ի՝ կառավարությունից անկախության խնդիրները, այս նյութերը նույնպես ընդգծում են, թե որքան կարևոր է այն, որ այդ խնդիրները չմնան առանց լուծումների:

4.3 Ամփոփելով ՈԱԱԿ-ի վերաբերյալ փաստերը

4.3.1 Հենվելով սեփական ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել տնօրենի հետ հարցազրույցից և ՈԱԱԿ-ի նյութերի ուսումնասիրությունից, փորձագետները վերահաստատում են ՈԱԱԿ-ի՝ մինչ այժմ ունեցած ձեռքբերումների մասին դրական կարծիքը, որը ձևավորվել է նաև որոշ հարցազրույցներից և ուսումնասիրված գրականությունից: Սա ընդգծում է ՈԱԱԿ-ի պոտենցիալ մեծ կարևորությունը Հայաստանի բուհերի համար ապագայում:

Այն նաև ընդգծում է այն կարևոր առաջնահերթություն, որը պետք է տրվի ՈԱԱԿ-ի՝ անկախություն ունենալը հստակ սահմանելուն, ինչը կապահովի ՈԱԵԱ-ում լիիրավ անդամակցությունը: Նմանատիպ առաջնահերթություն պետք է նաև տրվի ֆինանսավորման մոդելի մշակմանը, որը կնպաստի ՈԱԱԿ-ի շարունակական զարգացմանը:

Առաջարկություններ 4-րդ բաժնից

Այս բաժնի հիմնական հայեցակետերի բովանդակության և վերլուծության արդյունքում կատարվել են հետևյալ հատուկ առաջարկությունները՝

Առաջարկություն 4(ա).

ՈԱԱԿ-ի առկա դրական ձեռքբերումների վրա հիմնվելը պետք է առաջնային լինի ՀՀ կառավարության և ԲԿ համայնքի համար՝ Հայաստանի բուհական համակարգի ներսում բարեվարքությունը ամրապնդելիս:

Առաջարկություն 4(բ).

Մասնավորապես, ՀՀ կառավարությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները, այդ թվում՝ բուհական համակարգի մասով նոր օրենքի միջոցով, թափանցիկ և հստակ եղանակներով սահմանելու համար, որ ՈԱԱԿ-ը ունենա այն անկախությունը, որն անհարժեշտ է ՈԱԵԱ-ի (Բարձրագույն կրթություն ոլորտում որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի) լիիրավ անդամակցության չափանիշները բավարարելու համար:

Ինչպես արդեն ենթադրվում է թիվ 3 (ա) առաջարկությունից, սա պետք է նախատեսի, որ ՈԱԱԿ-ին վերապահվի հավատարմագրման հետ կապված վերջնական որոշում ընդունելու իրավունքը՝ ՈԱԱԿ-ի կողմից պարզապես կառավարությանը առաջարկություններ անելու փոխարեն: Այն պետք է նաև նախատեսի, որ ԲԿ ազգային չափորոշիչների ընդունման արտոնությունը վերապահվի ՈԱԱԿ-ին, և որ այդ չափորոշիչները արդյունավետորեն դառնան «պետական» չափորոշիչներ: Պետք է ապահովվի նաև այն, որ ՈԱԱԿ-ի կառավարման խորհուրդը անկախ լինի կառավարությունից՝ անդամակցության և անդամներին հավաքագրելու առումով:

Առաջարկություն 4(գ).

ՀՀ կառավարությունը և ԲԿ համակարգը պետք է լիակատար աջակցություն ցուցաբերեն ՈԱԱԿ-ին՝ երկարաժամկետ ֆինանսական կայունություն ապահովող ֆինանսական մոդել մշակելիս, որը համահունչ կլինի ՈԱԱԿ-ի լիակատար անկախությանը: Մա պետք է նախատեսի, որ բուհերը վճարեն շարունակական զգալի անդամավճարներ, կոնկերտ հավատարմագրման հետ կապված ծախսերից դուրս, որ բուհերը աշխատակազմի զարգացումը լիազորեն ՈԱԱԿ-ին որպես աշխատակազմի զարգացման ծրագրերի ինստիտուցիոնալ պարտադիր մաս, և որ կառավարությունը կամ ուղղակիորեն ներպետական բուհերի անձնակազմի զարգացման ծրագրերը լիազորի ՈԱԱԿ-ին, կամ անուղղակիորեն ֆինանսական միջոցներ տրամադրի բուհերին լիազորված ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող աշխատակազմի զարգացման ծրագրերն իրենց հաստատություններում խթանելու և ՈԱԱԿ-ին ինստիտուցիոնալ բաժանորդավճարներ վճարելու համար:

Առաջարկություն 4(դ).

Բոլոր Հայաստանի բուհերը պետք է ստանձնեն ներբուհական որակի ապահովման և զարգացման համակարգերի մշակման պարտավորությունը, որպեսզի առավել դրական փոխազդեցություն ապահովեն ՈԱԱԿ-ի արտաքին որակի համակարգերի հետ:

Առաջարկություն 4(ե).

Որպես Հայաստանի բուհական համակարգում բարեվարքության ամրապնդման կարևոր մաս, ՈԱԱԿ-ը պետք է առավելագույնս օգտագործի հավատարմագրման ընթացիկ չափանիշները, որոնք առնչվում են իր չափորոշիչների հետ

համապատասխանությանը հավատարագրման ընթացքում հաստատությունների և ծրագրերի գնահատում իրականացնելիս: ՈԱԱԿ-ը պետք է նաև նախատեսի իր չափորոշիչների շրջանակներում բարեվարքության պարամետրերի հետագա զարգացումը: Բարեվարքության խնդիրների լուծումը ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացում պետք է դառնա հզոր գործիք Հայաստանի բուհական համակարգում բարեվարքությունը ամրապնդելու համար:

5 ԲՈՒՀ-ԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

5.1 Փաստեր հարցազրույցներից/հանդիպումներից

ԿԳՆ

5.1.1 Փորձագետների հետ բուհերի ֆինանսավորման վերաբերյալ քննարկման արդյունքում Կրթության և գիտության փոխնախարարը ընդունեց, որ պետական համալսարանների համար ֆինանսավորման մակարդակները ցածր են: Մյուս կողմից, նա ընդգծեց ուսանողական կրթաթոշակների կարևորությունը: Նա ընդունեց, որ կա հնարավոր լարվածություն այս ոլորտում ազգային տնտեսական առաջնահերթություններին համապատասխանելու և ուսանողների որակավորման միջև: Որդեգրվեց արժանիքների վրա հիմնված մոտեցում կրթաթոշակների՝ հաջողությունով պայմանավորված ռոտացիայի միջոցով: Այնուամենայնիվ, ընդունվեց, որ ուսանողների միջև կա սոցիալական լարվածության մեծացում՝ հաշվի առնելով դրան ուղղած սոցիալական աջակցման ծրագրերը: Համալսարանների համար զգալիորեն մեծանցել է ուսման վարձը նվազեցնելու պահանջը (10-15%-ով), ընդ որում Կառավարությունը սահմանել է վարձավճարների բարձրացման համար առավելագույնը 7% վերին սահման: Կառավարությունն անում էր ամենը, որպեսզի «արժանի» ուսանողները չզիջեն իրենց տեղերը նյութապես ավելի ապահով ուսանողներին:

Միջազգային կազմակերպություններ

5.1.2 Միջազգային կազմակերպություններից մեկը փորձագետներին հանդիպման ժամանակ նշել է ուսանողների վրա ընդհանուր գնաճի լուրջ ազդեցության մասին:

Ուսանողական խմբերի ավագ ներկայացուցիչներ

5.1.3 Ուսանողական խմբերի ներկայացուցիչները համոզիչ կերպով ներկայացրել են այն փաստը, որ ուսանողական վճարները զգալի խոչընդոտ են հանդիսանում ԲԿ ստանալու համար: Նրանք նշեցին ուսման վարձի մակարդակներ՝ 1 միլիոն դրամ Բժշկական Համալսարանի համար և 200,000 դրամ ընդհանրապես պետական համալսարանների համար: Նրանք նաև նշեցին, որ ուսման վարձի մակարդակները մասնավորապես խոչընդոտ են հանդիսանում Երևանից դուրս մարզերում ապրող ուսանողների համար: Մյուս կողմից, նրանք ընդունեցին, որ

ռոտացիոն համակարգը խթան է հանդիսանում լավ գնահատականներ ստանալու համար: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, ուսանողական ներկայացուցիչները խստորեն պնդեցին ԲԿ-ն վճարներից զերծ պահելու մասին: Նրանք նշեցին, որ համալսարանները կարող են եկամուտ ստանալ այլ եղանակներով, իսկ բուհերը զգալիորեն պետք է ֆինանսավորեն հարկերից:

5.2 Փաստեր գրականությունից

2012թ. Տեմպուսի Ձեկույց

- 5.2.1 2012թ. Տեմպուսի զեկույցում ընդունվել է, որ առկա է բյուջեների և ֆինանսների զգալիորեն մեծ ինստիտուցիոնալ ինքնավարություն, սակայն ընդգծվել է, որ ֆինանսավորման 80%-ը ստացվել է ուսանողական վճարներից (Տեմպուս 2012թ., էջ 5-6)

2013թ. Համաշխարհային Բանկի Ձեկույց

- 5.2.2 2013թ. Համաշխարհային Բանկի զեկույցում ընդարձակ մեկնաբանություններ են ներկայացվել բյուջետավորման և ֆինանսավորման խնդիրների, ներառյալ՝ բուհերի ծախսերի ընդհանուր մակարդակը բարձրացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ձեկույցում ընդգծվել է ուսանողական վճարներից պետական բուհերի կախվածության մասին և նշվել, որ դրանք բավականին բարձր միջազգային համեմատությամբ: Ձեկույցում նաև ընդգծվել է, որ վճարները բավականին բարձր են Հայաստանի ներքին տնտեսական իրավիճակի տեսանկյունից (Համաշխարհային Բանկ 2013թ., էջ 20-22, 33):

Համաշխարհային Բանկի զեկույցում նկարագրվել է ներկայիս պետական ֆինանսավորմամբ ուսանողական կրթաթոշակային ծրագիրը, սակայն նշվել է, որ այն լիովին չի ընգրկում ուսանողական վճարների շուրջ խնդիրները (նույն տեղում, էջ 19-20):

Մյուս կողմից, զեկույցում նաև ընդգծվել է պետական աջակցությամբ ուսանողական վարկի ծրագրի ներգրավումը, մասնավորապես՝ տնտեսապես անապահով ուսանողներին աջակցելու համար: Թեև զեկույցում նշվում է, որ «կառավարությունը երկար ժամանակ դիտարկում է» այն և «բոլորովին վերջերս... տվել է իր համաձայնությունը Ուսանողական Վարկերի Պետական Աջակցության մասին օրինագծի վերաբերյալ», այնուամենայնիվ, նշվում է, որ նախնական ծրագիրը հետաձգվել է 2009թ., և վերջին նախաձեռնության շրջանակներում «նախագծի մանրամասները դեռևս պետք է հաստատվեն» (նույն տեղում, էջ 22):

Ընդհանուր առմամբ բյուջետավորման և ֆինանսավորման մասին Համաշխարհային Բանկի զեկույցում քննարկվում է «Բարձրագույն կրթության նոր ֆինանսավորման ռազմավարությունը»: Դրա ուղիները մանրամասնելիս

նախատեսվում է վերացնել ներկայիս ԲԿ ֆինանսական համակարգի թերությունները. զեկույցում նախագրուշացվում է, որ «դա չի կարող հանգեցնել նախանշված որակին առանց էապես ավելացնելու ընդհանուր պետական ֆինանսավորումը» (տե՛ս նույն տեղում, էջ 23):

Համաշխարհային Բանկի զեկույցում նաև մանրամասնորեն վերլուծվում են կառավարության լիազորությունների ներքո գտնվող պետական բուհերի ֆինանսական ինքնավարության էական սահմանափակումները՝ պայմանավորված տարբեր կարգավորումներով և անբավարար ֆինանսավորմամբ (տե՛ս նույն տեղում, էջեր 33-34): Բնորոշվել են ութ հիմնական սահմանափակումներ:

2013թ. Բաց Հասարակության զեկույց

5.2.3 2013թ. Բաց Հասարակության զեկույցում նույնպես ընդգծվել է պետական համալսարանների կախվածությունը ուսանողական վճարներից այն դեպքում, երբ պետական համալսարանները պետությունից ստանում են իրենց բյուջեյի միայն 9-30 %-ը (Բաց Հասարակություն 2013թ., էջ 13):

Աթենա ծրագիր

5.2.4 Աթենա ծրագրով խրախուսվում էր լավագույն գործելակերպերը և բարեփոխումների ֆինանսավորման ներառական մոտեցումները, ինչպես նաև համալսարանների կարողությունների զարգացումը ֆինանսական ռեսուրսների կառավարումը արդիականացնելու նպատակով: Այդ առումով, համապատասխան նյութերում Աթենա ծրագիրը կարևորել է Հայաստանում ԲԿ ընթացիկ ֆինանսավորման հետ կապված խնդիրները:

Օրինակ՝ 2014թ. ապրիլին Հելսինկիի Համալսարանում կայացած առաջին ընդհանուր ծրագրային Աթենա վերապատրաստման սեմինարը ուղղված է եղել ֆինանսական կառավարմանը: Այդ սեմինարի ելույթներում մասնավորապես ընդգծվել է Հայաստանի պետական համալսարանների կախվածությունը ուսանողական վճարներից եկած եկամուտից (տե՛ս Աթենայի կայքը):

Այս վերլուծությունը նաև խիստ ընդգծվել է Հայաստանում Աթենայի ազգային սեմինարում՝ կայացած 2014 թ. մարտին Երևանում (տե՛ս Թոմաս Էսթերման, Եվրոպական համալսարանների ասոցիացիա, «Համալսարանի ինքնավարության վիճակը Հայաստանում՝ արտաքին վերլուծություն», տե՛ս Աթենայի կայքը):

Այս ելույթում նաև ընդգծվել են համալսարանի ֆինանսական ինքնավարության այլ սահմանափակումները, ինչպես օրինակ՝ առևտրային գործունեությամբ զբաղվելու, փոխառություն վերցնելու, ինչպես նաև շենքերի կառավարում և վաճառք իրականացնելու իրավական կարգավիճակը/ կառավարության սահմանափակումները (տե՛ս նույն տեղում):

Ելույթում շարունակ պնդում էին, որ կա անհրաժեշտություն ավելացնելու պետական ֆինանսավորումը համալսարանների գործառնությունների կայունության աստիճանը ապահովելու համար (տե՛ս նույն տեղում): Արվեց նաև հանգամանալից քննարկում բանաձևի վրա հիմնված ֆինանսավորման, ծախսերի հաշվարկի մեթոդաբանության և բաշխման մեթոդաբանության վերաբերյալ (տե՛ս նույն տեղում):

Լա ՄԱՆՇ ծրագիր

5.2.5 Լա ՄԱՆՇ ծրագրի Արտաքին գնահատման հաշվետվություն՝ Առաջնորդություն և կառավարման հմտություններն ու մոդելները Հայաստանի, Բելառուսիայի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի բարձրագույն ուսումնական հաստատություններում (2013թ - տե՛ս Լա ՄԱՆՇ-ի կայքը) ներառում է «Առաջնորդության կառավարման հմտությունները և մոդելները Հայաստանում» գլուխը (էջեր 9-19): Այն արձարծում է «համալսարանի ֆինանսական ռեսուրսների բազմազանության պակասի և նորամուծության համար բավարար ռեսուրսների բացակայության խնդիրը՝ որպես փոփոխությունների համար հիմնական սպառնալիք»(էջ 13):

Առաջարկություններ 5-րդ բաժնից

Բնականաբար, ԲԿ համար պետական ֆինանսավորման վերաբերյալ որևէ առաջարկ անելիս փորձագետները խիստ բժախնդիր են Հայաստանի կառավարության առջև ծառայած լայն տնտեսական մարտահրավերների հանդեպ:

Հետևյալ հատուկ Առաջարկությունները բխում են սույն բաժնի բովանդակության և վերլուծության հիմնական հայեցակետերից.

Առաջարկություն 5(ա)

Պետք է ապահովվի առավելագույն հրապարակային թափանցիկություն ՀՀ կառավարության և պետական բուհերի միջև ֆինանսավորման գործընթացի ընթացքում, ինչպես նաև բուհերի կողմից այդ դրամական միջոցների օգտագործման ժամանակ: Սա պետք է ներառի կառավարության մանրամասն, հստակ և լիարժեք պարզաբանումը այն մասին, թե իր կողմից վերջերս ընդունված «Բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարություն» փաստաթղթի քաղաքական մտածելակերպը ինչպես է իրականացվում գործնականում:

Առաջարկություն 5(բ)

ՀՀ կառավարությունը պետք է ընդունի, պետական բուհերի թերֆինանսավորման խնդիրները լուծելու առաջնային անհրաժեշտությունը: Այս ոլորտում ռազմավարությունները սահմանելիս՝ պետք է ամբողջովին հաշվի առնել

պետական բուհերի համապատասխան ազատականացումը, որպեսզի վերջիններս կարողանան զբաղվել ավելի լիարժեք առևտրային գործունեությամբ, փոխառություն վերցնել և այլն, ինչպես օրինակ՝ ձեռնարկել հիմնադրամի կարգավիճակ ստանալու հնարավոր քայլեր: Ինչպես քննարկվել է վերոնշյալ 2 (ա) առաջարկությունում, հարկավոր է նաև առավելագույն հաշվի առնել բուհերի միաձուլման կամ փակման միջոցով պետական բուհերի թվի կրճատման արդյունքում ստացվող ֆինանսական հնարավոր օգուտները:

Առաջարկություն 5(գ):

ՀՀ կառավարությունը չպետք է պատշաճ և կայուն համարի ուսանողական վճարներից պետական ԲՈՒՀ-երի ներկայիս կախվածության մակարդակը: ՀՀ կառավարությունը պետք է անհապաղ առաջնահերթություն տա ֆինանսավորման մոդելների մշակմանը, որոնք էականորեն նվազեցնում են ուսանողական վճարներից կախվածության ներկա մակարդակը: Սա պետք է իհարկե ներառի այնպիսի մոդելի քննարկում, որը լիովին վերացնում է ուսանողական վարձերի վճարումը բուհական համակարգ ընդունվելիս, թեկուզ, եթե դա ներառում է ուսանողական վարկերի ներդրումը համակարգում՝ ընդհանուր հարկման միջոցով ԲԿ ոլորտը պարզապես ֆինանսավորելու փոխարեն :

6 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ և ԲՈՒՀ-ԵՐԸ

6.1 Փաստեր հարցազրույցներից/հանդիպումներից

ԿԳՆ

- 6.1.1 Փորձագետների հետ բուհերում գիտական հետազոտությունների ներմուծման կարևորության մասին քննարկման արդյունքում Կրթության և գիտության փոխնախարարը ընդունեց, որ հետազոտությունների «հին» համակարգը դեռևս պահպանվում է առանձին գիտահետազոտական ինստիտուտների, այլ ոչ թե համալսարանների տեսքով: Այնուամենայնիվ, կառավարությունը փորձում է զարգացնել հետազոտությունների համար ռեսուրսները բուհերում: Օրինակ, որոշ գիտահետազոտական ինստիտուտներ տեղափոխվել են համալսարաններ՝ հասկապես հետբուհական գործունեության նպատակով: Ինչ վերաբերում է ֆինանսավորմանը, ապա թեմատիկ ֆինանսավորումը հասանելի է Գիտության պետական հանձնաժողովին դրամաշնորհային հայտ ներկայացնելու միջոցով, և այդ ֆինանսավորումը ստացած հետազոտական խմբերի 90%-ը գտնվում է համալսարաններում: Հիմնական հետազոտական ֆինանսավորումը նույնպես հասանելի է, օրինակ, եթե ենթադրվում է, որ այն աջակցում է ուսանողների հետազոտություններին:

Միջազգային կազմակերպություններ

- 6.1.2 Ի հակառակ դրան, միջազգային կազմակերպություններից մեկի ներկայացուցիչը փորձագետներին հանդիպման ժամանակ նշել է, որ հետազոտական ֆինանսավորման հարցերում արձանագրվել է սահմանափակ առաջընթաց : Տեսականորեն, ֆինանսավորման 70% -ը պետք է տրվի համալսարանների, սակայն նրանք մրցակցում են գիտահետազոտական ինստիտուտների հետ: Այդ ներկայացուցիչը նշել է, որ գիտահետազոտական ինստիտուտները բավականին նորարարական չեն, և նորարարությունը կախված է միջազգային ֆինանսավորումից: Այդ ներկայացուցիչը գտնում է, որ առկա է պառակտում համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների միջև:
- 6.1.3 Մեկ այլ միջազգային կազմակերպության ներկայացուցիչներ նույնպես ընդգծեցին հետազոտության բացակայությունը՝ որպես ԲԿ համակարգային մաս: Նրանք չեն կարծում, որ դրա դեմ արդյունավետորեն պայքարում են՝ չնայած «պատահական դրամաշնորհային հատկացմանը», նույնիսկ հետազոտությունների համար միջազգային աղբյուրներից հասանելի դրամաշնորհների դեպքում (Համաշխարհային Բանկ):
- 6.1.4 Սակայն, երրորդ միջազգային կազմակերպության ներկայացուցիչները դրական վերաբերվեցին Համաշխարհային Բանկի «աշխատանքին» հետազոտության խնդիրների շուրջ գիտահետազոտական ինստիտուտներում և համալսարաններում:

6.2 Փաստեր գրականությունից

2012թ. Տեմպուսի Ձեկույց

- 6.2.1 2012թ Տեմպուսի զեկույցում ընդգծվել է, որ բուհերում ֆինանսավորվում է ուսուցումը , այլ ոչ թե հետազոտությունը (տե՛ս Տեմպուս 2012թ., էջեր 5-6): Դա հանգեցրել է ուսուցման և հետազոտության միջև արհեստական տարանջատմանը, քանի որ տարբեր գիտահետազոտական ինստիտուտներ ստացել են անմիջական պետական ֆինանսավորում Գիտության Ազգային Ակադեմիայի (ԳԱԱ) միջոցով՝ դրանով իսկ ապահովելով « ավելի լավ հետազոտական պայմաններ, քան համալսարանները»(տե՛ս նույն տեղում, էջ 7):

2013թ. Համաշխարհային Բանկի Ձեկույց

- 6.2.2 2013թ Համաշխարհային Բանկի զեկույցում նաև ընդգծվել են խնդիրներ՝ կապված համալսարանական սեկտորում հետազոտության կան աշխատանքը ինտեգրելու անհաջողության հետ, ինչպես նաև հետազոտության ֆինանսավորման հետ կապված խնդիրներ: ԳԱԱ-ը՝ որպես «բարձրագույն պետական գիտահետազոտական ինքնակառավարվող կազմակերպություն, որը միավորում է ավելի քան 34 գիտահետազոտական ինստիտուտներ և այլ կազմակերպություններ», բնորոշվում է որպես «Խորհրդային Ժառանգության» մաս: Սակայն, զեկույցում նշվում է, որ Գիտությունների Ազգային Ակադեմիայի 2011թ.

Օրենսդրությունը, ըստ էության, տվել է ԳԱԱ-ին ԿԳՆ-ից «ավելի ինքնուրույն իրավական կարգավիճակ» (Համաշխարհային Բանկ 2013թ., էջ 8):

Համաշխարհային Բանկի զեկույցը նաև պնդում է, որ այլ օրենքները սահմանափակում են բուհերի ներգրավումը հետազոտության և զարգացման մեջ: Բուհերը առևտրային գործունեությունից սահմանափակող ՊՈԱԿ-ների մասին օրենքը նշանակում է, որ բուհը չի կարող զբաղվել հետազոտությամբ, եթե այն ընդգրկված չէ բուհի կանոնադրության մեջ՝ առևտրային գործունեության հատուկ ցուցակում: «Գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքը տալիս է հետազոտությունների համար ոչ համարժեք դրդապատճառներ հետազոտական արդյունքների համար մտավոր սեփականության շուրջ ոչ հստակ ձևակերպումների պատճառով (տե՛ս նույն տեղում, էջեր 30-31):

2013թ. Բաց Հասարակության զեկույց

- 6.2.3 2013թ Բաց Հասարակության զեկույցում նաև մեկնաբանվել է հետազոտության և ուսուցման տարանջատումը: Այդ զեկույցը պնդում է, որ «հետազոտական արտադրությունը՝ ինչպես բարձրագույն ուսումնական հաստատությունների, այնպես էլ անհատ գիտնականների մակարդակով, կարծես, էապես թերզարգացած է, և, ըստ էության, անտեսված և թերագնահատված»: Դրա արդյունքում համալսարանական կրթությունը «առկա գիտելիքի վերարտադրման» մասին է, մինչդեռ «նոր գիտելիքի ստեղծման գործընթացը» «ընդհանրապես դեր չի խաղում կամ խաղում է նվազագույն դեր համալսարաններում» (Բաց հասարակություն 2013թ., էջ 21): Բաց հասարակությունը շարունակում է կատարել իր ընդարձակ գործը՝ «հետազոտությունը Հայաստանի համալսարաններ տեղափոխելու համար»: Այդ գործը ներառում է տնտեսության և հասարակության մրցակցային գիտելիքի զարգացման նպաստումը, բուհի ընդունակ աշխատակազմի պահպանումը, ուսանողների և աշխատակազմի խթանումը ուսուցման գիտահետազոտական միջավայրի միջոցով (տե՛ս նույն տեղում, էջեր 22-23):

Առաջարկություն 6-րդ բաժնից

Հետևյալ հատուկ առաջարկությունները բխում են սույն բաժնի բովանդակության և վերլուծության հիմնական հայեցակետերից.

Առաջարկություն 6՝

ՀՀ կառավարությունը պետք է ապահովի ակադեմիական գիտահետազոտական գործունեության լիարժեք ինտեգրումը համալսարանական սեկտորում: Կառավարության ֆինանսավորման մոդելները պետք է արտացոլեն դա, այդ թվում՝ պետք է հեռացվեն ցանկացած իրավական խոչընդոտներ, որոնք ներկայումս կապված են ՊՈԱԿ-ների մասին օրենքի հետ և «Գիտական և

գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի հետ: ՀՀ հետազոտական համայնքը պետք է ընդունի, որ հետազոտական գործունեության ծավալման նման փոփոխությունը կարող է հանգեցնել ավանդաբար գոյություն ունեցող գիտական ինստիտուտների անհետացմանը:

7 ՄՈՒԿԱԴՐԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

7.1 Փաստեր հարցազրույցներից/հանդիպումներից

ԿԳՆ

7.1.1 Կրթության և Գիտության փոխնախարարը և նրա աշխատակիցները նշեցին, որ կադրերի ընտրությունը պետք է դիտարկել որպես համալսարանների պատասխանատվություն, և որ ՄՌ կառավարման խնդիրները պետք է ուսումնասիրվեն համալսարանների հետ համատեղ: Գոյություն ունեն պետական պահանջներ դասախոսից դոցենտ, ապա պրոֆեսոր աճելու համար: Նախարարությունը շատ բողոքներ չի ստացել նման խնդիրների վերաբերյալ : Իհարկե, ռեկտորը ընտրվել է Խորհրդի կողմից և դեկանները նույնպես «ընտրվել» են:

Միջազգային կազմակերպություններ

7.1.2 Փորձագետների հետ հանդիպած միջազգային կազմակերպություններից մեկն ընդգծել է, որ կադրերի նշանակման գործընթացները թափանցիկ չեն եղել: Կա Գիտությունների Թեկնածու լինելու պահանջը, սակայն «լավագույն ուսանողները» նույնպես հակված են աշխատանք ստանալու իրենց համալսարաններում: Նշանակման հետ կարող է առնչվել քաղաքական իրավիճակը, ինչպես նաև հովանավորչությունը: Մասնավորապես, այդ ներկայացուցիչները պնդում են, որ մի շարք երիտասարդ, վերջերս նշանակված փոխռեկտորների քաղաքական կուսակցության անդամներ են:

7.1.3 Մեկ այլ միջազգային կազմակերպության ներկայացուցիչ ասաց, որ համալսարաններում քննադատները՝ աշխատակիցներ, թե ուսանողներ, իրենց զգում են «սպառնալիքի տակ»: Համալսարաններում ՄՌ կառավարումը դեռևս ունի զարգացման կարիք: Դեկանները գործում են տեղական կանոնակարգերի և օրենքների ներքո: Ռեկտորների պաշտոնավարման ժամկետները կարող են եկարաձգվել համալսարանների՝ հիմնադրամի կարգավիճակ ստանալու դեպքում:

7.1.4 Երրորդ միջազգային կազմակերպության ներկայացուցիչները նաև վեր հանեցին համալսարանների կադրային խնդիրները: Նրանք հայտնեցին, որ կա համալսարանների աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացման անհրաժեշտություն: Նրանք նաև մեկնաբանեցին համեմատաբար

ցածր աշխատավարձերը և համաձայնեցին, որ աշխատակիցները հակված են այլ աշխատանք գտնելու:

Համալսարանների փոխտեկտորները

- 7.1.5 Փորձագետները երկար հանդիպում են անցկացրել խոշոր պետական համալսարանների տասներկու փոխտեկտորների հետ: Դա փորձագետների համար մի հետաքրքրաշարժ հանդիպում էր, որը հանդիսացավ մեկնաբանությունների համար հարուստ աղբյուր, մասնավորապես՝ ինչ վերաբերում է ընթացիկ 7-րդ բաժնին և դրան հաջորդող 8-րդ բաժնին:

Աշխատավարձեր

Համալսարաններից մեկի փոխտեկտորը վճռականորեն բարձրացրեց աշխատակիցների աշխատավարձերի մասին հարցը: Նշվեց, որ կոռուպցիան նվազեցնելու միակ իսկապես արդյունավետ միջոցը աշխատավարձերի բարձրացումն է: Մինչ անդրադարձ է կատարվել վերջին երկու 40% բարձրացումներին՝ ունենալով, որպես հետևանք, աշխատավարձի կրկնապատկում, նշվել է, որ գնաճի հետևանքով նվազել է այդ աշխատավարձի բարձրացումների նշանակությունը: Իհարկե, փոխտեկտորների միջև քննարկման արդյունքում ընդունվել է, որ միայն աշխատավարձի բարձրացումը չի կարող վերացնել կոռուպցիան, և, ի վերջո, անհատներն իրենք պետք է ցույց տան իրենց հավատարմությունը բարոյական վարքագծի սկզբունքներին: Խստորեն նշվել է նաև, որ պետությունը և համալսարանի ղեկավարությունը պետք է «արմատախիլ անեն» և «պատժեն» կոռուպացված աշխատակիցներին:

Ի հավելում աշխատավարձերին, փոխտեկտորներից մեկը նշեց, որ իրենք գուցե ավելի ցածր աշխատավարձ ունեն, քան փոխղեկանները: Փոխտեկտորն ընդգծեց, որ ինքն անձամբ ունի երկրորդ աշխատանք: Նա պնդեց, որ տարբեր համալսարաններում կան աշխատավարձերի զգալի տարբերություններ, օրինակ Ամերիկյան Համալսարանում դրանք ավելի բարձր են, սակայն տարբերություններ կան նաև պետական համալսարանների միջև: Ավագ գիտաշխատողների աշխատավարձերը պետք է բարձացվեն, օրինակ՝ համալսարանի ներսում SS ղեկավարը կարող է ավելի շատ վաստակել, քան ավագ գիտաշխատողը, թեև գուցե ավելի քիչ, քան կկարողանար ունենալ համալսարանական սեկտորից դուրս:

ՄՌ կառավարման համակարգերը և կադրային խնդիրները

Հանդիպման ժամանակ փոխտեկտորներից մեկը ներկայացրել է «թույլ» ՄՌ կառավարման համակարգի մասին խնդիրը: Այն առաջացրեց ընդհանուր ՄՌ և կադրային խնդիրների շուրջ համընդհանուր «թեժ» քննարկում փոխտեկտորների միջև:

Նշվել է, որ այս ոլորտում առկա են համակարգային խնդիրներ:

Մեկնաբանություններ են արվել, որ զբաղվածության ոլորտում «կոլեկտիվ պայմանագրերն» ավարտվել են (օրինակ՝ համաձայնագրեր, որոնք կանխարգելում են մոտիկ հարազատների աշխատանքը միևնույն սեկտորում որպես բարեկամներ), և անհրաժեշտ են նոր ՄՌ «հանձնաժողովներ» յուրաքանչյուր պաշտոնի համար հստակ աշխատանքային նկարագրեր և անձի բնութագրեր ներկայացնելու նպատակով:

Կա անհրաժեշտություն հստակորեն որոշելու, թե համալսարանների դասավանդողները կարող են արդյոք «պատշաճ կերպով կատարել իրենց աշխատանքը», օրինակ՝ ունենալ դասավանդողի գնահատման համակարգ, որը կներառի ուսանողի գնահատականները և դասի դիտարկումը, դրանով իսկ ստեղծելով նախադրյալներ համապատասխան «դասավանդողի վերապատրաստման» համար:

Փոխտեկտորներից մեկը մասնավորապես նշեց, որ անհրաժեշտ է ունենալ պաշտոնների համար բաց մրցակցության մշակույթ: Ներկայումս, երբ գոյություն ունեն որոշակի մրցակցային մեխանիզմներ, միևնույն է՝ «Դեկանն ում ցանկանա ընդունել, կլինի ընդունված»: Ըստ փոխտեկտորի, դասախոսը պետք է փոխարինվի հինգ տարի հետո, սակայն նրա հաստիքի մասին չի հայտարարվում, հետևաբար փաստացիորեն լինում է միայն մեկ թեկնածու: Դա, կարելի է ասել, «ընկերական» համակարգ է՝ հատկապես հաշվի առնելով, որ դեկանն ընտրվում է Գիտական խորհրդի կողմից: Ընտրություն, իհարկե, չի կայանում մեկ թեկնածուի առկայության դեպքում: Եթե կան մի քանի թեկնածուներ, ապա ուսանողներն ունեն ընտրաձայների 25% -ը, սակայն եթե դասախոսները նույնպես մասնակցում են ընտրությանը, ապա վերջիններս կարող են «չեզոքացնել» ուսանողներին:

Դրան հաջորդող ընդհանուր քննարկման ժամանակ պարզվեց, որ չկա օրենքով սահմանված մրցույթների իրականացման խիստ պարտավորություն: Համալսարանները, ինչպես պարզվեց, ունեն ներքին կանոնադրական ակտեր նախագահների և դեկանների նշանակումները կառավարելու համար: Համալսարաններից մեկը նշեց, որ դեկանները կարող են միայն ծառայել առավելագույնը երկու հնգամյա ժամկետով, իսկ մեկը կարծես նշեց, որ նրա դեկանները նշանակվել են նախագահի կողմից, այլ ոչ թե ընտրությամբ:

Բաց հայտարարության պայմաններում, ընտրված պաշտոններից բացի, թվում էր, թե պաշտոնները հայտարարվում են թերթերում և բաց են համալսարանից դուրս գտնվող դիմողների համար (բայց սա կարծես չի կիրառվում պայմանագրերի «թարմացման» համար՝ (տե՛ս վերևում): Համալսարաններից մեկն ընդգծել է, որ նա, իհարկե, նոր մասնագիտությունների համար ընդունում է թեկնածուներ դրսից:

Այնուամենայնիվ, նշվել է նաև, որ այդ նշանակումները հավանաբար արվել են առանց բաց մրցույթի՝ «Նախագահի հրամանագրով» սովորաբար կատարվող

նշանակումներ, որոնք ունեն համալսարանից դուրս ընտրության հնարավորություն՝ այդ «հրամանագրի» ներքո: Նշվել է նաև, որ այդ «գործող» նշանակումները կարող են օգտագործվել որպես մեկնարկային ուղի նշանակումներում «արտոնյալ վերաբերմունք» ցուցաբերելու համար:

Ի ամփոփում ՄՌ կառավարման համակարգերի և կադրային խնդիրների, պետք է նշել, որ միգուցե հաստատությունների միջև կան տարրերի վերաբերյալ մոտեցման որոշ տարբերություններ: Այնուամենայնիվ, երևում է նաև, որ ընդհանուր համաձայնությունը դրա հիմքում ընկած հարցերի շուրջ պետք է քննարկվի բոլոր հաստատություններում:

7.2 Փաստեր գրականությունից

2013թ. Համաշխարհային Բանկի Ձեկույց

7.2.1 2013թ Համաշխարհային Բանկի զեկույցում ամբողջովին մեկնաբանվել են ԲԿ-ում կադրային խնդիրները: Ձեկույցում մասնավորապես ընդգծվել է նշանակման պրոցեսներում բաց մրցույթի պակասը, հատկապես ավագ պաշտոնների համար (Համաշխարհային Բանկ 2013թ., էջեր 28), ինչպես նաև աշխատակիցների արդյունավետության լավ զարգացած գնահատման բացակայությունը (տե՛ս նույն տեղում, էջեր 31-33):

2013թ. Բաց Հասարակության զեկույց

7.2.2 2013 թ. Բաց Հասարակության զեկույցում նույնպես քննարկվել է ԲԿ-ում աշխատանքային պայմանագրերի հետ կապված խնդիրները, հատկապես պայմանագրերի պարբերական երկարաձգման անհրաժեշտության հետ կապված ակադեմիական ազատ խոսքը սահմանափակելու հակվածությունը (Բաց Հասարակություն 2013 թ., էջ 15):

Աթենա ծրագիր

7.2.3 Աթենա ծրագիրն բաղկացուցիչ մաս է կազմում համալսարանների կարողությունների զարգացումը մարդկային ռեսուրսների կառավարումը արդիականացնելու միջոցով («Ի՞նչ է Աթենան» կայքը): 2015թ. Փետվարին Ամստերդամի Համալսարանում կայացած Աթենա ուսուցողական սեմինարի շրջանակներում վերջնական ծրագրում՝ հատուկ ուշադրություն է առանձնացվել համալսարաններում մարդկային ռեսուրսների կառավարման և աշխատակիցների զարգացման վրա (տես Աթենայի կայքը):

Սեմինարի ելույթների ընթացքում կարևորել են ՄՌ վերաբերյալ մարտահրավերները, ներառյալ՝ ռազմավարական կադրային քաղաքականության զարգացումը, համալսարանի աշխատակազմի թափանցիկ հավաքագրումը, հստակ մասնագիտական աճի ուղիները, իրավահաջորդության պլանավորումը, երիտասարդ տաղանդների զարգացումը և առաջխաղացումը, ինչպես նաև

համապարփակ կառավարման միջին օղակի պակասը (Թոմաս Էսթերման "Ժամանակակից Մարդկային ռեսուրսների կառավարումը համալսարաններում", տես Աթենայի կայքը):

Այս վերլուծության հայեցակետերը նաև խստորեն շեշտվել են Երևանում 2014թ. Մարտին կայացած Աթենայի Հայաստանի ազգային սեմինարի ժամանակ (տես Թոմաս Էսթերման, Եվրոպական Համալսարանների Ասոցիացիա, "Համալսարանների Ինքնավարության վիճակը Հայաստանում՝ արտաքին վերլուծություն" Աթենայի կայքը):

Այս ելույթում մասնավորապես ընդգծվել են սահմանափակումները համալսարանների ՄՌ մոտեցումներում, ինչպես, օրինակ, դասախոսական անձնակազմի աշխատանքի ընդունման ընթացակարգերը, որը ստեղծվում է ներքին կարգով բուհի օրենքներով, բուհի աշխատակիցների համար՝ կարգավորելով ոչ քաղաքացիական ծառայողի կազավիճակը և պաշտոնանկությունը ընդհանուր աշխատանքային օրենսգրքով, աշխատանքի ընդունման գործընթացները՝ հիմնված ֆիքսված 5 տարի ժամկետով ընտրությունների վրա՝ այսպիսով խրջնդոտելով պրոֆեսորադասախոսական կազմի առաջխաղացման հնարավորությունները և ստեղծելով չափազանց մեծ անկայունություն: Մյուս կողմից, այս ելույթում նշվել է, որ համալսարանները ունեն աշխատավարձերի հարցում ինքնավարություն, սակայն խնդիրը կայանում է գրավիչ աշխատավարձեր սահմանելու համար ֆինանսավորման բացակայության մեջ:

Ուստի, Աթենա ծրագրի նյութերը ցույց են տալիս, որ նախկին ծրագրով արդեն սահմանվել են հիմնական խնդիրներից շատերը, որոնք պետք է հասցեագրվեն ՄՌ և կադրերի համալրման ոլորտներում:

Լա ՄԱՆՇ ծրագիր

7.2.4 Լա ՄԱՆՇ ծրագրում ներառված է մասնակից համալսարաններում կառավարման հնարավորությունների կառուցման վերաբերյալ աշխատանքը: Այն ներառում է ներուժի զարգացմանն ուղղված գործունեություն, այդ թվում կրթական ծրագրերի և մեթոդական նյութերի մշակումը առաջնորդության և փոփոխության կառավարման ոլորտում, ինչպես նաև դասավանդողների վերապատրաստումը այդ նույն ոլորտում:

Լա ՄԱՆՇ ծրագիրը ներառում է հատուկ աշխատանքային փաթեթներ (ԱՓ)՝ «Առաջնորդության և կառավարման հմտություններ և մոդելներ», «Բարձրագույն կրթության ոլորտում նորարար կառավարման փորձեր», «Վերապատրաստում առաջնորդության և փոփոխության կառավարման վերաբերյալ», «Բարձրագույն կրթության ոլորտում առաջնորդության և փոփոխության կառավարման ռազմավարության մշակում»:

Լա ՄԱՆՇ-ի որոշ նյութերն ակնհայտորեն կապված են առաջնորդության և կառավարման տեսությունների և պրակտիկայի ընդհանուր , այդ թվում՝ փոփոխության կառավարման մոտեցումների հետ, այլ ոչ թե մասնավորապես ՄՌ կառավարման խնդիրների: Օրինակ, այն կիրառվել է "Առաջնորդություն և Փոփոխության կառավարում" հարցի մասին Լա ՄԱՆՇ-ի Դասավանդման և ուսումնառության ռեսուրսներում (տե՛ս Լա ՄԱՆՇ-ի կայքը)

Մյուս կողմից, Լա ՄԱՆՇ-ի այլ նյութեր հստակորեն ավելի սերտորեն վերաբերում են կոնկրետ համապատասխան ՄՌ կառավարման խնդիրներին: Օրինակ, Լա ՄԱՆՇ ծրագրի Արտաքին գնահատման հաշվետվությունը: Առաջնորդություն և կառավարման հմտություններն ու մոդելները Հայաստանի, Բելառուսիայի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի բարձրագույն ուսումնական հաստատություններում (2013թ - տես Լա-Մանշի կայքը) ներառում է «Առաջնորդության կառավարման հմտությունները և մոդելները Հայաստանում» գլուխը (էջեր 9-19):

Սույն գլուխը միտված է ավելի մեծ ուշադրություն դարձնելու մասնավորապես ՄՌ հարցերին: Տրամադրելով "Մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների ընդհանուր նկարագիրը"՝ տրվում է, ընդհանուր առմամբ, մի շարք փորձերի դրական նկարագրություն, ինչպես աշխատակազմի վերապատրաստման ապահովումը, աշխատանքի կատարման գնահատումը, "հստակ սահմանված" պահանջները դոցենտից պրոֆեսոր դառնալու համար (էջեր 14-16):

Այս նկարագրությունը նաև վերաբերում է Հայաստանում որոշակի հարցերին, օրինակ՝ աշխատանքային պայմանագրերն ունեն սահմանված ժամկետ, "որպես կանոն՝ 5 տարի", և պայմանագրերը չունեն դրույթներ "դասավանդողին իր պարտականություններից հեռացնելու գործընթացների համար, եթե այդ պարտականություններն ակնհայտորեն շարունակում են անարդյունավետ լինել" (էջ 14): Ռեկտորի պաշտոնի նշանակումը իրականացվում է ԿԳՆ-ի կողմից (տես նույն տեղում): Չկա "ոչ մի հստակ մեխանիզմ հակամարտությունների կառավարման համար" (էջ 16):

"Մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացներում ծառայած հիմնական մարտահրավերների" ամբողջական ցանկը ներկայացված է ստորև (էջեր 16-18): Ցանկում առկա են քսանինը մարտահրավերներ: Հետաքրքիր է, որ տվյալ նպատակների համար նրանց թվում է նաև "Որոշ աշխատակիցների ցածր պրոֆեսիոնալիզմը խոչընդոտներ է ստեղծում համալսարանի կողմից բարձրակարգ ծառայություններ մատուցելու համար" խնդիրը (էջ 18): Այդ ցանկում ներառված է նաև "Երիտասարդ մասնագետները ավելի հետաքրքրված են աշխատանք գտնելու որևէ կազմակերպությունում, քան դիմելու Մագիստրատուրա կամ Ասպիրանտուրա այն փաստի պատճառով, որ

բարձրակարգ մասնագետների աշխատավարձը տեղական աշխատանքի շուկայում 2-3 անգամ ավելի բարձր է, քան համալսարանում" (էջ 17):

Լա ՄԱՆՇ ծրագիրը ստեղծել է նաև «Փոփոխվող Բարձրագույն կրթության հաստատությունները անցումային հասարակության մեջ՝ Մանրամասն ուսումնասիրության հաշվետվություն» (2014 - տես Լա-ՄԱՆՇ կայքը): Հայաստանի օրինակներից մեկն է Գավառի Պետական Համալսարանը "Ակադեմիական ազնվության քաղաքականությունում" (Գլուխ 26, էջեր 382-391): Այն ներառում է "դասախոսների և համալսարանի աշխատակազմի միջև պատասխանատվության բարձրացման" մասին շեշտադրումը (էջ 382):

Ուստի, ինչպես Աթենայի նյութերում, այնպես էլ Լա ՄԱՆՇ-ի նյութերում նույնպես ցույց է տրվում նախորդ Նախագիծը, որն արդեն ի հայտ է բերել հիմնական խնդիրներից շատերը, որոնք անհրաժեշտ է լուծել ՄՌ և կադրային ապահովման համար:

Եվրոպայի խորհրդի ընթացիկ ծրագրի համար կարևոր կլինի դուրս գալ այդ խնդիրների նույնականացման գործընթացից դրանց համապատասխան նոր մոտեցումներ մշակելու համար (տես առաջակություններ 7(a) և (c), և դրանց հաջորդողը՝ 13(b)):

Առաջարկություններ 7-րդ բաժնից

Հետևյալ հատուկ Առաջարկությունները բխում են սույն բաժնի բովանդակության և վերլուծության հիմնական հայեցակետերից.

Առաջարկություն 7(ա).

Բավականին մեծ աշխատանք է ձեռնարկվել Հայաստանի բուհերի ՄՌ միջավայրում կադրային խնդիրների բացահայտման, ինչպես նաև իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Արդեն բացահայտված հիմնական հարցերը ներառում են՝ նշանակումներ կատարելիս թափանցիկության և օբյեկտիվ, բաց մրցակցության պակասը, այդ թվում՝ բարձր պաշտոններում ընտրությունների ժամանակ, աշխատավարձերի ոչ պատշաճ մակարդակը, աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացման հնարավորությունների բացակայությունը, աշխատակազմի արդյունավետ գնահատման անհամապատասխան համակարգերը, հնգամյա աշխատանքային պայմանագրերի օգտագործումից բխող հիմնախնդիրները, էական անհամապատասխանությունները տարբեր բուհերի ՄՌ մոտեցումների միջև:

Հետագա գործունեությունը պետք է կենտրոնացած լինի այսպիսի հարցերի արդյունավետ լուծման վրա, այլ ոչ թե կրկնի արդեն լուծված հարցերի վերաբերյալ հետազոտությունները:

Առաջարկություն 7(բ).

7 (ա) առաջարկությունում նշված ՄՌ կադրային հարցերին արդյունավետ պատասխաններ մշակելիս՝ ՀՀ կառավարությունն ու ԲԿ համայնքը պետք է մեծապես ներգրավված լինեն մի երկխոսության մեջ՝ կապված կառավարության և բուհի պատասխանատվության և գործողությունների միջև հավասարակշռության հաստատման հետ:

Չնայած որ բուհի ինքնավարության ապագա կարևորությունը արդեն իսկ ընդգծվել է (տե՛ս 3 (ա) առաջարկությունը՝ վերևում), ԲԿ հանրությունը պետք է պատրաստ լինի ընդունել, որ հնարավոր են ԲԿ առաջնային օրենքի որոշակի փոփոխություններ՝ ստեղծելու համար բուհական համակարգի ՄՌ կադրային գործունեության որոշ հայեցակետերի հետ կապված հետևողականորեն խթանիչ օրենսդրական դաշտ :

Նաև կառավարությունը պետք է պատրաստ լինի ընդունել, որ այն չի կարող պարզապես խուսափել հանրային շահերի պարտականություններից այս տարածքում՝ պնդելով, որ այդ հարցերը վերաբերվում են միայն բուհերին:

Առաջարկություն 7(գ).

Բավականին մեծ աշխատանք արդեն իսկ ձեռնարկվել է միջազգային ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում, որոնք ուղղված են ԲԿ ոլորտի աշխատակազմի զարգացմանը ՄՌ ղեկավարման և կառավարման ոլորտում ընդհանուր եվրոպական լավագույն փորձի հիման վրա , որը կօգնի լուծել որոշ խնդիրներ, որոնք ամփոփված են առաջարկություն 7(ա)-ում:

Հետևաբար, ապագա գործողությունները ընթացիկ Եվրոպական խորհրդի ծրագրի շրջանակներում պետք է կենտրոնացվեն՝ հայտնաբերելու և զարգացնելու լրացուցիչ նոր մոտեցումներ այս ոլորտում: Ինչպես մանրամասնած է 13 (բ) առաջարկությունում ստորև, առաջարկվող լրացուցիչ մոտեցումները կքննարկեն աշխատակիցների էթիկայի սկզբունքների նորմերը / ցուցանիշները և բարոյական վարքագիծը:

8 ՈՒՍՈՒՑՄԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ և ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԻՋև (և ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ)

8.1 Փաստեր հարցազրույցներից/հանդիպումներից

ԿԳՆ

Կրթության և գիտության նախարարը

- 8.1.1 Կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերման գործում Կրթության և գիտության նախարարը մեծ ուշադրություն է դարձնում ուսանողների վարքագծի վրա (թեև, ընդհանուր առմամբ, նա պնդում է, որ կրթության մեջ կոռուպցիան միաժամանակ նաև բարձր է կառավարության հարցման կոռուպցիայի ընկալման ցուցանիշում, օրինակ կրթությունն այլևս չի գտնվում Թրանսփարենսի Ինթերնեշնլ-ի կոռուպցիոն տարածքների 'եռյակում')

Կրթության և գիտության նախարարը հայտարարել է, որ որոշ հայ ուսանողներ «խելացի» են կոռուպցիայի պատնեշները շրջանցելու հարցում: Նա նշել է, որ խնդիրը չի կայանում նրանում, որ կոռուպացված աշխատակիցները խնդրում են ուսանողներին վճարել և այլն... «Լավ» ուսանողները ստիպված չեն եղել վճարել և այլն... Խնդիրն այն է, որ «վատ» ուսանողները պատրաստ են վճարել և նրանք հանդիսանում են «վատ» աշխատակիցների թիրախը: Հետագայում, դա հայտնի է դառնում հանրությանը, օրինակ, որովհետև «վատ» ուսանողներն իրենք են դա տարածում: Սա իր հերթին ստեղծում է ուռճացված պատկերացում խնդրի մասշտաբների մասին: Համակարգում ամենախոցելի կետը «քննական շրջանն» է: Վճարումը կատարվում է որպես «գնահատական ստանալու այլընտրանքային միջոց»:

Նախարարը նշեց, որ ուսանողի իրավունքներն ու արտոնությունները մեծացել են, այդ թվում՝ առաջընթացում և կոռուպցիայի մասին տեղեկատվության փոխանցման հարցում: Թեև կա ազդեցիկ փոքրամասնություն, որը համառորեն դիմադրում է կոռուպցիային : «Հանրային» համալսարանները այժմ ավելի ինքնավար են, քան նախկին «պետական» համալսարանները, և նախարարի անմիջական լծակները տեղափոխվել են համալսարանի խորհուրդ: Հիմա շատ բան կախված է Ռեկտորների կողմից համապատասխան կառավարման մոտեցումներ ընդունելուց «վատ» աշխատակիցների հետ խնդիրները լուծելու հարցում:

Նախարարը նշեց, որ «բարձր մակարդակով համալսարաններն ունեն կոռուպցիայի ցածր մակարդակ, իսկ «ցածր մակարդակով» համալսարաններում կոռուպցիայի մակարդակն ավելի բարձր է:

Կրթության և գիտության փոխնախարար

- 8.1.2 Կրթության և Գիտության փոխնախարարը նշել է, որ այն աշխատակիցները, ովքեր պահանջում են ուսանողներին ձեռք բերել իրենց հեղինակած դասագրքերը, կարող են խնդիր հանդիսանալ: Այնուամենայնիվ, եղել է ոչ այնքան շատ մասնավոր կրկնուսուցում ուսանողների համար իրենց ուսման ընթացքում (չնայած դեռևս առկա է համալսարանի աշխատակազմի կողմից իրականացվող որոշ մասնավոր

կրկնուսուցում ընդունելության համար)։ Մյուս կողմից, Նախարարությունը չի ստացել որևէ բողոք դրա վերաբերյալ։

Միջազգային կազմակերպություններ

- 8.1.3 Միջազգային կազմակերպություններից մեկի ներկայացուցիչները փորձագետներին հանդիպման ժամանակ տվեցին իրենց մեկնաբանությունները կոռուպցիայի, խարդախության և դասագրքի վաճառքի վերաբերյալ։ Այդ ներկայացուցիչները նույնպես նշեցին, որ «ավելի հեշտ» է ավարտել դասընթացները, քան ստանալ դրանց մուտքի իրավունքը։ Ուստի, մասնավոր կրկնուսուցումը ԲԿ համակարգում չի եղել «էնդեմիկ» և, իրոք, միշտ տարածված է եղել «թույլ» ուսանողների շրջանում։

Համալսարանների փոխտեկտորները

- 8.1.4 Վերոնշյալ 7-րդ բաժնում արդեն քննարկված համալսարանի փոխտեկտորների հետ հանդիպման ժամանակ, համալսարաններից մեկը նկարագրել է դրա կիրառումը «քննական վերահսկման համար թափանցիկ համակարգերում», ինչպես նաև գնահատման կանոնները և դրանց բողոքարկումը։

Մեկ այլ համալսարան երկարատև նկարագրել է իր առանձնահատուկ ուշադրությունը կոռուպցիոն ռիսկերի լուծման վերաբերյալ կիսամյակային քննությունների ժամանակ՝ կազմակերպելով «բոլորի, այդ թվում՝ ծնողների համար բաց» քննություններ, բոլոր քննությունները գրավոր են (չնայած որոշ առարկաներում դա դժվար էր), ինչպես նաև վերահսկիչ կազմ, որտեղ ընդգրկված է համալսարանի նախագահի աշխատակազմը, համալսարանի Որակի կառավարման համակարգը, դեկանատները, ամբիոնների վարիչները և այլ դասախոսական անձնակազմ։ Տարվել են քննարկումներ քննությունների արդյունքների վերաբերյալ բոլոր ուսանողների հետ դեկանատների ներկայությամբ։

Նույն հանդիպման ժամանակ, համալսարաններից մեկի փոխտեկտորը ընգծել է ուսանողների այն «փոքրամասնության» խնդիրը, ովքեր չեն հաճախել կամ չեն սովորել։ Այդ ուսանողների հետ տարվել է «ինտենսիվ աշխատանք»։

Այդ փոխտեկտորը նաև մեկնաբանել է ուսանողական վարձերի վճարումների ռոտացիոն համակարգի բացահայտ իրականացման կարևորությունը, ինչպես նաև, ոչ մի բողոք չի ներկայացվել այդ հարցով ուսանողների կողմից։

Մեկ այլ փոխտեկտոր նաև ամբողջությամբ նկարագրել է , թե ինչպես է իր համալսարանը մշակել հակակոռուպցիոն ռազմավարություն քննությունների համար, որոնք անցկացվել են միայն «գրավոր», կենտրոնացված, համակարգչային գնահատմամբ, ինչպես նաև վերահսկման նպատակով տեսալսողական սարքերի կիրառմամբ։ Բոլոր քննությունների արդյունքները հրապարակվել են և, հետևաբար, ուսանողները տեսել են իրենց համակուրսեցիների ստացած

գնահատականները: Յուրաքանչյուր քննությունից հետո առկա է հստակ բողոքարկման համակարգ: Գնահատականների տրման համակարգը մանրամասնորեն ստուգվում է: Առարկայի պրակտիկ քննությունների ժամանակ «մարդկային գործոնը» վերացել է պրակտիկ հմտությունների կենտրոններում մանեկենների կիրառմամբ:

Մեկ այլ փոխտեկտոր կարևորեց որոշակի կոռուպցիոն ռիսկերը «հեռակա ուսուցման» ժամանակ, որտեղ ուսանողները հազվադեպ են հաճախում՝ շեշտը դնելով ինքնուրույն սովորելու վրա: Այդ ուսանողներն ավելի շատ են հակված նախաձեռնելու «կոռուպցիոն» մոտեցումներ՝ պատրաստ լինելով վճարել ուսման պահանջներից խուսափելու համար:

Նույն համալսարանի մեկ այլ փոխտեկտոր ուշադրությունը բևեռեց լավ գնահատականներ ակնկալող «վատ» ուսանողների խնդրի վրա: Նա նկարագրեց մի իրավիճակ, որտեղ «վատ» ուսանողները մնացել են մինչև քննությունների ավարտը՝ «աղաչելով» իրենց լավ գնահատականներ նշանակել: Դա տեղի է ունեցել այն ժամանակ, երբ ոչ համակուրսեցիները և ոչ էլ ծնողները ներկա չեն եղել: Խնդիրն այն է, որ «լավ» ուսանողները հետագայում չեն բողոքում, եթե «վատ» ուսանողները ձեռք են բերում լավ գնահատականներ: Չկա բողոք ներկայացնելու «մտածելակերպ», հենաբար, բողոքները չեն կարող կիրառվել որպես «հակակոռուպցիոն» գործիք: Այդ փոխտեկտորը նաև պնդել է, որ հարկավոր են հակակոռուպցիոն բաղադրիչներ դասավանդվող առարկաներում, ոչ միայն իրավունքի կամ քաղաքագիտության, այլ նաև այլ առարկաներում: Նա կրկնել է իր տեսանկյունն այն մասին, որ խնդիրը այն ուսանողներն են, ովքեր «չեն սիրում խիստ դասախոսներին» և «չեն սիրում շատ աշխատել»:

Ի ամփոփում փոխտեկտորների մեկնաբանություններին, զգալիորեն ավելի կարևոր են դառնում կոռուպացված վարքագծի դեմ պայքարելու միջոցների մշակման նախաձեռնությունները ուսման և ուսուցանման ենթատեքստում, օրինակ՝ քննությունների կազմակերպման շուրջ: Այնուամենայնիվ, փորձագետը նշում է, որ այս խնդիրը ավելի կենտրոնացված է ավելի «մեխանիկական» հակակոռուպցիոն միջոցների վրա և կարող է ընդլայնվել ավելի դրական քննարկումներում էթիկայի սկզբունքների և վարքագծի դրույթների զարգացման ենթատեքստով:

Ուսանողական խմբերի ավագ ներկայացուցիչներ

- 8.1.5 Ավագ կուրսերի ուսանողական ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ուսանողները նշեցին, որ նկատվել է կոռուպցիայի նվազում վերջին տաս տարվա ընթացքում՝ որպես հետևանք ընդունելով էլեկտրոնային տարբերակով քննությունների ներմուծումը: Մյուս կողմից, նրանք նկարագրեցին գնահատման համակարգը, որը լինելով Արևմտյան Եվրոպայից ներմուծված հեռանկար, կարծես, սահմանափակ է իր մոտեցումներով: Համակարգչային քննությունների միակ այլընտրանք են համարվում բանավոր քննություններն (և առնվազն մեկ ուսանողական ներկայացուցիչ անդրադարձել է այն վերականգնելուն իր

առարկայում և, առհասարակ, հաստատությունում): Ըստ երևույթին, չկա ոչ մի օգուտ ուսանողի ընդլայնված գրավոր աշխատանքի անանուն գնահատումից, լինի դա հանձնարարությունների, թե քննությունների ժամանակ: Ուսանողները նաև նշեցին, որ համալսարաններն իջեցրել են չափորոշիչները այն ուսանողների համար, ովքեր «ձախողվում են», և հիմա բավականին հեշտ է հանձնելը: Նրանք քննադատաբար են մոտենում այն փաստին, որ չի պահանջվում աշխատանքի բարձր որակ լավ աշխատատեղ գտնելուն նպաստող աստիճան ձեռք բերելու համար:

Գնահատման համակարգից դուրս գալով ուսանողները նաև տարածեցին կրթության որակի վերաբերյալ այս ընդարձակ քննադատությունը՝ կրթական ծրագրի ավելի լայն ասպեկտներով: Օրինակ, նրանք հակադրեցին Հայերենը և Հայոց պատմությունը սովորելու պահանջը աշխատանքի ընդունման հմտություններով ապահովման վերաբերյալ ուսումնական ծրագրի առաջարկվող թերությունների հետ (օրինակ՝ նրանք նշեցին, որ աշխատակիցները բավարար չափով ակտիվորեն չեն մասնակցում ուսումնական ծրագրի վերաբերյալ քննարկումներում): Ընդհանուր առմամբ, նրանք նշեցին, որ բանիմացությունն ու հմտությունները բավարար կերպով ուղղված չեն դրանց դասավանդմանը և ուսումնառությանը: Բարձրագույն կրթությունը կարող է ավելի քիչ կոռուպացված դառնալ, սակայն որակի խնդիրները դեռևս չեն վերանում:

Ուսանողները նշեցին, որ կա ուսուցման սահմանափակ անանուն գնահատում, և իրենց պարզ չէ, թե ինչ կպատահի, եթե նրանք շատ բացասական գնահատական տան աշխատակազմի վերաբերյալ:

Միջազգային կազմակերպություններ

8.1.6 Դասավանդման և ուսումնառության որակի շուրջ ընդարձակ հարցերի վերաբերյալ միջազգային կազմակերպություններից մեկի ներկայացուցիչները փորձագետներին հանդիպման ժամանակ նույնպես անդրադարձան համալսարանում ուսանողների գնահատմանը, որը մնացել է անհետևողական:

8.1.7 Մեկ այլ միջազգային կազմակերպության ներկայացուցիչներ անդրադարձան Համաշխարհային Բանկի «մրցակցային նորարարության» ֆոնդին: Համալսարանների կողմից կատարվել են առաջարկներ, որոնք կարող են դրականորեն ազդել դասավանդման և ուսումնառության փորձի վրա, օրինակ տրվել է Պետական Բժշկական համալսարանի համար հասանելի ֆինանսավորման վերաբերյալ մի օրինակ, որը նպատակ ուներ հիմնելու կլինիկական պրակտիկայի համար սիմուլյացիայի կենտրոն: Նշվել է, որ յուրաքանչյուր համալսարան աջակցություն է ստացել այդ ֆոնդի կողմից:

Այնուամենայնիվ, փորձագետները հասկացել են, որ ֆինանսավորումը պետք է կապել որևէ կոնկրետ տեխնոլոգիական նորարարության հետ: Ներկա պահին, այն, կարծես, պետք չէ հատկացնել ավելի ընդհանուր մշակումների համար առանց

կոնկրետ տեխնոլոգիական չափանիշի, ինչպես ընդհանուր գնահատման մշակումներն են անանուն նշումների վերաբերյալ: Այնուամենայնիվ, փորձագետները նշեցին, որ նման մշակումները հաշվի կառնվեն:

8.2 Փաստեր գրականությունից

2013թ Համաշխարհային բանկի զեկույցը

- 8.2.1 2013թ Համաշխարհային բանկի զեկույցում կարևորվել են դասավանդման և ուսումնառության կոռուպցիայի խնդիրները: Մասնավորապես, այդ զեկույցում ընդգծվել են քննությունների ժամանակ խարդախության հնարավոր ռիսկերը (տե՛ս Համաշխարհային Բանկ 2013, էջ 35):

2013թ Բաց Հասարակության զեկույց

- 8.2.2 2013թ Բաց հասարակության զեկույցում քննարկվել են «առանց շատ աշխատելու՝ Համալսարանի որակավորում ստացած «անորակ» ուսանողները (տես Բաց հասարակություն 2013թ., էջ 19)՝ կարևորելով հնացած դասավանդման ոճերի հետ հարցերը, որոնք հղում են դեպի «ոչ մոտիվացված» ուսանողների հետ խնդիրներին (էջ 23):

Լա ՄԱՆՇ ծրագիր

- 8.2.3 Լա ՄԱՆՇ ծրագիրը ստեղծել է նաև «Փոփոխվող բարձրագույն կրթության հաստատությունները անցումային հասարակության մեջ՝ Մանրամասն ուսումնասիրության հաշվետվություն» (2014 - տես Լա-ՄԱՆՇ կայքը): Հայաստանի օրինակներից մեկն է Գավառի Պետական Համալսարանը "Ակադեմիական ազնվության քաղաքականությունում" (Գլուխ 26, էջեր 382-391): Այն ներառում է «համալսարանական ուսանողների բարոյական կրթությանն ուղղված ծրագրերի ներմուծման» մասին շեշտադրումը (էջ 384):

Զեկույցը նաև ներառում է ուսումնական բարեփոխումների վերաբերյալ երկու թեմատիկ հետազոտություններ: Իրավիճակային հետազոտություններից մեկը իրականացվել է Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի կողմից՝ «Հնացած ուսումնական ծրագիր և դասավանդման ու տրամադրման մեթոդներ և ժամանակակից աշխատաշուկայի պահանջների հետ նրա համապատասխանելիությունը » թեմայով (Գլուխ 9): Երկրորդ իրավիճակային հետազոտությունը կատարված է Պետական Ճարտարագիտական Համալսարանի (Պոլիտեխնիկ) կողմից «Համալսարան-Արտադրություն համագործակցության մոդելների վրա հիմնված դինամիկ ուսումնական ծրագրի մշակումը և ներմուծումը նորարարական մոտեցումներում» թեմայով (Գլուխ 13): Այս երկու իրավիճակային հետազոտություններն էլ առանձնացնում են ամբողջական փորձեր մշակելու ուսումնական ծրագիր, դասավանդման և ուսումնառության մոտեցումներ՝ կապված ուսանողների ապագա զբաղվածության պահանջների հետ:

Այնուամենայնիվ, թեև Լա ՄԱՆՇ-ի այս նյութերը ոլորտում հնարավոր դրական զարգացումների հետաքրքիր օրինակներ են, դրանք միայն նկարագրություններ են, թե ինչ է հարկավոր ձեռնարկել հետագայում ավելի ամբողջականորեն և ընդարձակ կերպով: Օրինակ, կա «բարոյական կրթության վերաբերյալ ծրագրերի» միայն մեկ հղում, ինչպես նաև դեռևս չմշակված ծրագրեր Գավառի Պետական Համալսարանի և Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի և Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի (Պոլիտեխնիկ) նյութերում, որոնք մասնավորապես ուսումնասիրություններ են որոշակի մասնագիտությունների վերաբերյալ:

Առաջարկություններ 8-րդ բաժնից

Հետևյալ հատուկ Առաջարկությունները բխում են սույն բաժնի բովանդակության և վերլուծության հիմնական հայեցակետերից.

Առաջարկություն 8(ա).

Կրթական և ուսուցման փոխհարաբերությունները ԲԿ ոլորտի աշխատակազմի և ուսանողների միջև պետք է հիմնված լինեն հիմնարար դրական էթիկայի սկզբունքների և էթիկական վարքագծի առավելագույն պարտավորվածության վրա: Դրանք պետք է ներմուծված լինեն համապարփակ էթիկայի կանոններում: ԲԿ ոլորտի աշխատակազմի դեպքում՝ այս նորմերի խախտումների համար աշխատանքային պայմանագրերով պետք է նախատեսված լինեն խիստ պատժամիջոցներ: Ուսանողների դեպքում՝ այս նորմերի խախտումների համար պետք է նախատեսված լինեն խիստ պատժամիջոցներ բուհերի նորմատիվ իրավական բազայով:

Բուհական աշխատակազմը պետք է հատուկ պատասխանատվություն ստանձնի ուսանողների շրջանում էթիկական վարքագծի դրական պարտավորվածություն զարգացնելու գործում:

ՀՀ կառավարությունը պետք է աջակցի այդ զարգացումներին հանրային իրազեկության մակարդակի բարձրացմանն ուղղված արշավների միջոցով՝ լայն քաղաքացիական հասարակության հետ միասին: Այս գործընթացը, մասնավորապես, պետք է ուղղորդվի ԲԿ ոլորտի ուսանողների ծնողներին: Պետք է դիտարկել նաև այդ ծնողների համար նախատեսված էթիկայի նորմերի խորհրդատվական կանոնագրքի մշակումը:

ՀՀ կառավարությունը պետք է նաև լիարժեք ուշադրություն հատկացնի այն ծավալներին, որոնք անհրաժեշտ են այս զարգացումների իրականացման համար խթանիչ օրենսդրության մշակման, ինչպես նաև ինստիտուցիոնալ մոտեցումներում նվազագույն չափորոշիչներ ապահովելու համար, օրինակ, լրացուցիչ հարցեր ընդգրկելով «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքում:

Սա պետք է նաև ներառի այն հանգամանքը, թե արդյոք ԲԿ ոլորտի աշխատակազմի էթիկայի նորմերը պետք է կապվեն հանրային ծառայության ոլորտում ավելի լայն էթիկայի նորմերի մշակման հետ: Ավելի մանրամասն (տե՛ս նաև 11-րդ առաջարկություն ստորև):

Հետագա գործողությունները Եվրոպայի խորհրդի ընթացիկ նախագծի շրջանակներում նույնպես ուժեղ և հաստուկ կերպով կենտրոնացված են էթիկայի սկզբունքների, վարքագծի և կանոնների մշակումների աջակցման հետ (տես Առաջարկություն 13 (բ) ստորև):

Առաջարկություն 8(բ).

ՀՀ ԲԿ համայնքը պետք է զբաղվի ուսումնական ծրագրերի և գնահատման մոտեցումների մշտական վերանայման և կատարելագործման հարցերով՝ շարունակական հիմունքով ուսումնական և գնահատման զգալի նորարարություններով հանդես գալու նպատակով: Մշակումները պետք է կատարվեն ուսանողակենտրոն ուսուցման և դասավանդման փորձի նպատակով, որն ապահովում է ուսանողների լիարժեք մասնակցությունը և պետք է մշակվեն հարուստ և բազմազան գնահատման մոտեցումներ, որոնք թույլ են տալիս ուսանողներին ցուցադրել խորը գիտելիքներ:

Ի պատասխան նման նորարարությունների, ուսանողները պետք է նվիրվածություն ցուցաբերեն էթիկական բարեվարքությանը, և չպետք է ձգտեն որևէ կերպ կեղծել նորարարական գնահատման մոտեցումները որևէ նոր հնարավորության դիմաց, որը կարող է ձեռք բերվել խաբելու արդյունքում:

Նմանապես, ԲԿ ոլորտի աշխատակազմը պետք է հավատարիմ մնա էթիկայի ամենաբարձր չափորոշիչներին ուսանողների աշխատանքների գնահատման ընթացքում՝ օգտագործելով նոր, ավելի հարուստ և ավելի բազմազան մոտեցումներ:

ՀՀ կառավարությունը պետք է աջակցի նման զարգացումներին՝ ապահովելով ինանսավորման մեխանիզմներ համապատասխան ուսումնական ծրագրերի և գնահատման նորարարությունների համար:

9 ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ՝ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

9.1 Փաստեր հարցազրույցներից/հանդիպումներից

ԿԳՆ

- 9.1.1 Գիտության և կրթության փոխնախարարը բավականին դրական արտահայտվեց համալսարան կենտրոնացված ընդունելության համակարգի մասին՝ շեշտելով ստանդարտացված թեստերի (օրինակ՝ հայերեն, մաթեմատիկա և անգլերեն առարկաներից) և անկախ Ազգային կենտրոնի դերը: Նա ասաց, որ արդյունքները շատ «ապահով» են, իսկ «միավորները» բավականին խորաթափանց են բուհ

ընդունվելու համար (օրինակ՝ ամենաբարձր միավորներ ունեցողները արժանացել են կրթաթոշակների): Նա նշեց, որ նախարարությանն ուղղված բողոքները ԲԿ համակարգ ընդունվելու այդ ասպեկտների վերաբերյալ հասել են մինչև աննշան փոքր մակարդակի:

Միջազգային կազմակերպություններ

9.1.2 Ի հակադրություն այս շատ դրական պատկերին, փորձագետի հետ հանդիպած միջազգային կազմակերպություններից մեկի ներկայացուցիչները խիստ մեկնաբանեցին դպրոցական ուսման մեջ մասնավոր կրկնուսուցումների գերակշռության մասին: Դա նկարագրվում էր որպես «էնդեմիկ»: Դպրոցի ավարտական քննությունների համար ներառված են և դպրոցի ուսուցիչները, և համալսարանի աշխատակազմը:

9.1.3 Մեկ այլ միջազգային կազմակերպության ներկայացուցիչներ նույնպես խստորեն քննադատեցին միջնակարգ կրթության հարակից ասպեկտները:

Նրանք կարևորեցին մասնավոր դասընթացները, նույնիսկ նշեցին, որ դրանք անկացվում են առավոտյան ուսանողների հետ, ովքեր վճարում են դպրոցի հաճախումների գրանցամատյանում գրանցված լինելու համար, թեև մասնակցում են մասնավոր կրկնուսուցմանը հենց իրենց ուսուցչի հետ այլ վայրում, և նրանց կանչում են դպրոց միայն, երբ տեղի է ունենում հաճախումների ստուգում: Այդ ներկայացուցիչները նշեցին, որ ուսուցիչները նույնպես կեղծում են իրենց հաճախումների գրանցումները ցույց տալու համար, որ ներկա են եղել դպրոցում, սակայն փաստացիորեն գտնվել են այլ վայրում՝ մասնավոր դասընթացներ անցկացնելու համար: Նրանք նաև նշեցին, որ համալսարանի աշխատակազմը նույնպես ներառված է մասնավոր կրկնուսուցման գործում: Նրանք պնդեցին, որ համալսարան ընդունվողների 90%-ը ստանում է մասնավոր կրկնուսուցում:

Դպրոցի ավարտական քննությունների վերաբերյալ այդ ներկայացուցիչները նշեցին, որ կարող է լինել կոռուպցիա դիտորդական մակարդակում:

Նրանք նաև նշեցին, որ միասնական ազգային քննությունները ունեն բազմաթիվ տարբերակներ բոլոր առարկաների համար, և նրանց հրապարակված օրինակները շատ նման են հաջորդող քննություններին:

Ի հավելում, նրանք նաև, նշեցին, որ դպրոցի ուսուցիչները կարող են պատասխանատվություն ստանձնել վերջնական գնահատման համար, եթե այդ առարկան «գլխավոր առարկա» չէ այդ աշակերտի համար: Տրված օրինակը հետևյալն էր. Մաթեմատիկա II («երկրորդական առարկա»), և հակառակը՝ Մաթեմատիկա I («գլխավոր առարկա»): Միանգամայն հասկանալի չէր՝ արդյոք Մաթեմատիկա II հնարավոր է հաշվել համալսարան ընդունվելու համար որպես ոչ առաջնային առարկա, չնայած ենթադրվում է, որ պետք է այդպես էլ լինի:

9.1.4 Երրորդ միջազգային կազմակերպության ներկայացուցիչները նույնպես մեկնաբանեցին մասնավոր կրկնուսուցման անցկացումը, այդ թվում՝ ԲԿ աշխատակազմի ներգրավվածությունը այդ գործում:

Այդ ներկայացուցիչները նաև քննարկեցին ներկայիս դպրոցի ավարտական քննությունների սահմանափակումները՝ իրենց բացառիկ վստահությամբ համակարգչի ընտրությամբ մի քանի տարբերակներով աշխատանքներին (չնայած նրանք նշեցին, որ համալսարաններն ունեն տարբեր մոտեցումների անմիջական հսկողություն, որն ունի «արդյունավետության տարրեր»): Այդ ներկայացուցիչները հայտարարել են, որ միջազգային ֆինանսավորում է (Համաշխարհային Բանկի կողմից) ստացել ուսումնական ծրագրի վերանայման նոր նախագիծը, որ հուսով են՝ կներառի այդ հարցերից մի քանիսը:

Այդ կազմակերպության ներկայացուցիչները նաև նշեցին համալսարանի ընդունելության հետ կապված աշխատուժի ավելի արդյունավետ պլանավորման անհրաժեշտության մասին: Օրինակ, կարիք կա լուծելու ընդունելության ցածր մակարդակի խնդիրը Մանկավարժական Համալսարանում, որը կապված է դպրոցի ուսուցման գրավչությունը՝ որպես կարիերա, բարձրացնելու անհրաժեշտության հետ:

Ուսանողական խմբերի ավագ ներկայացուցիչներ

9.1.5 Ուսանողական խմբերի ներկայացուցիչները կարևորեցին համալսարան ընդունվելու նպատակով դպրոցական ավարտական քննությունների համար մասնավոր կրկնուսուցման տարածվածությունը: Նրանք նշեցին, որ դրանում ներգրավված են համալսարանական դասախոսները, սակայն ավելի հաճախ կրկնուսույց են հանդիսանում հենց ուսուցիչները: Նրանք ընդգծեցին չափազանց կարևոր ֆինանսական զոհաբերությունների մասին, որոնք ընտանիքները պատրաստ են կատարել մասնավոր կրկնուսուցման համար:

Փորձագետների մեկնաբանությունները

9.1.6 Փորձագետները կարող են միայն ներկայացնել որոշ հարցվողների կողմից արված մեկնաբանությունները դպրոցի ավարտական քննությունների վերաբերյալ այդ խնդիրների շուրջ: Նրանք ի վիճակի չեն ուղղակիորեն հետաքննել այդ խնդիրները, օրինակ գնահատել՝ որքանով պատշաճ և ներկայանալի են խաբեության մասին պնդումները ավարտական քննություններում, կամ մասնավոր կրկնուսուցման շուրջ ծայրահեղ չարաշահումների խնդիրը (ինչպես աշակերտների և ուսուցիչների հաճախումների կեղծումը դպրոցում):

Այնուամենայնիվ, մեկնաբանությունների ուժգնությունն այնպիսին էր, որ փորձագետները խնդրել են Կառավարությանը մանրակրկիտ կերպով հետաքննել այդ հնարավոր ընդհանուր խնդիրները և , անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել վճռական միջոցներ:

Մասնավորապես, փորձագետները մասնավոր ուսուցմանը մոտենում են այն տեսանկյունից, որ ոչ մի ազգային կրթության համակարգ չպետք է միջնակարգ դպրոցի աշակերտներին և իրենց ծնողներին դնի այնպիսի իրավիճակում, որտեղ թանկ մասնավոր կրկնուսուցումը դիտվում է որպես անհրաժեշտություն դպրոցական ավարտական քննությունները հաջողությամբ հանձնելու համար և դրանով իսկ ընդունվել բուհ: Դա դառնում է խնդիր ոչ միայն միջնակարգ դպրոցների համակարգի, այլ նաև ԲԿ համակարգի համար:

Առաջարկություններ 9-րդ բաժնից

Հետևյալ հատուկ առաջարկությունները բխում են սույն բաժնի բովանդակության և վերլուծության հիմնական հայեցակետերից.

Առաջարկություն 9.

Ըստ երևույթին, առկա են էական խնդիրներ՝ կապված դպրոցական ավարտական քննությունների հետ: Դրանք, կարծես, ներառում են համակարգային անհարկի մասնավոր կրկնուսուցում, խաբեություն ավարտական քննությունների ժամանակ (կապված ոչ պատշաճ քննական հսկման հետ) և սահմանափակ մոտեցումներ գնահատմանը, որոնք կարող են բարձրացնել անհարկի մասնավոր կրկնուսուցման հանդեպ «գրավչությունը»:

ՀՀ Կառավարությունը պետք է մանրակրկիտ ուսումնասիրի այս հիմնախնդիրները, ապա, անհրաժեշտության դեպքում, վճռական միջոցներ ձեռնարկի դրանք լուծելու համար:

Մինչդեռ այս հարցերը ավելի շատ վերաբերում են դպրոցական համակարգին, սակայն ազդում են ուսանողների՝ բուհ ընդունվելու վրա: Հետևաբար, ԲԿ հանրությունը պետք է լիարժեք կերպով մասնակցի ազգային քննարկմանը և քայլեր ձեռնարկի այս հարցերի լուծման նպատակով: Մասնավորապես, ԲԿ ակադեմիական անձնակազմը չպետք է մասնակցություն ունենա անհարկի մասնավոր կրկնուսուցմանը:

10 ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

10.1 Փաստեր հարցազրույցներից/հանդիպումներից

ԿԳՆ

10.1.1 Բացահայտելով ԲԿ կառավարման մեջ ուսանողների մասնակցության կարևորությունը՝ Կրթության և Գիտության փոխնախարարը ընդգծեց, որ բոլոր համալսարանները կառավարող մարմինները ունեն ուսանող անդամներ:

10.1.2 Առանձին հարցազրույցում ԿԳՆ Զարգացման Ծրագրերի և Մոնիտորինգի վարչության Ղեկավարը նույնպես ընդգծեց հակակոռուպցիոն միջոցներում ուսանողների ներգրավվածության կարևորությունը:

Միջազգային կազմակերպություններ

10.1.3 Միջազգային կազմակերպություններից մեկը փորձագետներին հանդիպման ժամանակ ընդգծեց, որ ՀՈՒԱԱ-ն (Հայաստանի Ազգային Ուսանողական Ասոցիացիա) միացել է ԵՈՒՄ-ին (Եվրոպայի Ուսանողների Միությանը), և ցուցաբերել է ուսանողների ուժեղ ներգրավվածություն, չնայած նշվել է, որ ուսանողական կազմակերպությունները շատ քաղաքականացված են: Այդ կազմակերպությունը հետագայում նշեց, որ մասնավոր համալսարաններում չկան ուսանողական խորհուրդներ, չնայած նաև առանձնապես չեն եղել հանրային քննարկումներ այդ մասին:

Ուսանողական խմբերի ավագ ներկայացուցիչներ

10.1.4 Փորձագետները հանդիպել են ՀՈՒԱԱ-ի ավագ ներկայացուցիչների և Համալսարանների ուսանողական խորհուրդների հետ: Այդ ուսանողական ներկայացուցիչները արտահայտել են այն տեսանկյունը, որ ուսանողական ներկայացուցչությունները խիստ քաղաքականացված են եղել մինչև 2008 թ., սակայն ոչ հիմա: Այնուամենայնիվ, ՀՈՒԱԱ-ի առաջնորդության կարծիքով որոշ տեղական ուսանողական ասոցիացիաներ դեռևս քաղաքական են, և եղել են նույնիսկ որոշ իրավիճակներ, երբ ՀՈՒԱԱ-ի համար ավելի հեշտ է եղել աշխատել Ռեկտորների, քան տեղական ուսանողական ասոցիացիաների հետ:

Դա հանգեցրել է մի փոքր ավելի ընդարձակ քննարկմանը ՀՈՒԱԱ-ի և տեղական ուսանողական ասոցիացիաների միջև հարաբերությունների մասին և տեղական ասոցիացիաների ընդհանուր դիրքորոշմանը: ՀՈՒԱԱ և որոշ տեղական ասոցիացիաների միջև կարծես առկա է հնարավոր լարվածություն, չնայած ՀՈՒԱԱ ստանում է անդամավճարներ տեղական ասոցիացիաներից: ՀՈՒԱԱ մշակում է տեղական ասոցիացիաների իրավական դրույթների վերաբերյալ քաղաքականության փաստաթուղթ, մասնավորապես, դրդելով տեղական ասոցիացիաներին ունենալ ավելի ապահով իրավական կարգավիճակ (կիրառվել են նախընտրելի արտահայտություններ, ինչպիսին են «գրանցված ասոցիացիա» և «ՀԿ կարգավիճակ», և ուսանողական ներկայացուցիչները հայտնում են, որ տեղական ասոցիացիաները ներկայումս «չեն կարող ունենալ իրենց սեփական բյուջեն»):

Ուսանողական ներկայացուցիչները ենթադրում են, որ ուսանողները ԿԳՆ հետ «լավ դիրքում» չեն՝ ինչ վերաբերում է համալսարանի կառավարման համակարգում ներկայացուցչությանը: Իհարկե, ուսանողները կազմում են պետական համալսարաններում կառավարման մարմինների 25% -ը, սակայն վերջիններս բնորոշվում են որպես մինչև հիմա պահպանված «հին Խորհրդային

կումբիտական կառույց», որի անդամների 50%-ը «վերահսկվում է» Կառավարությամբ: Նախարարությունները ցանկանում են «շահագործել ուսանողներին»: Նշվել է, որ ուսանողները պայմանականորեն «ազատ գործակալներ» են գլխավոր Խորհրդի, Գիտական խորհուրդների և Ֆակուլտետի խորհուրդների նիստերին: Այնուամենայնիվ, իրականում Ռեկտորների կողմից «ընտրվածները» գերակշռում են այդ Խորհուրդներում:

Այս ուսանողական ներկայացուցիչները նշեցին, որ ընդհանուր ուսանողական մարմինը ներկայումս լիարժեք չի հասկանում իր դերը, որ կարող է/պետք է խաղա որակի ապահովման գործընթացում: Նրանք պետք է իրազեկված լինեն գոյություն ունեցող մեխանիզմների և իրենց դերի մասին, որ կարող են ունենալ այդ գործում: Սա վերջին ԵԱՀԿ աջակցությամբ նախագծի նպատակն էր: Իհարկե, փորձագետները կարողացան մասնակցել այս ծրագրի հիմնական արդյունքներ հրատարակությանը նվիրված միջոցառմանը, որը հյուրընկալել էին ուսանողները:

Ուսանողական ներկայացուցիչները մանրամասն խոսեցին կոնկրետ մի համալսարանի իրավիճակի մասին, որը ձեռք էր բերել հիմնադրամի կարգավիճակ: Պարզվել է, որ գործող նախագահ/ ռեկտորը հաստատել էր իր իրավունքը մշակելու ուսանողական խորհրդի համար նախատեսված կանոնադրություն՝ որպես նոր ընդհանուր կառավարման ընթացակարգերի մաս՝ ներառված հիմնադրամի կարգավիճակի անցման փուլում: Սա ընդհանուր հենակետի վառ օրինակ է, որ մյուս համալսարանները նույնպես ազատ են մշակելու իրենց սեփական կանոնադրությունները, այդ թվում՝ չտալով ուսանողական խորհուրդներին լիարժեք ինքնավարություն:

Համալսարանների փոխռեկտորները

10.1.5 Հանդիպման մյուս քննարկումներում՝ ներկայացված վերոնշյալ Բաժին 7-ում և 8-ում, համալսարանների փոխռեկտորները ընդգծեցին ուսանողների ակտիվորեն «իրենք իրենց պաշտպան կանգնելու» և «ռեկտորի աշխատակազմի հետ վիճելու պատրաստականությունը»:

10.2 Փաստեր գրականությունից

2013թ. Համաշխարհային Բանկի Զեկույց

10.2.1 2013թ. Համաշխարհային Բանկի Զեկույցում նշվել է ուսանողների մասնակցության սահմանափակ բնույթը: Զեկույցում կարևորվել է ուսանողների ավելի լավ իրազեկված և բուհերի կառավարման և որակի ապահովման դերի համար նախապատրաստված լինելու անհրաժեշտությունը (Համաշխարհային Բանկ 2013թ., էջ 37):

Լա ՄԱՆՇ ծրագիր

10.2.2 Իհարկե, Լա-Մանշ Ծրագրում ներառվել է ուսանողների հնարավորությունների ընդլայնման աշխատանքը, որպեսզի նրանք լինեն ավելի ներգրավված մասնակից բուհերում որոշումներ կայացնելու գործում:

«Բարձրագույն Կրթության մեջ առաջնորդության և փոփոխության կառավարման ռազմավարության զարգացման վերաբերյալ» ԱՓ շրջանակներում կա «Երիտասարդ Առաջնորդների Ակադեմիայի կազմակերպում, որը ներառում է հնգօրյա ուսուցում նախնական առաջնորդության և բարձրագույն կրթության մեջ ուսանողների ներգրավվածության մասին» (տե՛ս Լա-Մանշ կայքը, ‘Լա-Մանշի գործունեությունը և արդյունքները’).

Լա-Մանշի գործունեությունը ներառում է նաև Գորիի Պետական համալսարանում «Ուսանողների ներգրավման զարգացումը» Բարձրագույն Կրթության հաստատություններում գիտելիքների ընդլայնման կառավարման մեջ» կոչվող նոր մոդուլի մեկնարկը (տե՛ս Լա-Մանշ կայքում ‘Տեղեկատվական ամփոփագիր 2, Դեկտեմբեր 2013թ., էջ 7):

Լա-Մանշի երկրորդ գործընկերային հանդիպումը Բիրմինգհամում՝ Համալսարանի Քոլեջում 2013թ. ապրիլին, ընդգրկում է քննարկումներ «Ուսանողների՝ որպես համահիմնադիրների համար տարածքների բացում» թեմայով (տե՛ս Լա-Մանշ կայքը):

Այնուամենայնիվ, փորձագետները ենթադրում են, որ նմանատիպ նյութերի առկայությունը ավելի վաղ նախագծերում պարզապես կարևորում է կառավարման մեջ ուսանողի ներգրավվածությունը՝ որպես թեմա, այլ ոչ թե նշում այն մասին, որ չկա անհրաժեշտություն իրականացնելու որևէ շարունակական աշխատանք այս ոլորտում՝ գոյություն ունեցող կոնկրետ գործողությունները դեռևս ավելի զարգացնելու համար:

Առաջարկություններ բաժին 10-ից

Հետևյալ հատուկ Առաջարկությունները բխում են սույն բաժնի բովանդակության և վերլուծության հիմնական հայեցակետերից.

Առաջարկություն 10(ա).

Ուսանողական խորհուրդների անկախությունը պետք է լիարժեքորեն ճանաչվի և երաշխավորվի:

ՀՀ կառավարությունը պետք էրկիտության մեջ մտնի ԲԿ համայնքի հետ՝ քննարկելու, թե որքանով կարող է պահանջվել ազգային նպաստավոր օրենսդրության ներմուծումը, հավանաբար «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքի շրջանակներում՝ ապահովելով նվազագույն ընդունելի հետևողականություն:

Այնուամենայնիվ, ուսանողական ասոցիացիաների անկախության ճանաչման և երաշխավորման հիմնական պատասխանատվությունը պետք է ստանձնեն հենց առանձին բուհերը:

Առաջարկություն 10(բ).

Ուսանողների ամբողջական, իմաստալից և անկախ ներգրավումը բուհերի կառավարման գործընթացում պետք է ճանաչված ու ապահովված լինի:

ԵՎ նորից, ՀՀ կառավարությունը պետք էրկիտության մեջ մտնի ԲԿ համայնքի հետ՝ քննարկելու, թե ինչ ծավալների ազգային նպաստավոր օրենսդրության ներմուծման անհրաժեշտություն կա, հավանաբար «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքի շրջանակներում՝ ապահովելով նվազագույն ընդունելի հետևողականություն:

Այնուամենայնիվ, ինստիտուցիոնալ կառավարման հարցերում ուսանողական մարմնի ներգրավվածության ճանաչման և ապահովման հիմնական պատասխանատվությունը պետք է ստանձնեն հենց առանձին բուհերը:

11 ԷԹԻՎԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԲԿ-ՈՒՄ և ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

11.1 Փաստեր հարցազրույցներից/հանդիպումներից

ԿԳՆ

11.1.1 Կրթության և Գիտության փոխնախարարը հետաքրքրություն է արտահայտել համալսարանական աշխատակազմի էթիկական կանոնների հայեցակարգում, չնայած էթիկայի հետազոտման իր բնորոշումը ավելի կենտրոնացնում է հետազոտության մեջ ուսանողական գրագողության շուրջ խնդիրների վրա:

Արդարադատության փոխնախարար

11.1.2 Էթիկական կանոնները նաև քննարկվել են Արդարադատության փոխնախարարի հետ: Նա ասել է, որ տարբեր պետական մարմիններում, այդ թվում՝ ԿԳՆ -ում կան «էթիկայի հանձնաժողովներ»: Նա վստահ չէ՝ արդյոք կան կոնկրետ էթիկական կանոններ կրթության բնագավառում, սակայն նշեց, որ ընդհանուր ռազմավարությունը կայանում է նման ոլորտներում նոր էթիկական կանոններ մշակելու մեջ: Այս համատեքստում, նա հղում կատարեց «Հանրային ծառայությունների մասին Օրենքին», ինչպես նաև իր նախորդ փորձին բժշկական ոլորտում: Նա ենթադրում է, որ Հակակոռուպցիոն Ռազմավարության ընդհանուր նախագծում արդեն նշված են էթիկական կանոնները:

Արդարադատության փոխնախարարը նշեց, որ նա փնտրում է էթիկայի կանոններ, որոնք կլինեն իրավաբանորեն պարտավորեցնող, օրինակ, ուսումնական

հաստատությունների (հիմնադրամների և այլն) կանոններով , որոնք կներառեն հատուկ հոդվածներ էթիկայի կանոնների խախտման համար պաշտոնանկության վերաբերյալ: Կառավարման առումով, նա նշեց, որ իր տեխնիկական փորձագետները կանեն ընդհանուր առաջարկություններ, որոնք կկիրառվեն հետագայում առանձին հաստատությունների կողմից (դրանով իսկ հարգելով ինստիտուցիոնալ ինքնավարությունը): Դա նշանակում է, որ յուրաքանչյուր հաստատություն կունենա էթիկայի կանոնադրություն՝ կապված ընդհանուր օրենսգրքի հետ՝ կանոնադրության խախտման համար աշխատանքի ընդունումից մինչև ազատման պայմանով:

Արդարադատության փոխնախարարը կարևորել է հանրության «վտանգները» այն դեպքում, եթե չլինեն անբարոյական վարքագծի համար այսօրան հստակ հետևանքներ:

11.2 Փաստեր գրականությունից

Լա ՄԱՆՇ ծրագիր

11.2.1 Օրինակ, այն կիրառվել է "Առաջնորդություն և Փոփոխության կառավարում" հարցի մասին Լա-Մանշի Դասավանդման և Ուսումնառության ռեսուրսներում (տե՛ս Լա-Մանշի կայքը) Լա-Մանշի որոշ նյութերն ակնհայտորեն կապված են առաջնորդության և կառավարման տեսությունների և պրակտիկայի ընդհանուր , այդ թվում՝ փոփոխության կառավարման մոտեցումների հետ, այլ ոչ թե մասնավորապես ՄՌ կառավարման խնդիրների: Իհարկե, կա մի Բաժին «Առաջնորդության մասին ուղեցույցային նյութերում» «Բարոյականություն և Առաջնորդություն» թեմայով, բայց այն բավականին ընդհանուր է և վերաբերում է «առաջնորդի» դիրքորոշմանը:

Լա-Մանշ ծրագիրը ստեղծել է նաև «Փոփոխվող Բարձրագույն կրթության հաստատությունները անցումային հասարակության մեջ՝ Խորացված ուսումնասիրությամբ զեկույց» (2014թ., տե՛ս Լա-Մանշ կայքը): Հայաստանի օրինակներից մեկն է Գավառի Պետական Համալսարանը "Ակադեմիական ազնվության քաղաքականությունում" (Գլուխ 26, էջեր 382-391): Այն ներառում է «դասախոսների և համալսարանի աշխատակազմի միջև պատասխանատվության մեծացման» (էջ 382) և «համալսարանի ուսանողների բարոյական կրթությանն ուղղված ծրագրերի ներմուծման» մասին շեշտադրումը (էջ 384): Մինչդեռ հետաքրքիր է, որ Լա-Մանշ ծրագրի այս գլուխը չի հանդիսանում ամբողջովին մշակված էթիկայի կանոնադրություն:

Այսպիսով, Լա-Մանշի նյութերից վերցված այս օրինակները ցույց են տալիս, որ գոյություն ունեցող նախագծերը կենտրոնացված չեն ԲԿ աշխատակազմի համար էթիկայի ամբողջական կանոնադրություն մշակելու վրա: Սա ընդգծում է, որ

ներկայիս նախագիծը «արժեք է ավելացնում» այս ոլորտում նման օրենքների մշակման աշխատանք ձեռնարկելով:

Առաջարկություններ բաժին 11-ից

Հետևյալ հատուկ առաջարկությունները բխում են սույն բաժնի բովանդակության և վերլուծության հիմնական հայեցակետերից.

Առաջարկություն 11.

Ինչպես քննարկվեց վերոհիշյալ 8 (ա) առաջարկությունում, էթիկայի նորմերը պետք է մշակված լինեն ԲԿ աշխատակիցների համար, որոնց համար աշխատանքային պայմանագրով պետք է սահմանված լինեն խիստ պատժամիջոցներ խախտումներ կատարելու դեպքում (ընդհուպ մինչև աշխատանքից ազատում):

Եթե ՀՀ կառավարությունը մշակում է ընդհանուր իրավական դաշտ հանրային ծառայությունների համար, որի դեպքում էթիկայի նորմերի խախտումները աշխատանքային պայմանագրերով կարող են հանգեցնել աշխատանքից ազատման, ապա ԲԿ աշխատակազմը անշուշտ պետք է ընդգրկված լինի այս շրջանակում: Մա կարող է ամրապնդել ԲԿ աշխատակիցների դրական վերաբերմունքը էթիկական վարքագծին:

Արդարադատության նախարարությունը պետք է նաև զարգացման համար անհրաժեշտ ընդհանուր իրավական դաշտ ամրապնդի, որտեղ կկիրառվեն համապատասխան պատժամիջոցներ այն ուսանողների նկատմամբ, ովքեր խախտել են էթիկայի կանոնագրքի դրույթները՝ բուհի նորմատիվ իրավական բազայի շրջանակում, և քրեական պատասխանատվության ենթարկվեն այն ծնողները, ովքեր փորձում են ոչ պատշաճ, ոչ էթիկական միջամտություն ցուցաբերել իրենց երեխայի ԲԿ գործելակերպերում:

12 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԲՈՒՀԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1 Փաստեր հարցազրույցներից/հանդիպումներից

ԿԳՆ

- 12.1.1 Կրթության և Գիտության փոխնախարարը նշել է, որ 2015թ. հունվար/փետրվարից առկա է նոր ընդհանուր պետական հակակոռուպցիոն ծրագիր, սակայն այնտեղ չի լինելու ԿԳՆ-ի համար նոր առանձին փաստաթուղթ: Նա անդրադարձել է Նախարարության Զարգացման ծրագրերի և Մոնիտորինգի վարչության դերին՝

հակակոռուպցիոն ծրագիրը ընդհանուր կրթական համակարգի համար, «ամբողջությունն ավելի կատարյալ դարձնող ամենի բանի համար» ծառայեցնելու գործում: Նա նաև կարևորել է ներքին համալսարանական ընթացակարգերի դերը:

12.1.2 Առանձնագրույցի ժամանակ ԿԳՆ Զարգացման ծրագրերի և Մոնիտորինգի վարչության պետն անդրադարձել է Կրթական զարգացման Պետական ծրագրին, որն ունի Խորհրդարանական օրենքի ուժը: Այն բաղկացած է տարբեր բաժիններից, որոնք վերաբերում են կրթական համակարգին, և նրա վարչությունը կոորդինացնում է տեղեկատվության հավաքումը և մոնիտորինգը սույն ծրագրի համար: Այդ աշխատանքը իրականացվել է ընդամենը 2011-2015թթ., և Վարչությունը պատրաստվում է հետագայում այն շարունակել 2016-2025թթ.: Նա նաև անդրադարձավ կոռուպցիայի վերաբերյալ մոնիտորինգի վեցամսյա հաշվետվություններին: Վարչությունը կիրառել է բազմաթիվ ռեսուրսներ այդ աշխատանքի համար, այդ թվում՝ տարբեր տնօրինություններից և ՀԿ-ներից վերցված:

Հինգ տարվա ընթացքում ԿԳՆ մշակել է երկամյա միջոցառումների պլան: Նա նաև ուներ կոռուպցիային նվիրված ծրագիր առանձին ԿԳՆ-ի, ինչպես նաև ընդհանուր Կառավարության համար: Այդտեղ կար 2013-2014 թթ. ծրագիրը, բայց այժմ արդեն կա նոր ընդհանուր Կառավարության ծրագիր, որը հետագայում կընդունվի ԿԳՆ-ի կողմից:

Վարչությունը զեկույցներ է ներկայացնում հասարակական կայքում: Այդ կայքի նկատմամբ հանրային հետաքրքրության մակարդակը ենթարկվել է մոնիտորինգի: Վարչությունը զեկուցում է Կառավարությանը հակակոռուպցիայի և այլ խնդիրների մասին: Եթե միջոցառումները չեն գերազանցվում, ապա Կառավարությունը անդրադառնում է Նախարարությանը: Համալսարանները կապված են կառավարության էլեկտրոնային համակարգի հետ և կարող են անմիջապես տեղեկանալ ի հայտ եկած որևէ ԲԿ խնդրի մասին, որն իրենցից պահանջում է միջոցներ ձեռնարկել:

Փորձագետները վստահ են, որ սա հարցազրույցի ընթացքում տրամադրված բավականին մանրամասն տեղեկատվության ստույգ նկարագրություն է: Այնուամենայնիվ, նրանք չէին կարող ինքնուրույն մուտք ունենալ ամբողջական փաստաթղթերին և Զարգացման ծրագրերի և Մոնիտորինգի Վարչության պետի կողմից նշված կայքին: Իրենց համար դեռ անհասկանալի է մնացել, թե ինչպես վերջնականորեն գնահատեն ԿԳՆ հակակոռուպցիոն ծրագրերի մասին դիրքորոշումը և մոնիտորինգը մյուս աղբյուրներից տրված մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք առաջարկում են դեռևս լուծման կարիք ունեցող ասպեկտներ» այս ոլորտում (տե՛ս ստորև):

Արդարադատության փոխնախարար

12.1.3 Արդարադատության փոխնախարարը նշել է, որ լինելու է Արդարադատության նախարարության/ Կառավարության նոր Հակակոռուպցիոն ռազմավարություն, ընդհանուր և առանձին բաժիններով առողջապահական, վարչական և ֆինանսական ոլորտների համար: Նա նշեց, որ կրթությունը դեռ համարվում է ամենակոռուպացված բնագավառներից մեկը, սակայն դա կապված է այն փաստի հետ, որ շատ ընտանիքներ են ներգրավված կրթության մեջ (նույն կետը կիրառվում է նաև առողջապահության համար):

Արդարադատության փոխնախարարը նշել է, որ կրթության նկատմամբ կոնկրետ պատասխանատվությունը այնուհետև կդրվի ԿԳՆ վրա: Նա հայտարարեց, որ այս ոլորտում դեռևս չի կատարվել ռիսկերի գնահատում, սակայն ԿԳՆ պետք է մշակի ռազմավարություն ռիսկերի վերլուծության հետ համատեղ: Դա պետք է ներգրավի միջազգային փորձագետներին, որպեսզի ԿԳՆ լուծի բոլոր ռիսկերը: Եթե Եվրոպական Խորհրդի ներկայիս աշխատանքը վերաբերում է բարձրագույն կրթությանը, ապա մյուս միջազգային գնահատումները պետք է, իհարկե, իրականացվեն միջնակարգ կրթության ոլորտում: Միջազգային դոնոր կազմակերպություններին հարկավոր է դիմել այդ հարցով: Նախարարության ներկայիս միջոցառումների ծրագրերի առումով՝ փոխնախարարը հայտարարեց, որ դրանց մոնիտորինգի առաջընթացի համար ոչ մի մեխանիզմ չկա:

Արդարադատության փոխնախարարը նշել է, որ այժմ առկա է Կառավարության հատուկ գերատեսչություն, որը զբաղվում է հակակոռուպցիայով, որը գլխավորում է Վարչապետը և, որը պատասխանատու է միջոցառումների ծրագրերի (ենթադրաբար ընդհանուր կառավարության ծրագրերի) մոնիտորինգի համար: Նա նշեց այս խնդրում ՄԱԿ-ի, ՏՀԶԿ-ի և ԳՐԵԿՈ-ի (Եվրոպայի Խորհուրդ) ներգրավվածության մասին և «անկախ փորձագետների աշխատանքային խմբի» մասին: Այն կապված է Կառավարության մակարդակով ընդհանուր պլանի հետ, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից ուսումնասիրվող ամբողջ ռազմավարության հետ: Մանրամասնությամբ առաջիկա ընդհանուր ծրագրերը «Հակակոռուպցիոն Խորհուրդը» պետք է ընդունի հաջորդ օրը (այսինքն՝ հարցազրույցից/հանդիպումից հետո):

Այնուհետև նա անդրադարձավ Մարտի սկզբում կայացած «հասարակական կազմակերպությունների համար մրցակցությանը», որի «ինստիտուցիոնալ հնարավորությունները» սահմանվեցին Մարտի վերջում: Միաժամանակ, Ապրիլին մշակվելու է դրա ռազմավարությունը: Նա համոզված չէր տեղական նախարարական ծրագրերի ժամկետներում (օրինակ՝ ԿԳՆ-ի համար): Դա կախված կլինի «դոնորային իրավիճակից», սակայն հավանաբար կտևի «մոտ երկու ամիս»: Այնուամենայնիվ, նա նշեց, որ Ընդհանուր Ռազմավարության նախագիծը, ներառյալ՝ կրթական բաժինները, հասանելի կլինի փորձագետներին: Այս Ռազմավարության որոշ բաժինները հերթականությամբ հասանելի են դարձել փորձագետների համար (տե՛ս կետեր 12.2.8 և 12.2.9 ստորև):

Միջազգային կազմակերպություններ

12.1.4 Փորձագետներին հանդիպած միջազգային կազմակերպություններից մեկը մեկնաբանել է, որ Կառավարության և ԿԳՆ հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերը շատ անորոշ են, որ դժվար է հետևել իրենց առաջընթացին, և ԿԳՆ իսկապես չի ցանկանում կիսվել դրանցով: Այդ կազմակերպությունը նաև անդրադարձավ համալսարանների հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերին, որոնք պետք է ենթադրաբար, մշակվեն 2-3 տարվա ընթացքում, հայտնվեն համալսարանների կայքերում և նաև միանան ԿԳՆ-ին: Դրանք շատ նման են մեկը մյուսին, և ուսանողները ներգրավված չեն դրանց մշակման գործում:

Համալսարանների փոխտեկտորները

12.1.5 Յոթ խոշոր հանրային համալսարանների փոխտեկտորների հետ շատ լիարժեք հանդիպման ընթացքում (արդեն քննարկվել է այլ թեմաներով վերոնշյալ բաժիններ 7 եւ 8) յուրաքանչյուր համալսարան ընդգծեց սեփական հակակոռուպցիոն ռազմավարությունը:

Համալսարաններից մեկն անդրադարձավ ուսանողների լիարժեք ներգրավմանը, ինչպես նաև էլեկտրոնային կառավարման համակարգով բոլոր փաստաթղթերի թափանցիկ շրջանառությանը, պատերին փակցված «կոռուպցիոն խորհրդի», ուսանողների համար անանուն փոստարկղին , աշխատակազմի, ինչպես նաև առաջարկվող բարելավումների վերաբերյալ տեսակետներ հրավիրող ուսանողական հարցումներին:

Մեկ այլ համալսարանում յուրաքանչյուր կիսամյակ նախագահը հանդիպում է ուսանողական մարմնի հետ առանց դեկանների և դասախոսների՝ ուսանողների կողմից բարձրացվող խնդիրները, այդ թվում՝ կոռուպցիոն հարցերը, քննարկելու համար: Այս համալսարանը յուրաքանչյուր կիսամյակ նաև անցկացնում է աշխատակազմի անանուն գնահատում ուսանողների կողմից: Որտեղ աշխատակիցները ստանում են զգալիորեն բացասական կարծիք մի քանի տարիների ընթացքում, նրանց հաստիքն ուսումնասիրվում է Նախագահի կամ Փոխնախագահի կողմից, օրինակ, հաստատելու համար արդյոք եղել են կոռուպցիայի/ազնվության խնդիրներ: Աշխատակիցներից ոմանք ստիպված են եղել հրաժարական տալ:

Մյուս կողմից, մեկ այլ համալսարանի փոխտեկտորը հարցրեց՝ արդյոք բավականին շատ աշխատակիցներ, ովքեր բռնվել են հանցանքի վայրում, իսկապես ազատվել են աշխատանքից: Փոխտեկտորը պնդեց, որ հետխորհրդային շրջանում կային ընդհանուր «հակակոռուպցիոն փորձություններ» անհատների համար՝ հատկապես ֆինանսական ճնշումների պատճառով, եւ որ ի վերջո յուրաքանչյուրը պետք է դիմակայի դրան:

Մեկ այլ համալսարան անդրադարձավ իր կողմից վերջերս Moodle համակարգի ներմուծմանը: Նշվեց, որ դա կարող է հզորացնել հակակոռուպցիոն գործունեությունը, օրինակ՝ ուսանողները կկարողանան առցանց տեսնել իրենց համակուրսեցիների հաճախումը և գնահատականները, ինչը «կբացառի» կոռուպցիան գնահատականների արժանացած ուսանողների շրջանում, ովքեր իրենց հաճախմամբ և աշխատանքով չեն արժանացել դրան:

Մեկ այլ համալսարան նույնպես քննարկեց իր կողմից «Գերատեսչական Խորհուրդների», ուսանողների հարցման և բաց կայքում ուսանողների հանդեպ կարծիքների կիրառումը:

Մյուս համալսարան անդրադարձավ Հակակոռուպցիոն Ծրագրի իր աշխատանքին, որը նույնպես ներգրվել է համապատասխան Գիտական Խորհրդին: Այդ համալսարանն առանձնացրել է հինգ հիմնական ռիսկերի խմբեր, որոնցից երեքը ավելի վաղ արդեն լայնորեն քննարկվել են սույն փաստաթղթում (ընդունելության քննությունների ռիսկեր, ընթացիկ բուհական ուսման քննությունների ռիսկ, աշխատակիցների նշանակումները և առաջխաղացումը) Բացի այդ, համալսարանը նշել է ֆինանսական կառավարման ռիսկերը, օրինակ՝ գնումների, ինչպես նաև հասարակական հարաբերությունների շուրջ ռիսկերը:

Մեկ այլ համալսարան քննարկել է Նախարարների ընդհանուր քաղաքական ենթատեքստը՝ պահանջելով բոլոր համալսարաններին իրականացնել հակակոռուպցիոն գործունեություն: Դա կարևոր է համալսարանների գործունեությունն ամրապնդելու քաղաքական կամքի համար:

Ընդհանուր առմամբ, փոխտեկտորները նշեցին, որ համալսարանների հակակոռուպցիոն գործունեության արտաքին գնահատում «չի իրականացվել», և համալսարաններն, ըստ էության, ինքնուրույն են լուծում այդ ոլորտի հարցերը: Համալսարանի կառավարման ավագ աշխատակազմն ունի լծակներ, և նրանք մշակում, իրականացնում և գնահատում են հակակոռուպցիոն գործընթացները, սակայն ամբողջ աշխատակազմը և ուսանողները պետք է նույնպես ներգրավված լինեն այդ հարցում:

Մի փոխտեկտորի կողմից նաև նշվել է, որ դժվար է ֆինանսավորել հակակոռուպցիոն գործունեությունը: Լուրջ աշխատանք է տարվել Տեմպուսի նախագծերում, սակայն դա կամավորական հիմունքներով էր իրականացվում: Համալսարանները չեն կարող գումար գտնել աշխատակազմի համար, որպեսզի կարողանան արտաքին փորձ ձեռք բերել այլ բուհերում:

Փորձագետների ընդհանուր տպավորությունը համալսարանների փոխտեկտորների հետ այդ հանդիպումից այն է, որ բավականին շատ դրական գործունեություն է իրականացվում հակակոռուպցիոն գործունեության համար, սակայն դա օգուտ կտա կոորդինացված ազգային քննարկման արդյունքում՝ Կառավարության մասնակցությամբ, մոտեցման հետևողականության,

առաջընթացի գնահատման և այս ոլորտում ռեսուրսների հատկացման վերաբերյալ:

12.2 Փաստեր գրականությունից

12.2.1 Փորձագետները նախկինում ստացել են 2009թ. '2nd: Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն Ռազմավարությունը և դրա Իրականացման Միջոցառումների ծրագիրը 2009-2012 թթ. համար, ինչպես նաև ԿԳՆ «Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014թթ. համալիր միջոցառումների ծրագիրը»: Այնուամենայնիվ, այդ փաստաթղթերը չեն համարվում մանրամասն, որովհետև չեն վերաբերում ներկայիս դիրքորոշմանը, և դրանք չեն ներառում գնահատականների մոնիտորինգը, ինչը շարունակական կերպով հանգեցնում է միևնույն ներկայիս դիրքորոշմանը:

Համալսարանների հակակոռուպցիոն ծրագրեր

12.2.2 Ի պատասխան ընթացիկ փաստաթղթերի մասին խնդրանքների, փորձագետները ստացան համալսարանների հակակոռուպցիոն ընդհամենը մի քանի ծրագրեր:

Նրանք ստացան «Կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների համալիր ծրագիր» Երևանի Պետական Համալսարանից (ԵՊՀ): Այնուամենայնիվ, այն նկարագրված էր որպես '2011-2012թթ.' ծրագիր և թվագրված էր որպես «Հաստատված է 2013թ. մայիսի 30-ի Գիտխորհրդի Նիստին» (չնայած այս փաստաթղթի մեջ կան նաև շփոթեցնող հղումներ՝ պահպանելու ավելի վաղ աշխատանքը մինչև 2013-2014թթ.):

«Հակակոռուպցիոն քաղաքականության միջոցները՝ երկարատև գործողությունները ծրագիր» փաստաթուղթը ստացվել է պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) կողմից, թեև կրկին այն նկարագրվում է որպես 2011-2012 թթ. փաստաթուղթ:

Մյուս կողմից, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզուների և հասարակական գիտությունների պետական համալսարանից (ԵՊՀ) ստացված փաստաթղթում նշված էր «2015թ. ԵՊՀ Կոռուպցիայի դեմ Միջոցառումների Համալիր Ծրագիր»:

Փաստաթուղթը կազմված էր 5-ից 7 էջից:

12.2.3 Թեև այդ ծրագրերի միջև կա նմանություն, սակայն դրանք չեն հետևում ընդհանուր ձևանմուշին: Բոլորը ներառում են «Ակնկալվող արդյունքները», սակայն մեկում (ԵՊՀ) թվարկվում են «Միջոցները» և «Իրականացված գործողությունները և ակնկալվող արդյունքները», մյուսում (ՀՊՀ) թվարկվում են «Նպատակները», «Գործողությունները», «Ակնկալվող արդյունքները», «Պատասխանատու գերատեսչությունները» և «Իրականացման ժամանակացույցը», երրորդում (ԵՊՀ) թվարկվում են «Թիրախները», «Միջոցառումները», «Պատասխանատու մարդիկ», «Ակնկալվող արդյունքները»:

Թեև ԵՊՀ փաստաթուղթը վերաբերում է ծրագրի հետագա մանրամասներին, և դրանց արդյունքները հասանելի են ԵՊՀ պաշտոնական կայքում, սակայն փորձագետները չեն կարողանում մուտք գործել նման տեղեկատվությանը ԵՊՀ կայքի անզլերեն տարբերակով, և նրանք չեն կարողացել նաև մուտք գործել որևէ համապատասխան մանրամասն տեղեկատվությանը անզլերենով մյուս համալսարանների պաշտոնական կայքերում:

Համենայն դեպս, այդ փաստաթղթերում կան բավականին շատ հետաքրքիր և արժեքավոր կետեր:

Երևանի Պետական Համալսարան (ԵՊՀ)

12.2.4 ԵՊՀ փաստաթուղթը պատրաստակամորեն տարբերակում է «Ուղղակի միջոցառումները» (այսինքն միջոցառումներ, որոնք անմիջականորեն վերաբերում են հակակոռուպցիոն խնդիրներին, ինչպիսիք են «քննական ընթացակարգերի համար վերահսկողական մեխանիզմների զարգացումը»), և «Անուղղակի միջոցառումները» (այսինքն, միջոցառումներ, որոնք իրականացվել են այլ խնդիրներ լուծելու տեսանկյունից, սակայն կարող են միաժամանակ ունենալ հակակոռուպցիոն ազդեցություն), ինչպես «կրթության որակը բարձրացնելուն ուղղված գործողությունները, էջեր 3-4):

Փաստաթղթում նաև նշվում է գլխավոր կոռուպցիոն ռիսկերի համապատասխան եւ համապարփակ ցուցակը (եւ «հակակոռուպցիոն միջոցառումների ուղղությունները»), որոնք բաղկացած են հետեւյալ հիմնական խմբերից՝ «Գիտելիքների գնահատումը»; «Մուտք կրթական համակարգ»; «Ուսանողների շարժունությունը»; «Աշխատակազմի կառավարումը »; «Ֆինանսական կառավարման համալսարանը»; «Տնտեսական կառավարման համալսարանը» (էջեր 4-5):

«Միջոցները» և «Կատարված աշխատանքներն ու ակնկալվող արդյունքները» (էջեր 6-7) հստակորեն չեն համապատասխանում «Կոռուպցիայի գլխավոր ռիսկեր» վերնագրին, սակայն դրանք, ընդհանուր առմամբ, վերաբերում են արդեն իրենց մեջ ի հայտ եկած ոլորտների մեծ մասին, օրինակ, «մրցակցային պրոցեսների առաջխաղացումը» նշանակումների համար «Համալսարանում կառավարման պրոցեսի բարելավման» շրջանակներում: Մյուս կողմից, այդ «Աշխատանքները» կարող են հայատարարվել ավելի մանրամասնորեն, և դրանք չեն ներառում հստակ առանձին դրույթներ, թե ով է պատասխանատու դրանց ձեռնարկման կամ դրանց իրականացման ժամանակացույցի համար:

Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարան (ՀՊՃՀ)

12.2.5 ՀՊՃՀ փաստաթուղթը նույնպես տրամադրում է կոռուպցիոն ռիսկերի օգտակար ցանկ՝ երկու խմբերով՝

Խումբ I (պետական բուհ ընդունելություն; ընդունելություն մագիստրատուրա; ընդունելություն ասպիրանտուրա; հեռակա ուսուցման համակարգ և երկրորդ մասնագիտության ընդունելություն; օտարերկրյա քաղաքացիների ընդունելություն; ներքին (համալսարանի ներսում) փոխանցումներ, միջհամալսարանական փոխանցումներ);

Խումբ II (վարչական ազդեցություն [‘դասախոսների կողմից վարչական միջոցների կամայական կիրառումը, բռնուներ, աշխատավարձի բարձրացում կամ այլ հարցեր որոշ թերությունների եւ բացթողումների կամ այլ խնդիրների դեպքում’]; գնումներ

Հետաքրքրական է, որ այդ ցանկին նախորդում է « գլխավոր կոռուպցիոն ռիսկերը կրթության ոլորտում» նշումը Կառավարության Հակակոռուպցիոն Ռազմավարությունից, օրինակ «Ընդունելության քննություններ, համալսարանի ընթացիկ քննություններ, ավարտական քննություններ և հետբուհական ծրագրերի ընդունելություն»:

Համալսարանի ցանկում ներառված են Կառավարության ցանկից ընդունելության ասպեկտները, սակայն ոչ «քննություն» ասպեկտները, այլ նրա «զբաղվածության և տնտեսական գործունեության» ասպեկտները (Վերոնշյալ Խումբ II) Կառավարության ցուցակից դուրս (էջ 2):

Նաև հետաքրքիր է նշել, որ համալսարանը կարևորում է «առողջ բարոյական և հոգեբանական միջավայրի ապահովումը համալսարանում» (էջ 2):

Փաստաթուղթը այսպիսով մանրամասնում է իր գործողության ծրագրի 13 ասպեկտները՝ տալով «Նպատակ», «Գործունեություն», Ակնկալվող արդյունքներ», ինչպես նաև մասնավորապես «Պատասխանատու Գերատեսչություններ» և «Իրականացման Ժամանակացույց»(էջեր 3-6): Այս վերջին երկու վերնագրերը բավականին մանրամասն են ներկայացված ԵՊՀ փաստաթղթում, թեև բոլոր գրառումները «Իրականացման Ժամանակացույցի» վերաբերյալ պարզապես նշված են ‘2011-2012’:

Հետաքրքիր է նաև նշել, որ առկա է կրկնվող հղում «SEAU արհմիությանը» «Պատասխանատու Գերատեսչությունների» միջև:

Երևանի Վ. Բոյուսովի անվան լեզուների և հասարակական գիտությունների պետական համալսարան (ԵՊՀ)

12.2.6 ԵՊՀ փաստաթուղթը վերաբերում է հակակոռուպցիոն «խորհրդի» և «հանձնաժողովի» ստեղծմանը: Հանձնաժողովի ‘Գլխավոր գործառույթը» ներկայացված է, սակայն «խորհրդի» և «հանձնաժողովի» միջև տարբերակումը չի բացատրվում, և իրենց համապատասխան տարրերը չեն մանրամասնվում:

2015թ. միջոցառումների համապարփակ ծրագիրը» տալիս է «Թիրախներ», «միջոցառումներ», «Պատասխանատու մարդկանց» և «Ակնկալվող արդյունքներ» մինչև 10 գլխավոր ոլորտներում: Այդ ոլորտներից մի քանիսը շատ հատուկ են, օրինակ ինչ վերաբերում է լիարժեք ուսման վարձի փոխհատուցմանը (ռոտացիա), մինչդեռ մյուսներն ավելի ընդհանուր են, օրինակ կապված կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ ուսանողի և անձնակզմի ընդհանուր վերաբերմունքի հետ:

Նաև հետաքրքիր է նշել, որ հատուկ ընդգծվում է միջազգային կազմակերպությունների աջակցությունը և «համագործընկեր» կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Մյուս կողմից, ոչ մի «ակնկալվող արդյունքներ» չկան ընդգրկված 10 -ից 2 ոլորտներում:

12.2.7 Ամփոփելով համալսարաններում հակակոռուպցիոն ծրագրերը, փորձագետները ցանկանում են նշել, որ տրամադրված օրինակները հետաքրքիր մոտեցումների վերաբերյալ փաստեր են, որոնք ընդգրկում են բազմաթիվ կարևոր ոլորտներ: Սակայն միայն սահմանափակ թվով ծրագրերից է հնարավոր եղել օգտվել, և ոչ բոլորն են եղել ընթացիկ: Բացի այդ, ծրագրերի օրինակները ցույց են տալիս մոտեցման տարբերությունները, օրինակ հայտնաբերելու վերաբերյալ, թե ով է պատասխանատու իրականացման գործողությունների համար: Այս ամենը հուշում է, որ ԲԿ ոլորտը օգտվում է հակակոռուպցիոն ծրագրավորման հետևողական և համապարփակ մոտեցումների զարգացման վերաբերյալ այլ ազգային քննարկումներից:

Հայաստանի կառավարության փաստաթղթեր

Կառավարության նոր ընդհանուր «Հակակոռուպցիոն Ռազմավարության» Բաժին

3.1 Գլուխ 3-ից

12.2.8 Փորձագետները ստացել են Բաժին 3.1՝ «Կրթության ոլորտում հակակոռուպցիոն ռազմավարությունը», Գլուխ 3-ից՝ «Հակակոռուպցիոն ծրագրերի Առաջնային սեկտորները», Հայաստանի Կառավարության նոր ընդհանուր «Հակակոռուպցիոն ռազմավարությունից», 2015-2018:

Բաժին 3.1 սկսվում է «Իրավիճակի վերլուծությամբ», որն ընդունում է դրական երանգ:

Այդ վերլուծությունը ընդգծում է, որ կարևոր է նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը կրթության ոլորտում որպես հիմնական նախապայման՝ հասնելու կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը, նրանց համապատասխանությանը միջազգային չափորոշիչներին և կրթության հասանելիությանը հասարակության բոլոր շերտերի կողմից» (պարբ. 57-58):

Նկարագրելով, թե ինչ է ձեռք բերվել որպես 2009-2012թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության արդյունք, ոլորտներն ընդգծում են ուսուցչի կրթության ներառումը, դպրոցական ավարտական/բուհերի ընդունելության քննությունները և հանրային դպրոցների կառավարումը (պարբ. 59):

Մասնավորապես Հակակոռուպցիայի և ԲԿ վերաբերյալ ընդգծվում է, որ «հակակոռուպցիոն ռազմավարության տարեկան ծրագիրը մշակվել է Բարձրագույն Կրթության հաստատությունների կողմից», և որ «ավելի հստակ» բուհերի լիցենզավորման չափանիշները նվազեցրել են մասնավոր բուհերի քանակը՝ 90-ից 34 (նույն տեղում):

Կա մի դրական հղում, որ ԿԳՆ աշխատակիցները անցնում են «կոռուպցիայի դեմ պայքայի» թեմայով վերապատրաստում (նույն տեղում):

Ներքին «Որակի ապահովման Կենտրոններ» ունենալու անդրադարձը բոլոր բուհերի համար հստակ է և դրական: Մյուս կողմից, կան նաև այլ անհասկանալի անդրադարձներ նոր «Մասնագիտացված Կրթության վերահսկողության գերատեսչության» վերաբերյալ, որը գործում է Կրթության Պետական վերահսկողության ներսում, և շուտով բոլոր բուհերում պետք է գործի այդ նոր գերատեսչությունը՝ (նույն տեղում):

Փորձելիս լուսաբանել նման դիրքորոշումները՝ փորձագետների համար խնդիր է հանդիսանում այն, որ այդ հղումներն արված են ԿԳՆ պաշտոնական կայքում և հարակից «կրթական պորտալներում», սակայն նրանք չեն կարողանում իրենց համար հասանելի դարձնել այդ տեղեկատվությունն անգլերենով: Այդ կայքերում հրապարակված են հանրային կրթության հաստատությունների ստուգման, հետազոտության և աուդիտի 2011թ. հաշվետվությունների հղումները, սակայն պարզ չէ, թե դրանցից որ մեկն է վերաբերում բարձրագույն կրթությանը և որը՝ միջնակարգին (նույն տեղում):

«Խնդիրներ Կրթական համակարգում» բաժնում (Բաժին 3.1.2) ասվում է ընթացիկ դիրքորոշման ասպեկտների բավականին առողջ, «արդյունավետ ինքնաքննադատությամբ» գնահատման մասին:

Սույն բաժնում ընդգծված մի շարք հատուկ ոլորտներ վերաբերում են ավելի շատ դպրոցական սեկտորին, քան ԲԿ-ին (դպրոցական կադրեր, դպրոցական դասագրքի մշակում և ձեռքբերում, դպրոցի ֆինանսավորում և դպրոցական ավարտական քննություններ), և առկա է ընդամենը երկու շատ կոնկրետ հղումներ ԲԿ-ի մասին:

Դրանցից մեկը շատ կարևոր դրույթ է այն մասին, որ «Ոչ լիարժեք և հակասական օրենսդրական կանոնակարգերը թույլ են տալիս գործադիրի միջամտությունը բուհի կառավարմանը, ինչը բերում է բուհի ինքնակարգավորման բացակայությանը» (պարբ. 61): Փորձագետներին հիմնավոր կերպով պարզ է այն

ենթադրությունը, որ «գործադիր մարմինը» վերաբերում է կենտրոնական Կառավարությանը:

Իսկ մյուսը հետևյալն է. «Բուհերում առկա է մասնագիտական կրթության որակի ապահովման առանց մասնակցության և ոչ թափանցիկ մեխանիզմների սահմանումն ու կիրառումը» (նույն տեղում): Վերջինիս իմաստը այնքան էլ պարզ չէ փորձագետներին:

Մյուս կողմից, մի շարք ավելի ընդհանուր կարևոր խնդիրներ նույնպես հստակորեն կապված են ԲԿ հետ՝ 'Թերի կանոնակարգեր [իրավական ակտեր]'; «Կրթության կառավարման համակարգի թափանցիկության ցածր մակարդակ էւ դրա հաշվետվողականությունը, ինչպես նաև նրա մասին հանրային իրազեկությունը»; «կառույցների նկատմամբ հասարակական վստահության մակարդակը, որը երաշխավորում է կրթության բավականին ցածր որակը»; «Անհրաժեշտ է ձեռավորել կրթության ոլորտում արդյունավետ կառավարման համակարգ» (նույն տեղում).

Բացի այդ, իհարկե, դպրոցական ավարտական քննությունների հետ կապված որոշ ընդգծված հարցեր նաև վերաբերում են համալսարան ընդունելության խնդրին:

Փաստաթուղթը, այնուհետև, շարունակվում է Բաժին 3.1.3-ով «Կանխարգելիչ հակակոռուպցիոն միջոցառումների» վերաբերյալ: Այս բաժինն ընդգծում է «իրավական դաշտի բարելավումը», ինչպես նաև «ուսանողների համար հակակոռուպցիոն դասընթացների և միջոցառումների կազմակերպման կարևորությունը, ինչը կնպաստի ուսանողների իրազեկության և սեփական իրավունքները պաշտպանելու հատկությունների զարգացման բարձրացմանը» (պարբ. 62): (Փորձագետների համար այս վերջին նախադասությունը հատկապես հետաքրքիր թվաց):

Ընդգծվեցին կադրային խնդիրների վերաբերյալ մի շարք դրույթներ, որոնք հավանաբար կիրառվում են և դպրոցի, և ԲԿ ոլորտի աշխատակազմի համար: Մասնավորապես՝

«կրթական անձնակազմի ընտրության մրցույթի գործընթացը պետք է կանոնակարգվի, պետք է դրվեն հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր աշխատակիցների ընտրության, նշանակման, կարիերայի զարգացման համար, պետք է հաստատվի աշխատանքի նկարագիրը և միասնական վարքի կանոնադրությունը նրանց համար, ովքեր աշխատում են կրթական հաստատություններում, ուսուցչի և դասախոսի անձնական գործը պետք է բնորոշվի որպես հրապարակային փաստաթուղթ և, ըստ այդմ, կատարվի որոշակի գործընթաց դրա հրապարակման համար»:

Կրթական հաստատությունների աշխատակիցների համար նախատեսված աշխատանքային նկարագրերի վերանայումը գործող կանոնադրությամբ

սահմանում է նրանց համար էթիկական սկզբունքները և վարքի միասնական կանոնները...հիմնել էթիկայի հանձնաժողովներ կամ ներգրավել էթիկայի հարցերով պատասխանատու անձանց ստուգելու և վերահսկելու համար վարքի միասնական կանոններով հաստատված պահանջների կատարումը:

Ամփոփելով Բաժին 3.1 Գլուխ 3, Կառավարության ընդհանուր հակակոռուպցիոն նոր ռազմավարությունը տալիս է շատ պատշաճ և լավ պատկերացում կրթության բնագավառում լուծման ենթակա ոլորտների մասին: Այնուամենայնիվ, կան ԲԿ-ի հետ կապված ոլորտներ, որոնք կարող են հստակեցվել և մշակվել հետագայում: Բացի այդ, այս բաժինը չի անդրադառնում, թե ինչպես կրթության ոլորտում հակակոռուպցիայի առաջընթացը կենթարկվի մոնիտորինգի և կգնահատվի:

Գլուխ 4, «Մոնիտորինգի և գնահատման համակարգը 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի իրականացման համար» վերցված Կառավարության ընդհանուր «Հակակոռուպցիոն նոր Ռազմավարությունից»:

12.2.9 Փորձագետները, ի պատասխան մոնիտորինգի և գնահատման նյութերի ձեռքբերման խնդրանքին, ավելի ուշ ստացան Գլուխ 4, «Մոնիտորինգը և գնահատման համակարգը 2015-2018 թթ. Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն Ռազմավարության միջոցառումների ծրագրի իրականացման համար»:

Իհարկե, այս փաստաթուղթը ցույց է տալիս մոնիտորինգի եւ գնահատման կարևոր ընդհանուր հանձնառությունը, թե որքանով են 2015-2018 թթ. Կառավարության ընդհանուր հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի նպատակները իրականացվում, ինչպես նաև ներգրավելով քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերին այս գործընթացում (պարբ. 118- 122): Նշվում է, որ շահագրգիռ կողմերը կներգրավվեն Հակակոռուպցիայի ռազմավարության հանձնաժողովի աշխատանքի մեջ , ինչը կվերահսկի ռազմավարությունը (պարբ. 121):

Փաստաթուղթը նաև անդրադառնում է կիսամյակային և տարեկան մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունների և փորձագետների կողմից արված առաջարկությունների հրապարակմանը (պարբ. 125, 133 և 135):

Շեշտ է դրվում նաև Կոռուպցիայի Ընկալման Ինդեքսի և Կոռուպցիայի Ինդեքսի Վերահսկման ցուցանիշների կիրառման վրա, ինչպես նաև կան այլ հղումներ «լավ կառավարման ամփոփ ցուցանիշների», «կոնկրետ ցուցանիշների» եւ «քանակապես չափելի» ցուցանիշների վերաբերյալ (պարբ. 126, 128, 131): Ուշադրություն է դարձվում նաև վիճակագրական տվյալների հավաքագրմանը, տվյալների բազայի ստեղծմանը, «թեմատիկ եւ նպատակային ուսումնասիրություններին եւ

հարցումներին», ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից հաշվետվողականության գնահատմանը (պարբ. 129):

Մյուս կողմից, հարկավոր կլինի ավելի մանրամասնել նախատեսված մոտեցումների նկարագրությունը:

Հակակոռուպցիոն Ռազմավարության Հանձնաժողովի ամբողջական կազմը և ճշգրիտ դերը դեռ պետք է հստակեցվեն, հատկապես ինչ վերաբերում է «ոչ պետականի» ներգրավմանը:

Կա որոշակի պատկերացում, թե ինչ է նախատեսված «լավ կառավարման ամփոփ ցուցանիշներով» (« կարգավորման որակը, կառավարման արդյունավետությունը, իրավական կողմը, ձայնը և հաշվետվողականությունը, քաղաքական կայունությունը և քաղաքացիական ազատությունները», (տե՛ս պարբ. 126): Այնուամենայնիվ, ավելի շատ մանրամասնություններ են անհրաժեշտ ցուցանիշների մի տեսակի համար, որը կկիրառվի մոնիտորինգի և գնահատման նպատակով, հատկապես այն ցուցանիշները, որոնք կարելի է «քանակապես հաշվել»: Իսկապես, կարող է լինել հետագա քննարկում քանակական և որակական մոնիտորինգի և գնահատման մեջ համապատասխան հավասարակշռության մասին:

Վերջապես, այս փաստաթղթում չի հստակեցվում, թե ինչպես մոնիտորինգի և գնահատման ընդհանուր մոտեցումները կապ կունենան մասնավորապես կրթության ոլորտում «Հակակոռուպցիոն Ռազմավարությունների» մոնիտորինգի և գնահատման հետ:

Առաջարկություններ բաժին 12-ից

Հետևյալ հատուկ Առաջարկությունները բխում են սույն բաժնի բովանդակության և վերլուծության հիմնական հայեցակետերից.

Առաջարկություն 12(ա).

ՀՀ կառավարությունը մասնավորապես պետք է հստակեցնի կառավարության ընդհանուր հակակոռուպցիոն ռազմավարության և կրթության ոլորտում հակակոռուպցիոն ռազմավարության փոխհարաբերությունները: Մասնավորապես, կառավարությունը պետք է հստակեցնի, թե կառավարական հակակոռուպցիոն ռազմավարության մեջ առանձին բաժին կա՞ զուտ կրթության ոլորտի համար, որին ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ) պետք է հետևի, կամ արդյոք ԿԳՆ-ից ակնկալվում է մշակել իր սեփական հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ ընդլայնվելով կառավարական ընդհանուր փաստաթղթի համապատասխան բաժինը:

ՀՀ կառավարությունը պետք է ապահովի, որ բոլոր հակակոռուպցիոն ռազմավարությունները՝ անկախ այն բանից, թե դրանք իրականացվում են ընդհանուր կառավարության, թե նախարարության մակարդակով, լինեն շարունակական ժամանակի ընթացքում, այսինքն, նոր ռազմավարությունը սկսվի անմիջապես հնի ավարտից հետո՝ առանց ժամանակային ընդմիջումների և, հետևաբար, առանց այդ ռազմավարությունների իրականացման առաջընթացի մոնիտորինգի ընդմիջումների:

Այս համատեքստում, կառավարությունը պետք է նաև ապահովի մոնիտորինգի զեկույցների հրապարակումների համապատասխան թիրախների կատարում, ինչպես նաև պետք է ապահովի, որ այդ զեկույցները հրապարակվեն թափանցիկ, այդ թվում՝ առցանց եղանակով:

Կառավարության 2015-2018թթ նոր հակակոռուպցիոն ռազմավարության / գործողությունների ծրագրի Կրթության բաժինը (Բաժին 3.1) ներառում է մանրամասն վերլուծություն և սահմանում է շատ կարևոր հարցեր, որոնք պետք է լուծվեն: ՀՀ կառավարությունը պետք է պատշաճ ուշադրության ապահովի այդ հարցերի շուրջ: Բայց, մյուս կողմից, կառավարությունը պետք է վերանայի այս բաժնի որոշ հայեցակետեր՝ հետագա պարզության նպատակով, օրինակ, «Մասնագիտական կրթության» քննարկում թեմայով:

Կառավարության 2015-2018թթ հակակոռուպցիոն նոր ռազմավարության/գործողությունների ծրագրի 4-րդ գլուխը ներառում է մոնիտորինգի առնչությամբ կարևոր նյութական մոտեցումներ և գնահատում է, թե որքանով են նպատակները հասանելի: Սակայն, կառավարությունը պետք է ապահովի լրացուցիչ մանրամասներ դրա առնչությամբ այնպիսի հայեցակետերի մասին, ինչպիսիք են՝ հակակոռուպցիոն ռազմավարության հանձնաժողովը, մոնիտորինգի և գնահատման համար օգտագործվող ցուցանիշները և մոնիտորինգի և գնահատման փոխհարաբերությունները ընդհանուր ռազմավարության համատեքստում, ինչպես նաև հատուկ ոլորտներում, ինչպիսիս են կրթությունը:

Առաջարկություն 12(բ).

ՀՀ կառավարությունը և ԲԿ հանրությունը պետք է համաձայնություն ձևեք բերեն քննարկման միջոցով, թե որքանով պետական բուհերի հակակոռուպցիոն պլանները պետք է հետևեն ստանդարտացված ազգային ձևանմուշների, կամ առնվազն ընդհանուր ուղենիշների՝ միևնույն ժամանակ հարգելով բուհերի ինքնավարությունը:

Մասնավորապես, այս քննարկումները պետք է կենտրոնան այն հարցի ապահովման վրա, որ բուհերի պլանները պահպանեն գործողությունների հստակ ժամկետներ, և հստակ սահմանեն այն անձանց, ովքեր հաստատություններում պատասխանատու են որոշակի գործողությունների ընթացքի համար: Պլաններում

պետք է նաև հստակ սահմանված լինեն մեխանիզմներ՝ նպատակների ձեռքբերման առաջընթացը դիտանցելու համար, ինչպես նաև պետք է սահմանված լինեն արդյունավետ պատժամիջոցներ, որոնք կիրառելի են նպատակին չհասնելու դեպքում:

Առաջարկություն 12(գ).

ՀՀ կառավարությունը և բուհական համայնքը պետք է ճանաչեն, որ թեև 12 (ա)-ի և (բ) առաջարկություններում սահմանված գործողությունները իրենցից ներկայացնում են կարևոր կարճաժամկետ և միջնաժամկետ միջոցներ բուհական համակարգում հակակոռուպցիոն գործունեությունը խթանելու համար, այնուամենայնիվ ԲԿ բարեվարքության երկարաժամկետ ամրապնդումը պայմանավորված կլինի բոլոր դերակատարների՝ էթիկայի սկզբունքների և վարքագծի հիմնարար պարտավորվածությամբ (տե՛ս 13 (բ) առաջարկություն՝ ստորև):

13 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ՀԱԶՈՐԴ ՔԱՅԼԵՐԸ

Ինչպես քննարկվել է վերոնշյալ Բաժին 1-ում, սույն փաստաթուղթը ներկայացնում է փորձագետների կողմից արված՝ Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում ամբողջականության վրա ազդող գործոնների հիմնական ռիսկի վերլուծությունը:

Հետևելով Եվրոպայի Խորհրդի ստանդարտ պրակտիկային՝ փորձագետներն անհամբեր սպասում են վաղ հնարավորությանը քննարկելու այս վերլուծության Առաջարկությունները ՀՀ կառավարության ներկայացուցիչների և այլ բարձրաստիճան շահագրգիռ անձանց հետ: Բացի դա, փաստաթղթով նաև փորձ է արվում ակնկալել հետագա միջոցառումներ ծրագրի շրջանակում, որոնք ամենայն հավանականությամբ, պետք է ներառեն շահառուների իրազեկման միջոցառումներ և աշխատակազմի զարգացման դասընթացներ հիմնական բուհերի աշխատակիցների համար:

Ստորև նշված Առաջարկությունները բխում են սույն փաստաթղթի երկու նպատակներից՝

Առաջարկություններ բաժին 13-ից

Առաջարկություններ 13(ա).

Նախապես Եվրոպայի Խորհրդի ընթացիկ ծրագրի շրջանակում քննարկումը պետք է իրականացվեր Եվրոպայի Խորհրդի փորձագետների և Հայաստանի կառավարության և այլ բարձրաստիճան շահագրգիռ կողմերի միջև ավելի

մեխանիկական և կարգավորող բնույթ ունեցող միջոցառումների շուրջ, որոնք առաջարկվում են ընդհանուր ԲԿ համակարգը բարելավելու և տվյալ ծրագրի շրջանակում ԲԿ բարեվարքության երկարաժամկետ ձեռքբերումների համար՝ հիմնված էթիկայի սկզբունքների և վարքագծի վրա: Հիմնականում դա վերաբերվում է վերոնշյալ 1-ից 12 առաջարկությունների ասպեկտներին:

Առաջարկություն 13(բ).

Այնուհետև, Եվրոպայի խորհրդի ընթացիկ ծրագրով պետք է, մասնավորապես, մշակվի բուհերին ուղղված նոր լրացուցիչ աջակցություն՝ նախատեսված բարեվարքությունը ամրապնդելու գործողությունների և մոտեցումների վրա: ՀՀ կառավարության և ԲԿ հանրության միջև քննարկումները պետք է կենտրոնանան աշխատակազմի և ուսանողների՝ էթիկայի նորմերի միջոցով էթիկայի սկզբունքների և էթիկական վարքագծի դրական պարտավորվածությունը խթանելու հարցերի շուրջ: Սա վերաբերվում է վերոնշյալ 7(զ), 8(ա) և 11 առաջարկություններին:

ՀՂՈՒՄՆԵՐ

ԱՆՔԱ կայք 2015 - www.anqa.am/en/

Ներառում է՝

ՈԱԱԿ-ի գործողությունների պլանը և ՈԱԱԿ-ի 2010-2015 թվականների ռազմավարական պլանը:

Արտաքին որակի ապահովում, Քաղաքականություն և ընթացակարգեր՝ Ծրագիր 1, Ինստիտուցիոնալ աուդիտ և ծրագրի հատարմագրում՝ Ծրագիր 2, Միջազգային հարաբերություններ՝ Ծրագիր 3, ՈԱԱԿ-ի ներքին որակի ապահովման ծրագիր՝ Ծրագիր 4, TLIs-ի ներքին որակի ապահովում և շահառուների հարաբերություններ՝ Ծրագիր 5:

Բուհական մակարդակում ուսումնական հաստատությունների արտաքին որակի գնահատման հիմնական ուղեցույցներ

Որակի ապահովման ուղեցույցներ, չափանիշներ և չափորոշիչներ Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում:

Որակի ապահովման բառացանկ:

Ինքնագնահատման ձեռնարկ:

ՈԱԱԿ Հավատարմագրման ձեռնարկ. Ներքին որակի ապահովում. Խնդիրներ և հեռանկարներ:

Athena Նախագծի էլ. կայքը 2015 - www.athena-tempus.eu/

Աթենա ծրագիրը «Կայուն և ինքնավար բարձրագույն կրթական համակարգերի խթանումը Արևելքում», որին մասնակցում են Հայաստանը, Մոլդովան և Ուկրաինան: (Տեմպուս IV Ծրագիր, որը մասնավորապես ներառում է հետևյալ նյութերը՝

Ի՞նչ է Աթենան:

Աթենա ծրագրի Հայաստանյան աշխատաժողով, Մարտ 2014 թ., Երևան (տե՛ս Թոմաս Էսթերման, Եվրոպական Համալսարանի Ասոցիացիա, «Համալսարանի ինքնավարության վիճակը Հայաստանում՝ արտաքին վերլուծություն», Աթենայի կայքը):

2014թ. ապրիլին Հելսինկիի Համալսարանում կայացած առաջին ծրագիրը՝ Աթենայի վերապատրաստման սեմինարի շրջանակներում:

2014թ. նոյեմբերին Կուսմբրայում, Պորտուգալիա, կայացած Athena երկրորդ Նախագծի վերաբերյալ Ուսուցողական Սեմինար, հատուկ ուշադրության բնեռում «Ինքնավարության և Կառավարման» վրա, ներառյալ՝ Թոմաս

Էսթերման, Եվրոպական Համալսարանների Ասոցիացիա, «Համալսարանի ինքնավարություն և ինստիտուցիոնալ կառավարում»:

2015թ. փետվարին Ամստերդամի Համալսարանում կայացած Աթենայի վերջնական վերապատրաստման սեմինարի շրջանակներում, որի ժամանակ հատուկ ուշադրության է դարձվել համալսարաններում մարդկային ռեսուրսների կառավարման և աշխատակիցների զարգացման վրա՝ ներառյալ Թոմաս Էսթերմանի 'Ժամանակակից մարդկային ռեսուրսների կառավարումը համալսարաններում':

Եվրոպայի խորհրդ (2015ա,բ) - Յան Սմիթ և Թոմ Համիլտոն՝ «Էթիկական սկզբունքներ կրթության ոլորտում» և «Էթիկայի սկզբունքները կրթական ոլորտի բոլոր գործիչների համար»՝ ներկայացված խորհրդի կրթական քաղաքականության և պրակտիկայի կոմիտեին (ԿՔՊԿ), Մարտին 2015թ., որպես էթիկայի համաեվրոպական պլատֆորմի զարգացման մաս, թափանցիկություն և ամբողջականություն Կրթության ոլորտում:

ԵՄ (2013) «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության մասնագիտական մակարդակի բարձրացում՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի համար (ԵԲԿՏ)» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագիր :

ՀՀ կառավարություն (1999թ.) Կրթության մասին օրենք, 1999 թ., ընդունված 1999թվականի ապրիլի 14-ին

ՀՀ Կառավարություն (2004) «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Օրենք, 2004, ընդունվել է 14 դեկտեմբերի 2004թ.

ՀՀ կառավարություն (2006թ.) Կառավարության որոշում թիվ 1183, հուլիսի 27-ը, 2006թ. (Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստներ և պետական կրթաթոշակներ տրամադրելու վերաբերյալ կանոնակարգ ընդունելու և Հայաստանի Հանրապետության 2005թ. սեպտեմբերի 8-ի թիվ 1986 որոշումը և 2005 թ. սեպտեմբերի 15-ի թիվ 2114 որոշումը չեղյալ ճանաչելու մասին):

ՀՀ Կառավարություն (2007թ.) Հրաման N1193-Ն, 6 դեկտեմբերի 2007 թ. (Հայաստանի Հանրապետության Բարձրագույն հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը հաստատելու մասին)

ՀՀ Կառավարություն (2007թ.) Հրաման N1194-Ն 6 դեկտեմբերի 2007 թ. (Հայաստանի Հանրապետության Բարձրագույն ուսումնական հաստատություններում հեռակա ուսուցման կարգը հաստատելու մասին)

ՀՀ Կառավարություն (2009թ.) 2009 '2nd. Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն Ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիր 2009-2012 թթ.

- ՀՀ Կառավարություն (2011թ.) Հրաման N 1240-Ն 25 օգոստոսի 2011թ. (Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009թ. հուլիսի 16-ի N 938-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին)
- ՀՀ Կառավարություն (2011թ.) Հրաման N 1197-Ն 31 հոկտեմբերի 2011թ. (Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը հաստատելու և ՀՀ Կրթության և Գիտության նախարարի 1997 թ. մարտի 3-ի N 13-ՔՆ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին)
- ՀՀ Կառավարություն (2011թ.) 2011 թ. նոյեմբերի 17-ի թիվ 1242-Ն հրաման (Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը հաստատելու մասին)
- ՀՀ Կառավարություն (2012թ.) Որոշում N 597-Ն 26 ապրիլի 2012 թ. (Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N 686-Ն Որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին)
- ՀՀ Կառավարություն (2013թ.) ԿԳՆ «2013-2014թթ. հակակոռուպցիոն միջոցառումների համալիր ծրագիր»
- ՀՀ Կառավարություն (2015թ.) Բաժին 3.1՝ «Կրթության ոլորտում հակակոռուպցիոն ռազմավարությունը», Գլուխ 3-ից՝ «Հակակոռուպցիոն ծրագրերի Առաջնային սեկտորները», Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարություն, 2015-2018:
- ՀՀ Կառավարություն (2015թ) Գլուխ 4, «Մոնիտորինգի և Գնահատման համակարգը Հայաստանի Հանրապետության 2015-2018 թթ. նոր հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի իրականացման համար, 2015-2018 թթ.:

Լա-Մանշ Ծրագիր, էլ. կայք 2015 - www.lamanche-tempus.eu/

Լա ՄԱՆՇ ծրագիր «Փոփոխության նախաձեռնում և կառավարում Բարձրագույն կրթության ոլորտում», որը ներառում է Հայաստանը, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան, (Տեմպուս IV Ծրագիր), որը մասնավորապես ներառում է նյութեր՝

Լա ՄԱՆՇ ծրագրի աշխատանքային փաթեթներ (ԱՓ), այդ թվում՝ «Առաջնորդություն և կառավարման հմտություններ և մոդելներ»,

«Բարձրագույն կրթության ոլորտում նորարար կառավարման փորձեր»,
«Ուսուցում ղեկավարության և կառավարման փոփոխության վերաբերյալ»,
«Բարձրագույն կրթության ոլորտում կառավարության ձևի փոփոխման
ռազմավարության զարգացում», ինչպես նաև Լա ՄԱՆՇ-ի վիրտուալ
վերլուծական տարածքի» մշակում:

Լա ՄԱՆՇ ծրագրի «Գործունեությունը և արդյունքները»:

Լա ՄԱՆՇ վիրտուալ վերլուծական տարածքի մեկնարկած Լա ՄԱՆՇ գործընկերոջ
4-րդ հանդիպման ժամանակ՝ Երևանում 2014թ հունիսին . (տես
Տեղեկատվական տեղեկագիր, թիվ 3, հունիս 2014թ., և Տեղեկատվական
տեղեկագիր, թիվ 4, Դեկտեմբեր 2014թ.):

Լա-Մանշ ծրագրի «Կապի և հետծրագրային տարածման ռազմավարություն»

Լա-Մանշ Ծրագրի Արտաքին Գնահատման Հաշվետվություն « Առաջնորդության և
Կառավարման հմտություններ և մոդելները Հայաստանի, Բելարուսիայի,
Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի Բարձրագույն Կրթության
Հաստատություններում»

Լա ՄԱՆՇ Ծրագրի «Փոփոխվող բարձրագույն կրթության հաստատությունները
անցումային հասարակության մեջ՝ Խորացված ուսումնասիրությամբ զեկույց»
(2014):

Լա ՄԱՆՇ ծրագրի «Բարձրագույն կրթության ոլորտում եվրոպական կառավարման
պրակտիկայի ձեռնարկ» (2014 թ.):

«Առաջնորդություն և փոփոխության կառավարում» հարցի մասին Լա ՄԱՆՇ-ի
դասավանդման և ուսումնառության ռեսուրսներում (տե՛ս Լա ՄԱՆՇ-ի կայքը)

Լա ՄԱՆՇ-ի Գործի Պետական համալսարանում «Ուսանողների ներգրավման
զարգացումը» Բարձրագույն կրթության հաստատություններում
գիտելիքների ընդլայնման կառավարման մեջ» կոչվող նոր մոդուլի մեկնարկը
(տե՛ս 'Տեղեկատվական ամփոփագիր 2, Դեկտեմբեր 2013թ.,):

Լա-Մանշի երկրորդ գործընկերային հանդիպումը Բիրմինգհամում՝ Համալսարանի
Քոլեջում 2013թ. ապրիլին, որն ընդգրկում է քննարկումներ «Ուսանողների
համար՝ որպես համահիմնադիրներ, Տարածքների Բացումը» թեմայով:

Հայաստանյան բաց հասարակության հիմնադրամի 2013թ. զեկույցը «Բարձրագույն
կրթությունը Հայաստանում այսօր. Կենտրոնացված տեսություն», հուլիս 2013:

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ) (2011-2012)
«Հակակոռուպցիոն քաղաքականության միջոցները՝ երկարատև գործողությունների
ծրագիր», Պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ), նշված
որպես 2011-2012 թթ. փաստաթուղթ:

Տեմպուս (2012), Տեմպուսի զեկույցը «Բարձրագույն կրթությունը Հայաստանում», հուլիս 2012 :

Համաշխարհային բանկ (2013) Համաշխարհային բանկի զեկույցի՝ «Կառավարության ուշադրության կենտրոնացումը բարձրագույն կրթության բարեփոխումները Հայաստանում», հունվար 2013:

Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)(2013), «Կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների համալիր ծրագիր», Երևանի պետական համալսարան (ԵՊՀ), նշված որպես '2011-2012թթ.' Ծրագիր և թվագրված՝ «Հաստատված է Գիտխորհրդի նիստին, 30 մայիս, 2013թ.»:

Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզուների և հասարակական գիտությունների պետական համալսարան (ԵՊՀ)(2015), «2015թ. ԵՊՀ Կոռուպցիայի դեմ միջոցառումների համալիր ծրագիր, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզուների և հասարակական գիտությունների պետական համալսարան (ԵՊՀ):»:

Այս զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի ֆինանսական աջակցությամբ: Զեկույցում ներկայացված կարծիքները որևէ ձևով չեն արտահայտում Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի տեսակետները: